

«ՀԵԹՈՒՄԻ ՃԱՇՈՑԻ» ՄԱՍԻՆ ԱՐՏԱՇԵՍ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

Պատմաբան, ձեռագրագետ Արտաշես Մաթևոսյանի (1922-2004)՝ հայերեն ամենանշանավոր ձեռագրերից մեկին՝ շքեղ նկարազարդմամբ «Հեթումի Ճաշոցին» նվիրված ուսումնասիրությունը միակն է, որը լույս չի տեսել հեղինակի կենդանության օրոք:

Աշխատությունը գրելու շարժառիթի մասին Ա. Մաթևոսյանը հետևյալ տեղեկությունն է թողել. «1970-ական թվականներին Մաշտոցի անվան Մատենադարանի տնօրինությունը պայմանավորվել էր Սյունիսենի հրատարակություններից մեկի հետ հրատարակելու Հեթումի Ճաշոցից մանրանկարված 50 թերթ: Ընտրվեցին համապատասխան նկարներ: Հուշարձանի ձեռագրական նկարազրությունը հանձնարարվեց Մատենադարանի գլխավոր ավանդապահ ձեռագրագետին՝ Ա. Մաթևոսյանին, իսկ մանրանկարների քննությունը, արվեստագիտության թեկնածու Ի. Դրամբյանին: Բանակցությունները ձգձգվեցին, գործը գլուխ չեկավ»:

Նշենք, որ Իրինա Դրամբյանն իր ուսումնասիրությունը հրատարակել է 2011 թ.¹:

Ա. Մաթևոսյանն իր ուսումնասիրությունը սկզբնապես վերնագրել էր «Հեթումի Ճաշոցը», սակայն երբ վերը նշված ծրագիրը չի իրականացել, մեքենագիր երկրորդ օրինակի վրա, բուն գործը վերակառուցել է (համապատասխան կրճատումներով և լրացումներով), թերևս որպես հոդված հրատարակելու նպատակով, և ուսումնասիրության ամենակարևոր նորությունը նկատի ունենալով վերնագրել «Գևորգ Սկևռացին Հեթում Բ թագավորի «Ճաշոցի» հորինիչ և պճնազարդող»: Այս տարբերակը՝ որոշ կրճատումներով, հրատարակության է պատրաստել և «Էջմիածին» ամսագրում տպագրել Արփենիկ Ղազարոսյանը՝ 2007 թ.²:

Ներկա հրատարակությունը պատրաստելիս մենք ուսումնասիրել ենք Ա. Մաթևոսյանի արխիվում պահվող՝ «Ճաշոց» մակագրությամբ թղթապանակի պարունակությունը, որտեղ առկա են աշխատության երկու տարբերակն էլ: Նկատի ունենալով, որ առաջին տարբերակում առկա են կարևոր հատվածներ հատկապես

¹ Ի. Դրամբյան, Հեթում Բ արքայի Ճաշոցը, «Նաիրի», Երևան, 2011, հայերեն, ռուսերեն, անգլերեն:

² Գևորգ Սկևռացին Հեթում թագավորի «Ճաշոցի» հորինիչ և պճնազարդող, «Էջմիածին»: Բ-Գ, 2007, էջ 101-112, ԺԲ, էջ 51-72 (հրատարակության պատրաստեց Ա. Ղազարոսյանը):

ձեռագրի հիշատակարանի և պատկերագրողման որոշ առանձնահատկությունների վերաբերյալ, իսկ եզրակացությունների մասն առավել ամբողջական է, մենք կազմել ենք ուսումնասիրության երկու տարբերակը միավորող տեքստ: Պահպանել ենք նաև երկու վերնագրերը:

Երկրորդ տարբերակի սկզբում հեղինակի նշած «Նախագիր» ենթավերնագրից հետո այլ ենթավերնագրեր չկան, հավանաբար այդպիսիք պետք է ավելացներ հետագայում, ուստի մենք բովանդակությունից ելնելով, տեքստում ավելացրել ենք համապատասխան ենթավերնագրեր, որը դյուրացնում է նյութի ընկալումը: Միաժամանակ, Հեթումի դիմանկարների քննության հատվածում, որն աշխատության կարևոր նորույթ պարունակող մասերից է, տեղադրել ենք համապատասխան լուսանկարներ և դրանց մակագրությունները կազմել ըստ հեղինակային տեքստի, միաժամանակ, ներկայացված տեսակետի հիմնավորմանը նպաստող մի ծանոթագրություն ենք ավելացրել:

Այս ուսումնասիրությունն Արտաշես Մաթևոսյանի սկզբունքային գործերից է՝ ձեռագրագիտական համալիր հետազոտության կարևորության ընդգծման առումով: Բանն այն է, որ «Հեթումի Ճաշոցի» հիշատակարանում չեն նշված գրչության վայրը, գրչի և նկարչի (կամ նկարիչների) անունները, հայտնի են միայն ստացողը և թվականը (1286 թ.): Սակայն պակասող տվյալները, մեծ մասամբ, հնարավոր է լինում լրացնել պատմական և ձեռագրագիտական ուսումնասիրությամբ: Մասնավորապես, Արտաշես Մաթևոսյանը հիմնավորում է, որ գրչության վայրը Սկևռայի վանքն է, ճշտում է, թե հիշյալ ժամանակաշրջանում այդ վանքում աշխատող Ստեփանոս անունով չորս գրիչներից որ մեկն է եղել ձեռագրի գրիչը, և պարզում է Ճաշոցի խմբագրողին (նյութերի հերթականությունը որոշողին), հիշատակարանը հորինողին ու նկարագրողողների խմբի ղեկավարին, որը հեղինակի համոզմամբ Գևորգ Սկևռացի վարդապետն էր: Բանն այն է, որ այս նշանավոր վարդապետն իր նկարագրողած ձեռագրերում անունը նշելու սովորություն չի ունեցել և այդ մասին ակնարկվում է նաև նրա վարքում:

Ավելացնենք, որ այս հիմնական եզրահանգումներից բացի, ուսումնասիրության մեջ ներկայացված են Սկևռայի գրչության կենտրոնի և Գևորգ Սկևռացու գործունեության ուշագրավ մանրամասներ, կատարված են «Ճաշոցին» վերաբերող ձեռագրագիտական մի շարք ճշգրտումներ, որոնցից է, օրինակ, մեծադիր նկարների

և որոշ լուսանցապատկերների մոտ եղած բացատրական մակագրությունների հեղինակի պարզումը, որը Հակոբ Սսեցին էր, և գրառումներն արել է 1620-ական թվականներին (ձեռագրում 1626 թ. հիշատակարան ունի):

«Հեթումի Ճաշոցի» նկարագրությունը լույս է տեսել Մատենադարանի ձեռագրերի Մայր ցուցակի Գ հատորում (2007 թ.), որտեղ գրչության վայրը հարցականով նշված է «Սկևռա»³, գրչի և նկարչի մասին տվյալներ չկան³: Ավելի վաղ, ԺԳ դարի հիշատակարանների հատորը հրատարակելիս (1984 թ.), Ա. Մաթևոսյանը «Հեթումի Ճաշոցի» հիշատակարանի սկզբում նշել է հետևյալ տվյալները՝ «Հեղինակ՝ [Գեորգ Սկևռացի], Գրիչ՝ [Ստեփանոս Սկևռացի], Վայր՝ [Սկևռայի վանք]»⁴:

«Ճաշոցի» մասին իր ուսումնասիրության գլխավոր եզրահանգումներն Ա. Մաթևոսյանը ժամանակին տրամադրել է Սկևռայի գրչության կենտրոնի պատմությամբ զբաղվող Հասմիկ Բադալյանին, որն իր գրքում այդ մասին գրում է՝ «Գրչի անձի և գրչության վայրի մասին գլխավոր հիշատակարանը ոչինչ չի հայտնում: Հեթումի Ճաշոցի հիշատակարանի, գրչության արվեստի, Սկևռայի գրչության կենտրոնի պատմության, Հեթում Արքայորդու կյանքի և Գևորգ Սկևռացու կյանքի ու գործունեության քննությունը ձեռագրագետ Ա. Մաթևոսյանին թույլ է տվել ենթադրել, որ Ճաշոցը «գրվել և նկարագրվել է Սկևռայում, գրիչը Ստեփանոս Սկևռացին է, իսկ նկարիչները՝ մեկից ավելի, ի թիվս որոնց և Գևորգ Սկևռացին, որը նաև Ճաշոցի խմբագրողն է և գլխավոր հիշատակարանի հորինողը»: Տողատակում ծանոթագրված է՝ «Մաթևոսյան Ա., Հեթում Բ թագավորի Ճաշոցը (անտիպ աշխատանք)»⁵:

Ահավասիկ, այդ «անտիպ» աշխատանքն է, որ այժմ դրվում է ընթերցողի սեղանին:

Կարեն Մաթևոսյան

15.02.2022

³ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Գ, կազմեց՝ Օննիկ Եզանեան, Երևան, 2007, էջ 1559-1582: Ցավոք, այստեղ, և՛ սկզբում, և՛ հիշատակարանում գրչության թվականը նշված է վրիպակով՝ «ՉԼԷ - 1286» (անդ՝ էջ 1559, 1574), պետք է լինի «ՉԼԵ»:

⁴ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 582:

⁵ Հ. Բադալյան, Սկևռայի գրչության կենտրոնը, Երևան, 2013, էջ 33:

Արտաշես Մաթևոսյան

ՀԵԹՈՒՄԻ ՃԱՇՈՑԸ

**Գևորգ Սկևռացին Հեթում Բ թագավորի «Ճաշոցի»
հորինիչ և պճնագարդող**

Նախագիր

ձեռագիրը որոշակի ժամանակաշրջանի բարդ, բազմակողմանի ամբողջական հուշարձան է: Այն մարմնավորումն է գրչության արվեստի, որն իր մեջ միախառնում էր գիտության, արվեստի, արհեստի բազմաթիվ տարրեր, որոնք հասարակական կյանքի նյութական պայմանների զարգացման հետ փոփոխվում, կատարելագործվում և ստեղծում էին գրչության արվեստի որոշակի մակարդակ: Հայ գրչության արվեստն ստեղծվել է Մեսրոպ Մաշտոցի ջանքերով ստեղծված հայ գրերի հետ միասին, որպես նորաստեղծ գրերի գործադրման, կիրառման միջոց, և հետագայում, ժամանակի պահանջներին համապատասխան կտարելագործվել: Ուստի այդ բարդ արվեստի արդյունք ձեռագիրը պետք է ուսումնասիրել որպես ամբողջական, ավարտուն հուշարձան, եթե նույնիսկ այդ պահին մեզ հետաքրքրում է նրա այս կամ այն կողմը՝ բնագիրը, գիրը, նկարը, կազմը և այլն, քանի որ, վերջին հաշվով, նրանք բոլորը պայմանավորված են միմյանցով, կազմում են տվյալ ձեռագրի բաղադրիչները: Այս ճանապարհով առավել հանգամանորեն կարելի է բացահայտել ձեռագիր հուշարձանի ամբողջականությունը, նրա էությունն ու պատմությունը, գնահատել այն ըստ արժանվույն:

Բազմակողմանի քննության եղանակի անհրաժեշտությունն զգացվում է, մասնավորապես, այն ժամանակ, երբ բացակայում են տվյալ հուշարձանի ստեղծման հանգամանքների մասին որոշ տեղեկություններ: Այս կարգի հուշարձան է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի N 979 ձեռագիրը, որը գրվել է 1286 թվականին Կիլիկիայի Լևոն Գ թագավորի (1270-1289) անդրանիկ որդի Հեթում պարոնի

պատվերով: **Հեթումի Ճաշոցը**⁶ հայ ձեռագրական մշակույթի ամենանշանավոր հուշարձաններից է, գեղարվեստական ձևավորման հարստությամբ և կատարելությամբ, բնագրի բովանդակության և մանրանկարչական զարդարվածության համապատասխանության ու ներքին կապի ներդաշնակությամբ գրչության արվեստի կատարյալ օրինակ:

Հեթումի Ճաշոցը ստեղծելու ժամանակ Կիլիկիայում հայ գրչության և մանրանկարչության արվեստը հասել էր իր զարգացման գագաթնակետին: Գրչության տարբեր դպրոցներում ու կենտրոններում հանդես են գալիս այդ դժվարին արվեստին տիրապետող առանձին, գորեղ անհատներ, որոնք ուղղություն են տալիս նրան: Այդ ժամանակ հայ մանրանկարչությունն ու գրչությունը տվել էր արդեն իր հանճարեղ կրողին՝ գրիչ և մանրանկարիչ Թորոս Ռոսլինին: Այս էր պատճառը, որ Հեթումի Ճաշոցը վերագրվում էր նրան, որովհետև այն արժանի էր ռոսլինյան արվեստի գործ համարվելուն: Հետագայում պարզվեց, սակայն, որ այն Ռոսլինի գործը չէ: Նշանակում է Հեթումի Ճաշոցի հեղինակը նույնպիսի հզոր տաղանդի տեր անհատականություն է, որը տիրապետում է արվեստի բոլոր գաղտնիքներին:

Հեթումի Ճաշոցի ստեղծողը գրչության արվեստի բոլոր տարրերը կատարելության հասցնելով, ծառայեցրել է իր նպատակին, կերտել ավարտուն և ամբողջական ստեղծագործություն, որտեղ իրենց պատշաճ տեղն ունեն գրի և մանրանկարի բոլոր տեսակները՝ բոլորգիրը, աղյուսակգիրը, երկաթագիրը, զարդագիրը, զարդանկարը, մանրանկարը, մինևույն է թե նրանք զբաղեցնում են ամբողջական էջ թե լուսանցք, գրադաշտի թե լուսանցքի անկյուն:

Հեթումի Ճաշոցը արքայորդու պատվեր լինելուց առաջ, գրչության և մանրանկարչության արվեստի խոշոր ներկայացուցչի, զարգացած և ինքնատիպ անհատականության տեր մարդու գործ է, գրչության նշանավոր դպրոցի, շնորհալի արվեստավորների համաստեղության գործ, որոնց մասին, դժբախտաբար, որոշակի տեղեկություն չի պահպանվել, և դրանք առայժմ հայագիտությանը անհայտ են մնում:

⁶ Այսպես է կոչվում պատվիրողի անունով: Բանասիրության մեջ այն կոչվում է նաև «Հեթում արքայորդու» կամ «Հեթում Բ թագավորի Ճաշոց», որովհետև արքայորդին 1289-1307 թթ. թագավոր է դառնում «Հեթում Բ» անունով: Մենք գործածում ենք պարզապես «Հեթումի Ճաշոցը» համառոտ ձևը, մանավանդ որ այն ստեղծվել է, երբ արքայորդին դեռ թագավոր չէր:

Իր գոյության ավելի քան յոթ հարյուր տարիների ընթացքում Հերթումի ճաշոցը տեսել է արքայական մեծարանք և գերության դառնություն, թերթակորստի ցավ, փրկագնման բերկրանք, նորոգման հաճույք և գրչի, գրչակենտրոնի ծաղկողի ու հորինողի անհայտության մոլորոք:

Ձեռագրի անցած ուղին

Կիլիկիայի Սիս մայրաքաղաքում էր գտնվում ճաշոցը, երբ այնտեղ էր նստում Հերթում երկրորդը, բայց պահպանված հետագա հիշատակագրություններից երևում է, որ ճաշոցը երկար դարեր շարունակել է գտնվել Սիս քաղաքում, Սուրբ Լուսավորչի վանքում: Սույն տաճարի փակակալ Հակոբ Սսեցին, 1626 թվականին, Հերթումի ճաշոցի մի էջում թողնում է Ձապել թագուհու Սսում կառուցած հիվանդանոցի արձանագրության իր վերծանությունը⁷: Այդ նույն գրչությամբ ճաշոցի բոլոր նկարների և որոշ լուսանցագրերի տակ գրված է նրանց բացատրությունները: Նշանակում է այդ թվականին ճաշոցը Սիս քաղաքում էր, Ս. Լուսավորչի վանքում, և որ **նկարների և լուսանցագրերի մակագրությունների հեղինակը նույն ինքը փակակալ Հակոբ Սսեցին է:**

1686 թվականին ձեռագիրն արդեն Իտալիայում էր: Այն տարվել էր Վենետիկ տպագրության համար: 1688 թվականին ավարտվում է, Հերթումի ճաշոցի առաջին տպագրությունը⁸: Ձեռագիրն այդ ժամանակ ամբողջական էր և անխաթար⁹, ինչպես

⁷ «Ի հայրապետութեան տեառն մեր Մինաս կաթողիկոսին, թվականս Հայոց (Ռ)ՀԵ (1626) նւաստս յամենայնի Յակոբ (Ս)ըսեցի, որ յայժմ եմ փակակալ ի դուռն Սուրբ Լուսաօրչի ի Կըլիկեայ, այ(ժ)մ որ Իմարաստան ասի, որ ի Բ և Գ եղբօր հետ ելա գնացի, սանտըխտով թվական նորայ ի դռան վերայ կարդացի, որ էր օրինակն այս. **«կատարեցաւ յարմարումն շինուածոյ հիւանդանոցիս, հրամանաւ մեծաւ փառաւք քրիստոսասէր թագուհոյ Ձապելի ի թվ թվականութեանս Հայոց ի Ռ և Ղ (1241)»** (Մատենադարան, ձեռ. 979, էջ 474բ): Սույն արձանագրությունը, գրված մի քարի վրա, «կատարեցաւ» և «մեծաւ փառաւք» բառերի բացակայությամբ, 1833 թվականին գտնվել է Սսի կաթողիկոսարանի արևելյան պարսպի վրա այսպիսի տեսքով. **«Յարմարումն շինուածոյ հիւանդանոցիս քրիստոսասէր թագուհոյ Ձապելի, ի թվին Հայոց ՌՂ»** (Ղ. Ալիշան, Միսուան, Վենետիկ, 1885, էջ 223: Այսուհետև՝ Ղ. Ալիշան, Միսուան):

⁸ Ճաշոց գիրք, Վենետիկ, 1688:

⁹ «Եւ աջողութեամբ Տեառն առաքեցաւ մեզ աստ ճաշոց իմն վաղեմեան ամբողջ և անթերի, (ընդգծումը իմն է, Ա. Մ.) ի գանձուց հնոց թագաւորացն Հայոց, զոր և առընթեր եղեալ աստուածաշնչոցն մատենից, զտի զամենեսին համեմատ և համաձայն ընթերցուածովք, գլխաթուովք և համարագրովք, (Անդ, էջ 3-4):

վկայում է հրատարակիչ Թաթևու երեց Երևանցին: Ամենայն հավանականությամբ, Վենետիկից ետ վերադարձնելիս ձեռագիրը գերվել է, կազմահան է արվել և կորցրել որոշ թերթեր ու նկարներ: Հետագայում ջնջված մի հիշատակագրության ընթեռնելի բառերից երևում է, որ Ճաշոցը փրկագնվել է գերությունից և վերադարձվել Սուրբ Լուսավորչի վանք: «Աստուած ողորմի /// այս գիրքս խոստացայ /// ետուր ՌԾ (1050) դուռուշ, և ազատեց, և եղ (յ)իշատակ ի դուռն Սուրբ Լուսավորչին»¹⁰: Թվականը հայտնի չէ: Բնականաբար այս դեպքերը տեղի են ունեցել 1688 թվականից հետո, բայց մինչև 1693 թվականը, երբ ձեռագիրը կրկին իր տեղում էր¹¹:

Մեկ տարի անց, 1694 թ. Ճաշոցը տարվում է Ադանա նորոգման. «Վերստին նորոգեցաւ գիրքս ի մայրաքաղաքն յԱդանայ, ձեռամբ սուտանուն Իսկենտեր դպրի, ի թուականիս մերում ՌՃԽԳ (1694), ի հայրապետութեան տեառն Տէր Նարին Աստուածատուր կաթողիկոսի Տանն Կիլիկիոյ, յունիս ամսոյ Թ, ի խնդրոյ բարեւեր և բարեմիտ Աջբան իրիցու որդին տէր Ըռըսթագէսին, ի վայելումն իւր և Սոյ եղեալ ժողովրդեանն»¹² և Տէր Քրիստոս Աստուածն ամենայնի բարով վայելել տացէ: ...Եւ մեք ըստ չափոյն մերոյ նորոգեցաք և կազմեցաք գգիրքս զայս...»¹³: Իսկենտերը հիացած էր ձեռագրով և չի թաքցնում իր հիացմունքը. «ով հայրք և եղբայրք իմ, աղաչեմ զձեզ, որք հանդիպիք գիրքս այս, միոյ Հայր մեղայիւ իշեցէք զայս գիրքս գրողին հոգոյն: Փառք Քրիստոսի, որ այսչափ շնորհս պարգեւեր է առատապէս, որ ազգի ազգի ծաղկով զարդարեր է:

Ձերէ ես տեսա՝ փառք մատուցի տվողին այսչափ շնորհս.

Ով հայրք և եղբայրք, խնդրեցէք ի Քրիստոսէ վասն իմ, որ սորա շնորհացն մէկ կաթ մի պարգևեսցէ մեղաւորիս», - անկեղծորեն խնդրում է դպիրը, գնահատելով մեծ վարպետի շնորհի մի կաթիլի արժեքը: Նրոգելուց հետո ձեռագիրը վերադարձվում է Միս, «ի վայելումն Սոյ ժողովրդեանն»:

¹⁰ Մատենադարան, ձեռ. N 979, էջ 445ա:

¹¹ «Աստուած ողորմի Լուսավորչայնչն(՞) տէր Արիսթագէսին, որ ուսուցիչն է, եղբայրն զՍուքիասն ի սաղմոս ուսոյց և լաւ պատմութեամբ, թվին ՌՃԽԲ (1693) սեպտեմբերի ամսոյն Լ(30), շաբաթ, սրբոյն Նիկիոյ սուրբ ժողովին ՅԺԸ հայրապետաց արնս»: (Անդ, էջ 348բ):

¹² Վերջին երեք բառերը հետագայում ջնջված են:

¹³ Անդ, էջ 477բ:

ԺԸ դարում Հեթումի Ճաշոցն այլևս Սսի սուրբ Լուսավորչի վանքում չէր: Քեղեցի Ղազարի որդի Բինեաթը գնել էր «ի հալալ վաստակոցն իւրեանց» և նվիրել Սուրբ Ստեփանոսի եկեղեցուն¹⁴: Տեղի անունը չկա, թերևս Տարսնի Սուրբ Ստեփանոսը նկատի ունի: Դարավերջին այն հիշատակ է դառնում «Կեզկինեց Հանեսի և Նոյիկանն, և այլոց»¹⁵:

ԺԹ դարի սկզբներին Հեթումի Ճաշոցն, արդեն Էջմիածնի մատենադարանումն էր: Այստեղ հասնելու հանգամանքները և թվականը որոշակի հայտնի չեն, միայն հաստատ է, որ Մանվել Գյումուշխանեցու կողմից 1828 թվականին կազմած Էջմիածնի մատենադարանի ձեռագրերի ցուցակում նշված իննը ճաշոցներից մեկը Հեթումի Ճաշոցն էր¹⁶: Այդպես ենք կարծում, որովհետև Մանվել Գյումուշխանեցու Ցուցակը կազմելուց հետո մատենադարան է մուծվում Դարաշամբի ձեռագրերի հավաքածուն, որի մեջ Ճաշոցը չկա, իսկ այս երկու (Էջմիածնի և Դարաշամբի) հավաքածուների ձեռագրերի մասին կազմած ցուցակում որոշակի նշված է Հեթումի Ճաշոցը: Ուրեմն այն եղել է Էջմիածնում մինչև Դարաշամբի ձեռագրերի այնտեղ մուծվելը, նաև մինչև Մանվել Գյումուշխանեցու ցուցակագրությունը, այսինքն 1828 թվականից առաջ¹⁷:

Ձեռագրագիտական որոշ տվյալներ

Հեթումի Ճաշոցը Էջմիածին է հասել Իսկենտեր դպիրի վերակազմած վիճակով¹⁸: Ձեռագիրն այժմ ունի 33, 24,8 սմ մեծության 475 մագաղաթյա և 4 թղթյա¹⁹ թերթ:

¹⁴ «Յիշատակ է Ճաշոցս Քիլեցի Ղազարի որդի Բինեաթին, որ է առեալ հալալ վաստակոցն իւրեանց, և դարձեալ և իւր աջականն Պետրոսին, Սուլքի որդի Ղուկասին, և իւր հայրայքուր Մայրանին և Կայիանին, և իւր կին Մարգարիտին, իւր որդի ղազարին և ամենայն արեան մերձայորաց: Օվ որ կարդայ Աստուած ողորմի ասի, վարձն Աստուծոյ առնի: Կամ որ հանի ի գիրս սուրբ Ըստեփանոս եկեղեցէն, վարձն Յուդայի առի առնէ ԳՃԿԵ սուրբ հայրապետացն նազովքն (ի) վերայ լինի ծախողաց, ամէն, Հայր մեր, որ» (Անդ, էջ 477ա):

¹⁵ «(Յ)իշատակ է այս գիրքս կեզկինեց Հանեսի և Նոյիկանն, և մարն Մարիշամին, Դալին և հարսին՝ մահտեսի Շամէ» (Անդ, էջ 472բ):

¹⁶ Մատենադարան, ձեռ. N 3801. «Հաւաքածու ձեռագրաց ցուցակների Մանուէլ վարդապետ Գիւմուշխանեցոյն», էջ 204բ և 242ա (արտագրությունը) «266, Ճաշոց (9,6) հետո՝ 4) ամբողջ և 3 թերի»:

¹⁷ Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, կազմեցին Օ. Եզանյան, Ա. Զեյթունյան, Փ. Անթաթյան, 1965 թ.:

¹⁸ Բացակայում են մագաղաթյա առաջին թերթը և 1694 թ. ավելացված երկու կից թղթյա թերթերը, որոնց արմատները երևում են:

Գրությունը երկայուն է, յուրաքանչյուրը 26, 8 սմ գրադաշտով և 27-ական տողերով: Տողագծերը արված են ճնշումով: Վերջիններիս հեռավորությունը միմյանցից մեկ սանտիմետր է: Գրչության հիմնական գիրը բոլորգիրն է, թանաքը՝ մուգ սև: Տոները, սաղմոսները, ընթերցվածները նշված են համեմատաբար մանր բոլորգրով, բացկարմիր թանաքով: Առատորեն օգտագործված են հայոց գրատեսակները: Նյութը՝ ընտիր, սպիտակ, հիանալի մշակված մագաղաթ է:

ձեռագիրը զարդարված է մանրանկարներով, զարդանկարներով և զարդագրերով:

Պրակները, որոնց թիվը հասնում է քառասուներկուսի, բաղկացած են 12 թերթերից, բացառությամբ ԻԵ (6 թերթ), ԽԲ (8 թերթ)²⁰, Ե, Զ, Է, ԻԶ (11-ական թերթ)²¹ պրակների և պրակահամարից դուրս, սկզբի 6 թերթերից որոնց վրա ցանկերն են գրված (առաջին թերթն ընկած է և այժմ 5 թերթ է): Պրականիշերը նշված են գրչի ձեռքով, պրակի առաջին թերթի ա և վերջին թերթի բ էջերի ստորին լուսանցքի կենտրոնում: Սկզբնապես ձեռագիրն ունեցել է զբաղեցված 496 մագաղաթյա թերթ (42 12 6 = 510-14 = 496): Բայց արդեն 1694 թ. ձեռագրից պակասում էին 20 թերթ (Ա, Բ, ԺԲ, ԺԴ, ԺԶ, ԻԹ, ԽԲ պրակներից մեկական, ԻԷ պրակից 3, ԼԲ-ից, 8, ԼԷ-ից՝ 2): Սկզբի մեկ թերթն էլ հետո է ընկել և այժմ ճաշոցից պակասում է 21 թերթ (496-21 = 475)²²:

Գ. Հովսեփյանը, դեռևս 1911 թ. անդրադառնալով Հեթումի ճաշոցին գրում է. «ձեռագիրը գրված և նկարված է Ակների վանքում Հովհաննես Արքաեղբոր դպրոցում:

¹⁹ Մրանք ավելացրել է Իսկենտերը, որոնցից երկուսը պահպանակներ են սկզբից և վերջից:

²⁰ Վերջին թերթը, որտեղ ավարտվում էր ճաշոցի հիշատակարանը, քայքայված լինելու պատճառով Իսկենտերը փոխարինել է թղթով և քայքայված մագաղաթի վրայից արտագրել հիշատակարանը: Մաշված և քայքայված լինելու պատճառով, դպիրը դժվար է վերծանել և թույլ է տվել մի քանի անճշտություններ, որոնք ճշգրտվում են ճաշոցի հիշատակարանի մինչ այդ կատարված ընդօրինակության հիման վրա: Այն ենթադրությունը, թե ճաշոցի հիշատակարանը վերջից թերի է, ուր գրված կլինեք գրչի, նկարիչի և գրչության վայրի անունները, հերքվում է Մատենադարանի N 3078 ձեռագրում պահպանված ճաշոցի հիշատակարանով, որն արտագրված է նորոգումից առաջ:

²¹ Այս պրակները կազմված են հինգ զույգ-զույգ և մեկական կենտ թերթերից, ընդ որում կենտ թերթերի բացակա կեսերի արմատները պահպանված են հանդիպակաց կողմից, սակայն բնագիրը թերի չէ: Կենտ թերթեր ունեն նաև 12 թերթանոց պրակներից մի քանիսը: Բանն այն է, որ այստեղ կենտերը երկու (Է պրակ) կամ չորս (Դ պրակ) հատ են լինում, և դրվում են դեմ դիմաց: Պատճառն այն էր նաև, որ սխալ գրված, կամ կեղտոտված թերթը կտրվում էր՝ իսկ մյուս կեսը պահպանվում:

²² Ձեռագրի առաջին կազմը մեզ չի հասել: Այժմյան կազմը 1694 թվականից է, պատրաստված Իսկենտեր դպիրի ձեռքով, Աղանայում: Դրոշմագագարդ կաշեպատ տախտակ է 33,5 25,5 սմ մեծությամբ և 0,9 սմ հաստությամբ: Կազմի առաջին փեղկի մեջտեղի և վերջին աջ անկյունի կաշին

Գրի և պատկերների նմանությունը Հովհաննես Արքաեղբոր Ավետարանին հետ, մեր մեջ զարթեցնում է այս միտքը, որ սակայն կարոտ է դեռևս ստուգության և հաստատության»²³:

Ձեռագիրը արվեստի կատարելությամբ և ճոխությամբ, բազմազան նյութերով, պատկերագրությամբ, զարդանկարչությամբ, ծաղկագրերի, զարդագրերի, կենդանագրերի նրբությամբ, գեղեցկությամբ և գույների պայծառությամբ, Կիլիկյան շրջանի հայ մանրանկարչական արվեստի ամենափառավոր հիշատակներից է համարում հեղինակը, ավելացնելով. «ինչքան ցավ կլինի, եթե չհաջողվի մեզ գտնել այս տաղանդավոր, համարձակ, իր շարժումների մեջ ազատ, ուրախ և իր ստեղծագործությունների մեջ կենսալի նկարիչի անունը»²⁴:

Մ. Տեր-Մովսիսյանը «Հայերեն ձեռագրերի համահավաք ցուցակում» նկարագրում է Հեթումի Ճաշոցը և նկատում, որ այն, հավանաբար, «թագավորական նկարիչ Թորոս Ռոսլինի կամ նրա դպրոցի հմուտ վարպետների» գործ է: Նկարների «բազմությունը, նուրբ և խնամալից աշխատանքը ապացույց է, որ մի ծաղկող այդ բոլորը գլուխ հանել կոժվարանար, կամ հարկավոր էր երկար ժամանակ»²⁵:

Լ. Դուրնովոն «Հին հայկական մանրանկարչություն» ալբոմում Ճաշոցից ներկայացնելով հինգ մանրանկար, վերջիններիս բացատրության մեջ գրում է. «...ձեռագիրը թեև Թորոս Ռոսլինի ստորագրությունը չի կրում, բայց բոլոր տվյալներով պատկանում է այդ հռչակավոր վարպետի վրձնին»: Հեղինակը բարձր է գնահատում Ճաշոցի նկարիչի բացառիկ տաղանդն ու կուլտուրան, նոր վերաբերմունքը դեպի մարդը՝ իր բոլոր դրսևորումներով, դեպի շրջապատող իրականությունը: «Ունենալով գեղարվեստական գիտելիքների ու նրբազգացողություն, կերպարների ու պատկերացումների և տեխնիկապես

այրված է, իսկ դռնակը և կապիչները՝ պոկված: Կազմին ժամանակակից են կապույտ կտավե կազմաստառները:

²³ Գ. Հովսեփյան, Համառոտ տեղեկություններ Էջմիածնի մի քանի մանրանկարների մասին, «Անահիտ», Փարիզ, 1911, N 56, էջ 104:

²⁴ Անդ: Նոթերում նկարագրել է Ճաշոցի սկզբի Բարսեղ Կեսարացու նկարը (վստահելով նկարի ներքևում արված մակագրությանը, նրան համարել է Սահակ Պարթև), սկզբի թերթի գլխագարդն ու լուսանցազարդը, և Աստվածածնի նկարը՝ լուսանցքում (Մատենադարան, ձեռ. N 979, համապատասխանաբար 6բ, 7ա, 221ա էջերում):

²⁵ Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակներ, N 33, Մ. Տեր-Մովսիսյան, Ճաշոց, էջ 19:

կատարյալ ունակությունների հարուստ պաշար, նա շռայլորեն դրսևորում է ինքն իրեն»²⁶:

Լ. Ագարյանը Կիլիկյան մանրանկարչությանը նվիրված աշխատության մեջ Հեթումի Ճաշոցը դնում է Թորոս Ռոսլինին վերագրված ձեռագրերի շարքում, նկատելով, որ «գրվել և նկարագարողվել է Հեթումն Բ թագավորի համար... հիշատակարանը... ամբողջական չէ, ուստի և հայտնի չեն գրչության վայրը ու նկարչի անունը»²⁷:

Նկատենք, սակայն, որ հիշատակարանը ամբողջական է, բայց գրչության վայրը և նկարչի, ոչ էլ գրիչի անունները չեն նշված: Լ. Ագարյանը Ճաշոցը Ռոսլինի գործ չի համարում: Ի. Դրամբյանը գրչին և ծաղկողին անհայտ է համարում²⁸:

Ճաշոցի հիշատակարանի վերջին պարբերությունը ցույց է տալիս, որ ձեռագրի պատրաստողները, ստեղծողները Հեթում արքայորդու Լամբրոնյան իշխանության ներքո ապրող մարդիկ են. «Ձայս խրախճանութիւն հոգևոր և անմահական փարթամութիւնս ստացաւ նախայիշատակեալ բարեսէր պարօնս մեր»: Ուրեմն Ճաշոցի ստացող պարոն Հեթումը Ճաշոցը ստեղծողների տերն է, որոնք այն ստեղծել են իրենց տիրոջ համար և նվիրել նրան: Ուստի ձեռագրի ստեղծման հանգամանքները պարզելու համար Պարոն Հեթումի հետ պետք է մտնենք նրա տիրույթի սահմաններից ներս. ծանոթանանք նախ տիրոջը, Հեթում արքայորդուն, ապա հոգևոր կենտրոնին, ուխտի միաբանությանը, գրչության արվեստի հմտավարժ ներկայացուցիչներին, նրանց ռաբունապետին, նրանց մշակութային վաստակին և հնարավոր կլինի հայտնաբերել թե՛ գրիչին և թե՛ Ճաշոցի փառավոր պճնագարողին:

Սկսենք հոգևոր կենտրոնից, նախ՝ մինչև նրա՝ Հեթում արքայորդու սեփականություն դառնալը և, հատկապես, գրչության արվեստի բնագավառից:

Սկնռայի վանքը և գրչատունը

²⁶ Հին հայկական մանրանկարչություն, Երևան, 1962. բացատրություններ, որոնք կատարել է Լ. Դուրնովոն: Հմմտ նույնի Երևան, 1957, էջ 38-42: Ամենուր թվականը, թյուրիմացաբար, գրում է «1288»:

²⁷ Լ. Ագարյան, Կիլիկյան մանրանկարչությունը 12-13-րդ դդ., Երևան, 1967, էջ 110-148:

²⁸ Armenian Miniatures of the 13th and 14th centuries from the Matenadaran collection, Leningrad, 1984, pp. 112-125.

Սկևռայի վանքը Կիլիկյան հայկական պետության հնագույն, խոշորագույն և տնական գործունեությամբ մշակութային կենտրոններից մեկն է, ուր ծաղկում էր ուսումը, գիտությունը և գրչության արվեստը: Այն գտնվում էր Տավրոս լեռան վրա տեղավորված Լամբրոնի անմատույց ամրոցին առնթեր, որ ԺԱ դարում բյուզանդական կայսրից ստացավ Գանձակից ազգատոհմով այնտեղ գաղթած Օշին հայ իշխանը:

Սկևռան նախահայկական ծագում ուներ և հայ իշխանները նորոգեցին, ընդարձակեցին նոր շինություններով, հայացրին՝ հունական ոճը փոխելով դարձրին Օշինյանների տոհմական դամբարան և հոգևոր կենտրոն. Օշին իշխանը «բազմացոյց ի սմա եղբայրութիւնս և հանապազ խնամ տանէր առ սա բարեգարդ զուգակցան իւրով Տիկնաց տիկին Շահանդիստին, որ էր տապանատուն ազգատոհմի իւրեանց»²⁹:

Սկևռայի առաջնորդները նշանակվում էին Լամբրոնի տիրոջ կողմից:

Լամբրոնի իշխանների հովանավորությամբ և առատաձեռնությամբ առաջնորդների նախանձախնդրության և գրասիրության շնորհիվ Սկևռայի վանքը մոտ երկու հարյուրամյակ ապրում է մշակութային բեղմնավոր կյանք, իր դպրոցով ու մատենադրությամբ, գրչության և մանրանկարչության արվեստների ականավոր մասնագետներով՝ գրիչներով և մանրանկարիչներով:

Սկևռայի վանքը մշակութային ծաղկման երկու շրջան է ապրել. առաջինը՝ ԺԲ դարի վերջերին և ԺԳ դարի սկզբներին, որը կապվում է Ներսես Լամբրոնացու գործունեության հետ: Նրա և ավագ եղբոր՝ Լամբրոնի տեր Հեթում գրասեր իշխանի հովանավորությամբ, քաջալերանքով, օժանդակությամբ ծաղկում է մատենադրությունը՝ հատկապես թարգմանական և մեկնողական, նաև գրչության և մանրանկարչության արվեստը:

Ներսես Լամբրոնացին, «որ էր որդի եղբոր դստերն Ներսիսի կաթողիկոսի» գրում է «Մեկնութիւն Սաղմոսացն Դաւթի, և Պատարագին Խորհրդոյ, և Առակացն Սողոմոնի, և Երկոտասան մարգարէիցն, և Հանգրստեանն Յովհաննու Ավետարանչի» նաև՝ «թարգմանեաց յունականէն ի մերս զՄեկնութիւն տեսլեանն Յովհաննու: Յորում ժամանակի էր Գրիգոր գերագուն վարդապետն Սկևռացին»: Այդտեղ էր Արիստակես

²⁹ Գ. Հովսեփեան, Յիշատակարանք ձեռագրաց, Ա, Անթիլիաս, 1951, էջ 553:

գրիչը կամ հոետորը գրում գրչության արվեստի մասին, որը «կարգեալ են մեծն թարգմանիչք իսկ» որպիսի կարողանան «ստուգիւ գաղափարել զգիրս սուրբս...»³⁰ և հիմք դնում գրչության արվեստի լեզվաքերականական տեսությանը, որն հետագայում կատարում են Գևորգ Սկևռացին՝ Սկևռայի դպրոցում, Հակոբ Ղրիմեցին՝ Մեծոփավանքի վարդապետարանում, Գրիգոր Տաթևացին՝ Տաթևի համալսարանում, և ուրիշները՝ իրենց դպրոցներում: Արիստակես գրիչը հայոց «աւ» երկհնչունի փոխարեն այբուբենում մուծում է օ շրջանակը, որպես «օ» նշանագիր (**կրաւնաւորի** փոխարեն գրում և կարդում են **կրօնաւոր, խօսք՝ խաւսք**-ի փոխարեն և այլն):

Ներսես Լամբրոնացուն գործակցում էին նաև Գրիգոր Սկևռացի, Գևորգ Լամբրոնացի և Արիստակես հոետոր մատենագիրները, որոնք նաև գրչության արվեստի մեջ էին հմուտ: Նրանց հետ գործում էին Գրիգոր և Կոստանդին հոչականուն գրիչներն ու ծաղկողները, Սամվել, Հովսեփ, Հուսիկ գրիչները: Այս շրջանում հարստանում է Սկևռայի մատենադարանը հին և ընտիր մատյաններով, որոնց գրիչները տեղի սաներն էին կամ ուսուցիչները: Տեղի ձեռագրերը հոչակվում էին արդեն որպես լավ և ընտիր օրինակներ, որոնց համար այնտեղ էին շտապում գրիչները ձեռագիր ընդօրինակել «ի լաւ և յընտիր աւրինակէ... որ է ընտրեալ և հաճեալ բանիւ և բառիւ ի հոչակաւոր անապատէն, որ Սկևռա կոչեն»³¹, և ստացողներ, «զի ի ձեռն գրչացն որ անդ, կատարեսցեն զփափագն իւրեանց գրութեամբ»³²: Սկևռայի վանքը ձևավորվում է որպես ինքնուրույն գրչության դպրոց:

Մեզ հայտնի առաջին ձեռագիրը, որ կապվում է Սկևռայի վանքի հետ, Ավետարան է, գրված 1173 թ., Գրիգոր գրչի ձեռքով, Կոստանդին քահանայի պատվերով, Ներսես Լամբրոնացու հովանավորությամբ և հոգածությամբ³³:

Հիշատակարանից երևում է, որ Գրիգոր գրիչը Սկևռայի միաբան չէր: Մինչ այս նրան հանդիպում ենք Հռոմկլայում Ներսես Շնորհալու համար Ավետարան

³⁰ Տե՛ս Լ. Խաչերյան «Գրչության արվեստի լեզվական-քերականական տեսությունը միջնադարյան Հայաստանում», Երևան, 1962, էջ 229:

³¹ Հ. Ոսկյան, Կիլիկիայի վանքերը, էջ 71:

³² Անդ, էջ 81:

³³ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, աշխատասիրությամբ Ա. Մաթևոսյանի, Երևան, 1988, էջ 212-213:

ընդօրինակելիս, որն անավարտ թողնելով, գալիս է Սկևռա Ներսես Լամբրոնացու համար Ներսես Շնորհալուն պատկանած օրինակից Ավետարան ընդօրինակելու: Ավետարանից հետո Գրիգորը Ներսես Լամբրոնացու համար օրինակում է Գրիգոր Նարեկացու Ողբերգության մատենանը, նկարագարդ, ընդ որում նկարում է Գրիգոր Նարեկացու չորս առանձին նկարներ, համապատասխան մակագրություններով, նրանց դիմաց՝ չորս էջառաջ և լուսանցագարդեր (Մատենադարան, ձեռ. N 1568): Չորրորդ նկարից բացի մյուս երեքն ունեն հետևյալ մակագրությունները. «Գրիգոր փիլիսոփա» (7ա), Գրիգոր հսկող» (55բ), «Գրիգոր ճգնավոր» (117բ), 178բ-ում մակագրությունը չի կարդացվում: Նարեկացին սույն մատյանի 119ա,բ էջերում բոլորգրով շարադրում է «Վարք Սրբոց առն Աստուծո, Գրիգորի Նարեկացւոյ» կենսագրությունը: Ձեռագիրն ունի մի շարք հիշատակագրություններ³⁴:

Գրիգոր գրիչը հաջորդ՝ 1174 թվականին վերադառնում է Հռոմկլա և Ներսես Շնորհալու պատվիրած Ավետարանը ավարտում հրամանով նորընտիր կաթողիկոս Գրիգոր Տղայի³⁵:

Մեզ թվում է, որ և՛ այս Ավետարանը և՛ Ներսես Լամբրոնացու համար ավարտածի գաղափար օրինակը եղել է Ներսես Շնորհալուն պատկանած, Մեքաստիայում ընդօրինակված և Գրիգոր գրչի նորոգած ու զարդարած Ավետարանը, որ արդեն պատկանում էր Բակուրանին, որն այդ ժամանակ անցել էր Սկևռայի վանքին:

1193 թ. Ներսես և Հեթում Լամբրոնացիները Սկևռայում շուշանափայլ մագաղաթի վրա գրված մի Ավետարան են ստանում, գրիչն ու ծաղկողը Սկևռայի միաբան Կոստանդինն էր: Վերջինս աղաչում է հիշել Վարդան գրչին և Կոստանդին պատուական ծերունուն: Այդ թվականին սույն թանկագին ձեռագրով՝ Մեքաստիայի Ավետարանով, հարստանում է Սկևռայի մատենադարանը:

³⁴ «Զմեղաւոր գրիչս յիշեա տէր իմ Ներսէս»,
«Ստացաւդ սորա զՆերսէս՝ գորդի մեծագաւր սեւաստաւսի»,
«Զողորմելի գրիչս Գրիգոր աղաչեմ յիշել ի Տէր»,
«Թուին ՌԻԲ (1173)» (Մատենադարան, ձեռ. N 1568, էջ 24ա, 54բ, 234ա, 132ա):

³⁵ «...որ իմով ձեռամբ գրեալ Գրիգոր մեղապարտի եւ անկատար մնացեալ, զորոյ պակասութիւն լցեալ իմ հրամանաւ վերադիտողին հայոց Գրիգորի, ի թուականիս ՌԻԳ (1174)» (Յիշատակարանք, Ա, էջ 563):

1066 թվականին Սեբաստիայում Գրիգոր գրիչը, որ եկել էր «ի կողմանց Արևելից, ի լերանց Այրարատ, ի գեղջեն որ կոչի Արկուռի, զկնի աստուածասէր թագաւորին մերոյ Սենեքերիմայ»³⁶ մի Ավետարան է ընդօրինակում (Մատենադարան, ձեռ. N 311): Հետագայում այն դառնում է Ներսէս Շնորհալու սեփականությունը, որն այն նվիրում է իր Զորավար անուն եղբոր որդուն՝ Գրիգոր Ապիրատին: Վերջինս իր կարգին 1194 թվին այն նվիրել է Լամբրոնի և Պապեռոնի տէր Բակուրան իշխանին³⁷: Գրիգոր Ապիրատը մինչև նվիրելը «վերստին նորոգել» է տալիս «արտաքուստ կուսէ զաստուածային Աւետարանս՝ գեղեցիկ մետաքսիք և ակմ(բ)ք պատուականաւք ընդելուզեալ ի մարգարտոյ մեծագնոյ, ի ձեռն աստուածաբանական վարդապետի Ստեփանոսի, դրան սարկաւագի տեառն իմում, որ և վասն անմոլար ճանաչելոյ կոչի սա Յակոբցի»³⁸:

Ավետարանն այժմ չունի հիշատակարանում նշված «արտաքուստ կուսէ» ճոխ հարդարանքը կամ կազմը: Հայտնի չէ, թե երբ է գրկվել այդ շքեղությունից: Բայց պահպանել է մասունքներ ձեռագրի «ներքուստ կուսէ» զարդարյալ շքեղությունից, որի կատարողը հայտնի չէ, միայն որոշակի է, որ այն կատարվել է ձեռագիրը Բակուրանին պատկանելուց առաջ, այսինքն Ներսէս Շնորհալուն պատկանելիս այն նկարագարող է եղել, ուստի Բակուրանը «արտաքին կուսէ», «վերստին», (այսինքն մի անգամ նորոգելուց հետո) նորոգել տվել, որից ոչինչ չի պահպանվել: Բայց ահա առաջին անգամ նորոգելուց՝ նկարագարողելուց պահպանվել է Մարկոս Ավետարանիչի և Ավետարանառաջի, ինչպես նաև Ղուկասի Ավետարանառաջի նկարագարող թերթերը, սրանց երկրորդ էջերում նկարիչի գրությամբ: Պահպանվել են նաև առաջին նորոգման հետևանք ներդիր թերթերի կտրված արմատները (կտրված թերթերի պահպանված մասերը):

Ուրեմն առաջին նորոգումը կատարվել է Ներսէս Շնորհալու ժամանակ, մինչև 1173 թվականը՝ Հռոմկլայում, երկրորդ նորոգումը կատարվել է դարձյալ Հռոմկլայում, որովհետև նվիրատվության հիշատակարանը Ապիրատն իր ձեռքով գրել է նկարագարող թերթերի չգրված էջերում 1174 թվականին. 82ա «Յիշեցէք ի Քրիստոս եւ

³⁶ Նույն տեղում, էջ 105:

³⁷ Յիշատակարանք, Ա, էջ 581-586:

³⁸ Մատենադարան, ձեռ. N 311, էջ 82ա, 217բ:

գրաբեպաշտ իշխանն՝ զմեծ սեւաստիաւսն զԲակուրանն, զորդի Սմբատա, որդւոյ Հեթմոյ Սեւաստաւսի՝ տեառն Լամբրանին եւ Պապեռանին, որում եւ զԱւետարանս շնորհեցի: Ընդ նմին եւ քրիստոսասէր ամուսինն իւր զԹագուհի՝ զըստ մարմնոց քոյր իմ, որոց ողորմեսցի Տէր Յիսուս Քրիստոս աստ եւ ի հանդերձելումն: Ի թուին ՈԽԳ (1174)»³⁹:

1190 թ. Սկևռայում, Սամվել գրիչը ընդօրինակում է Ներսէս Լամբրոնացու Դավթի Սաղմոսաց մեկնությունը. և վերջում շարադրում Լամբրոնացու վարքը⁴⁰:

1192 թ. Գեորգ գրիչը Սկևռայում ընդօրինակում է «Խրատ պէսպէս...» հունարենից թարգմանված երկը⁴¹:

1193 թ. Սկևռայում Կոստանդին գրիչը Ներսէս Լամբրոնացու հրամանով ավարտում է մի Ավետարան, հիշատակարանում նաև ողորմություն է հայցում Վարդանի համար⁴²:

1197 թ. Սկևռայում ավարտում է Ներսէս Լամբրոնացին Առակաց մեկնությունը, որ սկսել էր երեք տարի առաջ⁴³:

1198 թ. իր մահկանացուն է կնքում Ներսէս Լամբրոնացին:

Մասնագետների կարծիքով Սեբաստիայում 1160 թվականին Գրիգորի գրած Ավետարանը, որ հետագայում պատկանում էր Հայոց կաթողիկոսին, նկարագարել է Գրիգոր Հռոմկլայի գրիչը: Նա հիմնավորում է Սկևռայում, ապրում մինչև 1216 թվականը (նրա մասին հիշատակարանում ասվում է՝ «գերահռչակ գրիչ... տրամախոհ և անհամեմատ արհեստ») ⁴⁴, և մեռնում «ի բարուք ծերութեան»⁴⁵, թողնելով հսկայական ժառանգություն:

1205 թ. Սկևռայի դպրոցում Գրիգոր և Բարսեղ վարդապետների ուսուցչությամբ «առ որովք այժմ դեգերիմ ի վարժս», - գրում է Ներսէս Լամբրոնացու քրոջ որդի

³⁹ Յիշատակարանք, Ա, էջ 583:

⁴⁰ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Ե-ԺԲ դարեր, էջ 255-263:

⁴¹ Անդ, էջ 267:

⁴² Անդ, էջ 274:

⁴³ Անդ, էջ 292:

⁴⁴ Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, ԺԳ դար, կազմեց Ա. Մաթևոսյան, Երևան, 1984, էջ 100 (այսուհետև՝ Հիշատակարաններ, ԺԳ դ.):

⁴⁵ Յիշատակարանք, էջ 783:

Ներսեսը,- ընդօրինակում է «Մատենագրութիւնք Ներսէսի Լամբրոնացոյ»⁴⁶, իսկ 1206 թվականին՝ «Մեկնութիւն կաթողիկէայ թղթոց... ի գերաւոյն անապատս Սկևռա, ի մէջ քրիստոսագգեաց սուրբ ճգնաւոր եղբարց միաբանակեցած...»⁴⁷: Նույն թվականին նույն ձեռագիրն ընդօրինակում է նաև Պետրոս գրիչը,⁴⁸ ապա Կոստանդ գրչի հետ՝ մի ժողովածու⁴⁹: 1216 թ. Բարսեղը Սկևռայում ընդօրինակում է Յաճախապատում Ճառք Գրիգորի Լուսաւորչի, իսկ նրա խորհրդով Գրիգորը Տարսնում Ավետարան է ընդօրինակում՝ «յօրինակէ Ներսէսի քահանայի քորեպիսկոպոսի Տարսոնի»⁵⁰: Հովսէփ գրիչը Սկևռայում ընդօրինակում է Գրիգոր վարդապետի Ճառերը⁵¹:

Մատենադարանի 10000-րդ ձեռագիրը Մովսէս Խորենացու «Հայոց պատմությունն» է, որն արտագրված է Ներսէս Լամբրոնացու օրինակից 1671 թ. : Ինչպէս տեսնում ենք Ներսէս Լամբրոնացու մահից հետո էլ (1298 թ.) Սկևռայում շարունակվում է գրչության արվեստի ավանդական ծաղկումը, և որ անգամ հսկայական ձեռագրական կորուստներից հետո, բավականին ժառանգություն է հասել այդ շրջանից:

ԺԳ դարի երկրորդ կեսին Սկևռայի ուխտի առաջնորդն էր Մխիթար եպիսկոպոսը: 1263 թվականին Ստեփանոսը ընդօրինակում է մի Ավետարան, հիշում է առաջնորդին՝ Մխիթարին՝ սնուցիչ՝ Թորոս հորեղբորը և հսկող Աւգսենդին⁵²:

1264 թ. Վարդան վարդապետ Արևելցին թագաւորի համար գրում է «Մեկնութիւն Սուրբ Գրոց Ժղլանք կոչեցեալ» Անդուլ անապատում: Նկատի ունենալով իր ձեռագիրը, գրում է. «Եւ ես գիտեմ, որ այս չէ թագաւորական իրք, այլ ոսկեգիր պիտէր, և ճարտար գրչի... թէ կամիս դիւրին է տալ փոխել ի լան, որ հեշտ կարդայք, եւ թող Գրիգորէսն փոխէ, որ բան չկորնչի: Բայց իմ գիրս, որ իմ մատանցն սատարն՝ մնա առ ձեզ, ո՞ր գիտէ թէ աւելի շնախաւոր լինի ձեզ, վասն յուսոյն իմոյ, որ առ Տէր և սիրոյն՝ որ առ ձեզ...»⁵³: Ամենայն հավանականությամբ Վարդան վարդապետի ցանկությունը

⁴⁶ Հիշատակարաններ, ԺԳ դ. էջ 53:

⁴⁷ Անդ, էջ 56:

⁴⁸ Անդ, էջ 56:

⁴⁹ Անդ, էջ 156:

⁵⁰ Անդ, էջ 101:

⁵¹ Անդ, էջ 254:

⁵² Մատենադարան, ձեռ. N 8590, Հիշատակարաններ, ԺԳ դ., էջ 323:

⁵³ Հիշատակարան, ԺԳ դ., էջ 326:

կատարած լինելու համար, Կեռան թագուհին Վարդանի ինքնագիրը ընդօրինակել է տալիս, օգտագործելու համար, իսկ նրա «մատանցն սատարն» պահում է, որպես թանկագին մասունք: «Զամենագով եւ գտրամաբան վարդապետն Վարդան՝ զարարող բանիս, եւ զստացող սորա զմեծապատիւ բարեպաշտ մայրն Կեռան թագուհի՝ Թեւանու, հրամայեաց ինձ մեղաւորի Ստեփանոսի և մականուն Իրիցորդի, գրել զհոգիալից տառս ի մխիթարութիւն աստուածասիրաց անձանց...»⁵⁴:

Կեռան թագուհին 1272 թ. Ավետիս գրչին պատվիրում է Ավետարան գրել: Ավետիսը գրելն ավարտում է, իսկ նկարագարդելը հանձնարարում է մեկ ուրիշին «Եւ իմ հանկ հանեալ զսա,- գրում է նա,- ետ ի ձեռն յայլում հմուտ և յարգի յարհեստ գրչութեան՝ զարդարել զսա խորանաւք և ծաղկավէտ վայելչութեամբ և ոսկիատիպ պայծառութեամբ, եւ ետ ի վանս, որ կոչի Ակներ» (Երուսաղէմ, 2563)⁵⁵: Գրիչը թագուհու առաջնեկ Հեթումին ցանկանում է «**Ժառանգել զթագն հայրենի և կեցեալ ըստ արինացն Աստուծոյ, վարժեալ գրովք աստուածայնովք և զինովք սպառազինաւք՝ յաղթող լինել ի վերայ թշնամեաց խաչին Քրիստոսի**»⁵⁶:

1272 թ. Ստեփանոս քահանան Խազգիրք է ընդօրինակում ուխտի առաջնորդ Սիմեոն վարդապետի աշակերտի համար, իսկ մի տարի անց՝ Տէր Սիմեոնի համար Ավետարան է ընդօրինակում, որի նկարիչը Հովասափն է⁵⁷: 1275 թ. ընդօրինակված Մանրուսումի հիշատակարանում Ստեփանոսը գրում է. «Ի թուիս հայոց ՉԻԴ (1275)... գրեցաւ երաժշտական տետրս մանրուսման, ձեռամբ բազմամեղ քահանայի Ստեփանոսի ի **հռչակաւոր անապատս Սկևռայ, որ է մերձ դղեակս Լամբրունի** և ի ստորոտ լերինս Տաւրոսի...»⁵⁸:

ԺԳ դարի վերջին քառորդում Սկևռայի վանքում գրվել են բազմաթիվ այլ ձեռագրեր, որոնց մասին կնշենք ստորև՝ «Ճաշոցի» գրչին անդրադառնալիս:

Հեթումը որպես «Ճաշոցի» ստացող և Լամբրունի տեր

⁵⁴ Անդ, էջ 419:

⁵⁵ Անդ, էջ 416:

⁵⁶ Անդ, էջ 416:

⁵⁷ Անդ, էջ 420, 433-435:

⁵⁸ Անդ, էջ 456:

1283 թվականին Սկևռայի վանքը իր շրջակայքով դառնում է Լամբրոնի տիրոջ՝ Հեթում արքայորդու սեփականություն: Նա դառնում է Սկևռայի ուխտի միաբանների պարոնը, որոնցից և ստանում է «Ճաշոցը» 1286 թվականին: Ծանոթանանք միաբանների տիրոջը և միաբաններին, ովքեր կարող էին ստեղծել այդ սքանչելի հուշարձանը: Սկսենք տիրոջից:

Հեթումը, Լևոն Գ թագավորի անդրանիկ որդին, ծնվել է 1265 թվականին: Մայրը՝ Լամբրոնի տեր Հեթումի դուստր Կիր Աննան կամ Կեռանը ամուսնանալիս որպես օժիտ, Լամբրոնը դնում է թագավորի իշխանության ներքո, իսկ անդրանիկ որդին ծնվելիս, նրան է նվիրում Լամբրոնի իշխանությունը, ասպետության աստիճան ստանալու հետ միասին 1283 թվականին⁵⁹:

Հեթումի դաստիարակությունը վստահվում է Վահրամ րաբունի գիտնականին: Վերջինս միջնադարյան Հայաստանի փիլիսոփայական մտքի ականավոր ներկայացուցիչներից է, որը, սակայն, քաղկեդոնական էր: Նա «ունէր զաղանդ քաղկեդոնական, բայց երկնչէր խաւսել յայտ յանդիման, զի թագաւորն իշխանաւք և այլ գիտնականաւք ուղղափառք էին, սակայն ապականեալ դեղեաց զՀեթում՝ տէր Լամբրոնին»⁶⁰: Քաղկեդոնականությունը բացահայտ չքարոզող Վահրամ Բաբունին թաքուն ապականում, թունավորում է պատանի արքայորդու հոգին, որն այլևս չի մաքրվում և պատճառ է դառնում նրա քաղաքական, կրոնական ոչ ճիշտ գործունեության: Նա որդեգրում է հռոմեական դավանությունը և ընդգրկվում Կիլիկիայում տարածված ֆրանցիսկյան միաբանության մեջ՝ եղբայր հովհաննես անունով: «Լատինական հիշեալ կրօնավորութեան հետևողները ընտանեկան բնակութիւնը թողնելով, պետք է ենթարկվէին վանական կենցաղին: Հեթում արքայորդին չամուսնացավ ողջ կյանքում եւ մինչեւ թագավորական գահ բարձրանալը վանական կենցաղով ապրում է իր տերութեան հոգեւոր նշանավոր

⁵⁹ Ղ. Ալիշանը այդ առթիվ գրում է. «Բան մի մաղաքեայ դպրի տարեգրի տայ կարծել, եթէ յառնուլ Լեւոնի ի կին զԿիր Աննա դուստր տեառն Լամբրոնի, ընկալեալ իցէ՝ զբերդն զայն ի պաշտատական. քանզի ասէ, յետ յիշելոյ զմահ Կոստանդնի Արքայափոր (1263). «Եւ ի նոյն ժամու խառնեցաւ Լամբրոն ընդ թագաւորին Հայոց»: Մակաւուք յառաջ եղեալ գուշակի ամուսնութիւն Լեւոնի, քանզի ի նմին յիշեալ տարւոջ նշանակի ծնունդ անդրանկան նորին»: Ղ. Ալիշան, Միսուան, Վենետիկ, 1885, էջ 532:

⁶⁰ Է. Բաղդասարյան, «Գեվորգ Սկևռացու վարքը», «Բանբեր մատենադարանի», N 7, Երևան, 1964, էջ 421:

կենտրոն Սկևռայում, իսկ այնուհետև՝ արքունիքում, հավանաբար Հռոմի պապի որոշակի արտոնութեամբ»⁶¹:

Ուսումնառության տարիներին երիտասարդ Հեթումը լուրջ կրթություն է ստանում: Տարիներ անց, 1293 թ., իր «Քերականութիւնը» նրան նվիրող Հովհաննես Երզնկացին Հեթումի մասին գրում է. «Վարժ (էր) աստուածային գրոց սրբոց, և պատուող ուսումնականաց և գիտութեան հմտականաց... յոյժ գրասէր և ուսումնասէր ունէր բարս բարեմիտ թագաւորն և ոչ դադարէր ի գիրս ստանալոյ և յեկեղեցոյ գանձս յաւելումն առնելոյ»⁶²:

1283 թվականին տասնութամյա Հեթումի՝ ասպետության աստիճան եւ Լամբրոնի բերդի ու շրջակայքի իշխանությունը ստանալու առթիվ, մայրը՝ Կեռան թագուհին, մի ձեռագիր Ավետարան է գրել տալիս իշխանության գլխավոր վանք Սկևռայում, որը նաև իր հորենական՝ Օշինյան տոհմի դամբարանն էր: Հիշատակարանում ասվում է. «...մեծափառ թագուհին Հայոց Կեռան դուստր իշխանաց իշխանին Հեթում սեբաստոսի... ի մեծանուն սուրբ ուխտս Սկևռայ... մերձ յանմատոյց դղեակն Լամբրոն, որ է ի գլուխ Տարսոնի և ի ստորոտ մեծի լերինս Տաւրոսի, յորում ամի բարենշան և բարեպաշտ անդրանիկ որդին արքայիս մերոյ պարոն Հեթում զձիաւորութեան աշտիճան ընկալաւ և այժմ տիրէ աստուածապահ դղեկիս և այլ շուրջակայ գաւառացս...»⁶³:

Հեթումի ասպետության աստիճան շնորհելու տեսարանը նկարված ենք տեսնում Հովհաննես Արքաեղբոր Ավետարանում, որը, ինչպես կհամոզվենք, Գևորգ Սկևռացու գործն է: Ավետարանի ներդիր նկարներից վերջինը տերունական նկար չէ, այլ ձեռնադրության տեսարան (Մատենադարան, ձեռ. N 197, էջ 341, Հովհաննու ավետարանի վերջում): Եպիսկոպոսը ձեռնադրում է երկու պատանիների. փոքրը՝ ծնկաչոք է, որի գլխի վերևում եպիսկոպոսը մի ձեռքում գիրքն է բռնել, մյուսով օրհնում է: Պատանին հագին կանաչ, ոսկեհուռ զգեստ ունի: Մյուսը՝ կանգնած է՝ նույնպիսի զգեստով, միայն կարմիր, ձեռքերում մի երկարավուն մոմ: Ներկա են երեք վարդապետ, մի աշխարհական և հեռվում մի պատանի ևս՝ ձեռնադրության սպասող:

⁶¹ Մ. Օրմանեան, Ազգապատում, Պեյրութ, 1960, էջ 1709:

⁶² Ղ. Ալիշան, Միսուան, էջ 549:

⁶³ Մատենադարան, ձեռ. N 6764, էջ 263ա-263բ:

Ձեռնադրվողների մագերը կնդած է կաթուղիկների նման՝ կատարից: Հավանաբար ձեռնադրող եպիսկոպոսը Հովհաննես Արքաեղբայրն է, իսկ ձեռնադրվողները ձիավարության աստիճան ստացող իր եղբոր՝ Հեթում առաջին թագավորի թոռներն են, Լևոն թագավորի որդիներ Հեթումը և Թորոսը: 1283 թվականին Միս մայրաքաղաքում «աւրհնեցան ձիաւորք արքայորդիքն մեր Հեթում և Թորոս և այլ մանգունք իշխանաց և որք յարքունական սպասաւորաց», - գրում է Հովհաննես Երզնկացի վարդապետը, որը արքունական այդ հանդեսի ատենախոսն էր. «հրամայեցաւ ի վեհիցս սպասաւորեալ ի հոգեւոր այսմ սեղանոյ խրախճանութեան»⁶⁴: Այս նույն ոգին է իշխում Ճաշոցի հիշատակարանում, գրված Գևորգ Սկևռացու ձեռքով: Այս ևս վկայում է, որ Ճաշոցը սկսվել է 1283 թ. Հեթումի ձիավարության աստիճան ստանալու առթիվ, և Գևորգ Սկևռացին այնտեղ ներկա է գտնվել:

Իսկ թե ինչու են կաթուղիկ հոգևորականի տարագով, բացատրելի է: Հեթումը արքայորդին կաթուղիկ էր, նրա եղբայրը Թորոսը, հավանաբար, նույնպես: Հեթումը ամբողջ կյանքում էլ մնաց հոգևորական և աշխարհական. «կրօնավորի սքեմով արքունիք կնստեր, եւ կրօնավորական գոտիեն պատերազմողի սուրը կկախեր»⁶⁵: Կիլիկիայում ընդունեցին ասպետության եվրոպական ձևը, իսկ Արևմուտքում ասպետությունը եկեղեցական արարողությամբ էին տալիս: Վ. Հացունին այդ առթիվ գրում է. «Հին հայ ասպետության, որ կը վերջանա իրապէս մեր Արշակունեաց եւ անվանապէս Սասանեան շրջանին հետ, Կիլիկիո մեջ կերելի եւրոպական ձեւը, **ձիավորութիւնը**, որ շատ պատվավոր աստիճան էր: Ի սկզբան լոկ զինվորական նկարագրով, հետո միջին դարուն զգեցա՞վ կրօնական հանգամանք մ'ալ ուխտեալ զինվորութիւն մը, նպատակ ունենալով հայրենեաց, կրօնից եւ տկարաց պաշտպանութիւնը: Ասոր համար արեւմտեայք եկեղեցական արարողութեամբ կու տային զայն, որոյ նման կարգ մը չեմ գտած Կիլիկեան Մաշտոցաց մեջ: Ռուբինեանց

⁶⁴ Շարունակության մեջ՝ «...ուրախ եղեալ ցնծամբ... մանաւանդ ընդ որոյոյ արքայից նախածին և անդրանիկ զօրաւոր զաւակի, որ այսօր իշխանական փառօք յարքաէ և ի հօրէ ճոխացեալ պատանի, ի թագաւորական զաւագանէ աճեցեալ շառաւիղ ծաղկի, հանդերձ միւս ևս գեղեցիկ բուսակցաւ, բարեբողբոջ պատանեկաւ և եղբարբ...» (Մատենադարան, ձեռ. N 2173, էջ 86ա-88բ):

⁶⁵ Մ. Օրմանեան, Ազգապատում, էջ 1809:

թագավորելեն առաջ՝ Անտիոքա իշխանեն կընդունէին Հայք այդ աստիճանը եւ հետո մեր թագավորք սկսան տալ, կապելով զայն նշանավոր առթից հետ»⁶⁶:

Եվ ահա Լևոն Բ-ն իր որդիներին, ինչպես և այլ իշխանորդիների ասպետության աստիճան է տալիս 1283 թ. Աստվածհայտնության տոնին՝ հունվարի 6-ին: Իսկ ձեռնադրող եպիսկոպոսի՝ Հովհաննես Արքաեղբայր լինելը ապացուցվում է նրա այս նկարի և Մատենադարանի⁶⁷ և Վենետիկի ձեռագրերում⁶⁸ պահպանված նրա նկարների նմանությամբ: Ստորև կտեսնենք, որ Մատենադարանի N 179 ձեռագրի ներդիրները կատարել է Գևորգ Սկևռացին՝ Սկևռայում, 1287 թվականին:

Հեթում արքայորդու մասին առայժմ այսքանը:

Ինչպես վերը նշեցինք, հիշատակարանից առաջ բերված հատվածի վերջին պարբերությունը ցույց է տալիս, որ Ճաշոցը պատրաստողը Հեթում արքայորդու Լամբրոնյան իշխանության սահմաններում, նրա իշխանության ներքո, ապրող մարդիկ են «զայս խրախճութիւնն հոգևոր և անմահական փարթամութիւնս ստացաւ նախայիշատակեալ բարեսէր **պարոնս մեր Հեթում**»: Ուրեմն Ճաշոցի ստացող Հեթումն այն պատրաստողների պարոնն է, իշխանը, տերը: Նշանակում է Ճաշոցն ստեղծվել է Հեթումի տիրույթների սահմաններում, և ոչ այլուր, Լամբրոնյան իշխանների մշակութային գլխավոր կենտրոնում՝ Սկևռայի վանքում: Այժմ ծանոթանանք Սկևռայի վանքում Ճաշոցն ստեղծող միաբաններին:

Ձեռագրի գրիչ Ստեփանոս քահանա Սկևռացին

Ինչպես նշվեց, Ճաշոցի հիշատակարանում գրչի անուն չի տրվում, սակայն ձեռագրագիտական քննությունը թույլ է տալիս պարզելու նրա ինքնությունը:

Սկևռայի նշանավոր գրիչներից է, Ստեփանոս քահանան: Առաջին անգամ նրան հանդիպում ենք 1263 թվականին, երբ «ի մեծ ժողովարանս Սկևռայի» որի առաջնորդն էր Մխիթար եպիսկոպոսը, Հայրապետ քահանայի համար ընդօրինակում է մի

⁶⁶ Վ. Հացունի, Պատմություն հին հայ տարագին, վենետիկ, 1923, էջ 26:

⁶⁷ Մատենադարան, ձեռ. N 4243, էջ 15ա, 1263-1266 թթ. ձեռագրից:

⁶⁸ Վ. Հացունի, նշված աշխ. էջ 257 նկար 1263 թ. ձեռագրից:

Ավետարան: Այդ ժամանակ գրչի սնուցիչը և խնամարկուն, այսինքն՝ կրթողը և պահողը, իր ծերացյալ հորեղբայր Թորոսն էր, ձեռագրի ոսկողը՝ «Աւգսէնդը»⁶⁹:

1272 թվին Ստեփանոս քահանան Մանրուսումնք է ընդօրինակում Գրիգոր քահանայի համար. «Ի յիշատակ... սնուցչին իւրոյ հոգևոր տեսոն և վարժապետի տէր Սիմէոնի առաջնորդի սրբոյ ուխտին Սկևռայ, որ և աւարտեցաւ գիրս»⁷⁰: Ուրեմն, Սիմէոն վարժապետը Սկևռայի ուսուցիչներից էր, որ հասել էր առաջնորդի աստիճանի:

Հովհաննէս քահանան որդեգրելով Կոստանդին անունով մի մանկան նրան հասցնում է քահանայության աստիճանի, ապա բերում Սկևռա՝ կրթությունը շարունակելու: Նրա համար 1275 թ. պատվիրում է «Երաժշտական տետր»՝ Մանրուսում, որը դարձյալ գրվում է «ձեռամբ բազմամեղ քահանայի Ստեփանոսի, ի հռչակաւոր անապատս Սկևռայ: Թորոս քահանան այստեղ հիշվում է արդեն որպէս ստացողի խնամարկու»⁷¹:

1278 թ. Ստեփանոս քահանան Սկևռայում դարձյալ մանրուսում է ընդօրինակում Ստեփանոս քահանայի համար, ուր հիշվում են նրա Կոստանդին, Նորընծա քահանա Կիրակոս և Հովսէփ սարկավագ եղբայրները և «զխնամաւղ եւ զսնուցիտչ սոցա զպատկառելի քահանայն եւ զպատուելի ծերունին Դաւիթ»: Նույն Մանրուսումի պատճեն է նաև Մատենադարանի հմր. 630 ձեռագիրը, որը թեև հիշատակարան չունի, բայց գրչության նմանությունը, չափերը և կառուցվածքային նույնությունը թույլ են տալիս այն համարել Ստեփանոս քահանայի ձեռքով Սկևռայում գրված ձեռագիր⁷²:

Ստեփանոս քահանայի հաջորդ ընդօրինակությունը՝ Կեռան թագուհու պատվիրած Ավետարանն էր, Հեթում արքայորդու, 1283 թ. ասպետության աստիճան

⁶⁹ Մատենադարան, ձեռ. N 8590:

⁷⁰ Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, կազմեց՝ Նորայր եպս. Պողարեան, հ. Ե, Երուսաղէմ, 1971, էջ 485:

⁷¹ Ա. Սյուրմեյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Հալեպի եւ Անթիլիասի ու մասնաւորաց, Երուսաղէմ 1935, հ. Ա, էջ 243:

⁷² Մատենադարանապետ Ս. Ամատունին սույն ձեռագիրը համեմատելով Մատենադարանի N 759 ձեռագրի հետ գրում է. «Ժամամուտներից այսչափ էլ պակասում է N 680 (այժմ 759) Մանրուսման-Խազգրքի մեջ: Գիրքը գրված է ՉԻԷ (1278) հայոց թվին և որովհետև սույն խազգիրքը թվական չունի, և գրությամբ, մանավանդ ժամամուտների դասավորությամբ և այլ երգերի խորագրերի

և Լամբրոնի իշխանությունն ստանալու առթիվ: Այստեղ առաջին անգամ Հեթում արքայորդին հիշվում է Լամբրոնի տեր: Գրիչն հասնում է արքունական պատվերներ կատարելու մակարդակի, իսկ Սկևռայում մինչ այդ Ստեփանոս Իրիցորդին էր կատարել նույնպիսի պատվեր: Սկևռայի գրչության դպրոցը ոչ միայն իշխանական, այլև արքունական ուշադրության էր արժանանում⁷³:

Ստեփանոս քահանան հաջորդ ձեռագրերում գրության ժամանակը նշելիս, թագավորի հետ հիշատակում է նաև Լամբրոնի նոր տիրոջ անունը, որն նստում էր Լամբրոնի ամրոցում. «Ի ժամանակս աստուածապաշտ արքայի Լեւոնի որդւոյ Հեթմոյ, և ի նորուն աստուածասէր անդրանիկ Հեթմոյ տէրութեան աստուածապահ բերդիս Լամբրոնի, և ի կաթողիկոսութեան աստուածահաճո կրկին ծերութեամբ պատուեալ Տեառն Յակոբայ, ի ՉԼԴ (1285) թուականիս հայոց գրեցաւ տառս յաստուածապահ սրբատանս մեծի ուխտիս Սկևռայի»⁷⁴:

Ստացող խաչատուր պատանին ձեռագիրն ստանում է րաբունապետի հանձնարարությամբ. «...թելադրութեամբ Գեորգայ վարդապետի, առ որում կայր ի վարժս կրթութեան բանի և գրոց, ուսումնասէր դպիրն Խաչատուր ինքնագիր երկաւք ստացաւ զգիրս Ծննդոցն, զԴատաւորացն և զԹագաւորացն, և վասն ոչ բերելոյ տկար մարմնոյն զերիս գրութեանն, աւժանդակեաց սնուցիչ նորին եւ քեռի ամտուածապաշտ քահանայն Աստուածատուրն եւ սակս աղքատութեան կարծեաց, նախ զՆոր կտակարանս ետ գրել իբրեւ զյոյժ հարկաւորս»⁷⁵: Ահա այս Նոր կտակարանը, գրում է Ստեփանոս քահանան. «Ստացան զայս աստուածախաւս մատենանս Նորո կտակարանաց ի ձեռն իմոյ նուաստութեանս Ստեփանոսի ամենամեղ և անպիտան գրչի... ի ՉԼԴ (1285) թուականիս հայոց... յաստուածապահ սրբաձանս մեծի ուխտիս Սկևռայի...» և հիշատակարանն ավարտում է այսպես. «Արդ մաղթեմք բոլորիցն յԱստուծոյ զստացաւորք գրոցս՝ հանդերձ տրուպ գրչաւս եւ

միօրինակությամբ բոլորովին նման է հիշյալ խազգրքի, ուստի հավանական է, որ նույն թվականին գրված լինի (1895, 28 ապրիլի Ս. Էջմիածին, Մատենադարան, ձեռ. N 630, Ա. պահպանակից առաջ):

⁷³ Մատենադարան, ձեռ. N 6764:

⁷⁴ «Լոյս», Կ. Պոլիս, 1906, էջ 1219-1220, Հիշատակարաններ, ԺԳ դ., էջ 617-618:

⁷⁵ Անդ:

մերովքն համայնիւք, եւս եւ զպատուական քահանայն Ստեփանոս Գոյներերիցանց, և զծնաւդս նորին՝ գտանել ողորմութիւն ի Տեառնէ, որ աւգնական եղև ի նիւթ գրոյս»⁷⁶:

Այսպիսով 1285 թվականին Սկևռայում էին գտնվում Գեորգ րաբունապետ Սկևռացին (որի դպրոցում սովորում էր պատանի Խաչատուրը), Ստեփանոս քահանան (որը Նոր կտակարան է ընդօրինակում Խաչատուրի համար) և Ստեփանոս Գոյներերիցանցը (որը գրելու թուղթ է տալիս գրչին):

Այս բոլորը՝ թե Գեորգ րաբունապետը և թե երկու Ստեփանոսներն ու Խաչատուրը 1288 թվականին դարձյալ Սկևռայում էին: Սույն Աստվածաշնչի հիշատակարանում Ստեփանոս Գոյներիցանցը շարունակում է. «Եւ դարձեալ յԱստուած խրախուսեալք իմով ձեռամբ Ստեփանոս Գոյներիցանց փցուն գրչի ստացան զաստուածային Գիրս սրբոց մարգարէից եւ զսրբագրաց ոմանց յերթն հարիւր երեսուն եւ երթն (1288) թուականիս, ի մխիթարութիւն ինքեանց հոգւով...»⁷⁷:

Մատենադարանի 3816 ձեռագրի, որ է «Մեկնութիւն Յոհանն աւետարանին Յովհաննէսի Ոսկեբերանի» հիշատակարաններից մեկում խնդրում են. հիշել աշխատողներին «...նախ՝ զՍրբագանն Կիրակոս վարդապետն, որ... յՅարոց գրոյ և ի լեզուէ, և ի Յունականէն քերթողական արհեստիւ թարգմանեալ ի հայ բարբառ և ի գիր... գրիչ Ստեփանոսին... և ամենայն եղբարց սուրբ ուխտին Սկևռայի...»⁷⁸:

Սկևռայի դպրոցի և գրիչների համբավը տարածվում է ամենուր: Թորոս քահանան Կոստանդնուպոլսից ուսումնառության նպատակով գալիս է Կիլիկիա և ապաստանում Սկևռայում: 1290 թվականին նրա համար ընդօրինակվում է մի Ավետարան, «ի հայրապետութեան առաջին ամին Տեառն Ստեփանոսի և յիշխանութեան թագաժառանգ ծիրանածին պարոնին՝ Հեթմոյ որդւոյ Լեւոնի արքայի, ի սուրբ և ի գերահոջակ ուխտս Սկևռա... ձեռամբ ամենամեղ քահանայի Ստեփանոսի»⁷⁹:

⁷⁶ Անդ: Հիշվում է նաև «կին ոմն ի նիւթ սորա աւգնական եղև, յիշեսցիք և զնա ընդ վերոգրեալքն և Աստուած ձեզ յիշէ»:

⁷⁷ Անդ:

⁷⁸ Հիշատակարաններ, ԺԳ դ., էջ 649-650:

⁷⁹ Մատենադարան, ձեռ. N 2630, էջ 302ա-302բ, Հիշատակարաններ, ԺԳ դ., էջ 658-659:

Նույն թվականին Ստեփանոսը ևս մի Ավետարան է ընդօրինակում Ստեփանոս Սենեֆցու համար⁸⁰:

Կիլիկիայի Արքակաղնու ուխտի միաբանները «առեալ զնիւթ պատրաստեալ եղբարէն իւրեանց եկին ի հռչակաւոր ուխտն Սկևռայ, զի ի ձեռն գրչացն որ անդ, կատարեսցեն զփափագն իւրեանց գրութեամբ սուրբ Աւետարանի»⁸¹: Ստեփանոսը 1293 թ. ավարտում է Ավետարանը. «ըստ տկար չափոյ ծերութեանս զառանցեալ տիոց և պակասեալ ի պատշաճ պիտոյից այսր արուեստի»⁸²: Այստեղ հիշվում է նկարիչ Սիոնը, իր նկարների տակ. «զյետին գծող ցանկիս և նկարող սուրբ աւետարանչացն զՍիոն նրւաստ քահանա...»⁸³:

1295 թվականին մահանում է Ստեփանոսի Կոստանդին եղբայրը, և որք թողնում երեք զավակների, որոնց համար նա գրում է մի Ավետարան. «...Աղաչեմ... յիշեսցիք զտառապեալ և զմեղաւոր գծաւդս, ևս և զեղբար որդիսս իմ զՅովհաննէս քահանայ և զԼևոն սարկաւագ և զՅովսէփ պատանի, վասն զի ի խնդրոյ սոցին ի պակասեալ ամաց և ի զառանցեալ տիոց, և ի ծերութեան հասակի շնորհաւքն բարերարին Աստուծոյ աւարտեցի զսա յիշատակ ինձ և ծնողաց իմոց և ի վայելումն յառաջասացեալ արեան մերձաւորացս»⁸⁴: Հանգուցյալ Կոստանդինի զավակներն արդեն գրիչներ և ծաղկողներ էին, որոնք աճել էին հորեղբոր ձեռքի տակ: Նրանցից Լևոնն այդ նույն թվականին Երեմիայի համար ընդօրինակում էր վերջինիս ուսուցիչ Գևորգ Սկևռացու «Մեկնութիւն Երեմիայ մարգարէի» գործը, համառոտված Հեթում թագավորի խնդրանքով: Թագավորի մոտ էր գտնվում Սկևռացու ինքնագիրը՝ «գրեալ ձեռամբ իւրով ետ նմա» վկայում է Երեմիան, և շարունակում. «Ես զայս տեսեալ վերջինս ի բնաւիցս փցնամիտ աշակերտս սորին Գևորգայ... Երեմիայ յորջորջեալ, հետիոտն աշխատեալ երկու անգամ առ թագաւորն իմ երթեալ. խնդրեցի զարարեալ աւրինակն, և վասն սիրոյ ետու զրել զսա Լևոնի լաւ և արհեստի գրչի...»⁸⁵: Իսկ Լևոնը խնդրում է հիշել իրեն, հորը՝ Կոստանդինին, «որ յայսմ ամի հանգեաւ ի Քրիստոս

⁸⁰ Հիշատակարաններ, ԺԳ դ., էջ 659-660:

⁸¹ Անդ, էջ 726:

⁸² Անդ:

⁸³ Անդ:

⁸⁴ Անդ, էջ 753:

⁸⁵ Անդ, էջ 751:

խաղաղութեամբ... ևս առաւել աղաչեմ յնշել զպատուական քահանայն Ստեփանոս գրիչ, զաւելոյր իմ և զհարազատ եղբայրն իմ զՅովհաննէս քահանայ և զայլ եղբայրսն իմ և զծնոդսն իմ»⁸⁶:

Ստեփանոս քահանայի մասին ուրիշ տվյալ կամ նրանից այլ ձեռագիր հայտնի չէ, բայց եղածն էլ բավական է, որպէսզի նա համարվի հայ գրչության երախտավորներից մեկը, եթէ նկատի ունենաք նաև, որ, ինչպէս կհամոզվենք քիչ հետո, նա է գրիչը նաև Հեթումի ճաշոցի: Շուրջ քառասուն տարի Սկևռայի գրչության դպրոցում նա բազմաթիվ ձեռագրեր է ընդօրինակել: Նրա պատվիրատուների մեջ հանդիպում ենք նորոսում աշակերտի ու արքայորդու, շարքային քահանայի ու թագուհու, իսկ ձեռագրերի մեջ՝ Աստվածաշնչի ու Մանրոսումի, Ավետարանի ու ճաշոցի: Դյուրընթեռնելի և ակնհաճ է Ստեփանոս քահանայի բոլորգիրը, իսկ գլխագիրը՝ զգաստ և գեղեցիկ երկաթագիր: Նա հմուտ էր երաժշտության մեջ և ընտիր ու լավ օրինակներ էին նրա ձեռքով խազագրված ձեռագրերը:

Այս բեղմնավոր գրիչը անհայտ է մնացել ուսումնասիրողներին, որովհետև նույնացվել է մի ուրիշ նշանավոր գրչի, Ստեփանոս Գոյներերիցանցի հետ⁸⁷, որը Սկևռայում ուշ է աշխատել, և ավելի երիտասարդ էր, քան Ստեփանոս քահանան⁸⁸: Ի դեպ Գոյներերիցանցի հետ են նույնացվել նաև Սկևռայի մյուս գրիչներ Ստեփանոս Իրիցորդին⁸⁹ և Ստեփանոս գրիչը⁹⁰:

Ստեփանոս անունով չորս գրիչ Սկևռայում

⁸⁶ Անդ, էջ 751, Մատենադարան, ձեռ. N 8425, էջ 257բ: Սկևռայում 1296 թ. Պողոս գրչի ընդօրինակած ձեռագրի (Հ. Ոսկանյան, Կիլիկիայի վանքերը, էջ 83) խորաններ ծաղկող Հովհաննէս Լամբրոնացին, հավանաբար Լևոն գրչի մեծ եղբայր Հովհաննէս քահանան էր:

⁸⁷ Դ. Ալիշան, Սիսուան, էջ 96-97:

⁸⁸ Հ. Ոսկանյան, Կիլիկիայի վանքերը, էջ 51 «Սկևռայի մեծ գրչագիրներեն ու գծողներեն նկատելու է նմանապէս Ստեփանոս Կայթառոնցին, հորջորջված Գոյներերիցանց»: Բ. Կյուլեսերյան, «Լոյս», Կ. Պոլիս, 1906, էջ 1169:

⁸⁹ «Եւ համարիմ զնոյն Ստեփանոս (Գոյներերիցանց. Ա. Մ.) Իրիցուորդի, որ յամի 1294 ընդօրինակէր զգրուածս ինչ Վարդանայ մեծի վարդապետի և զայլոց ի սակս Կեռան թագուհւոյն» (Դ. Ալիշան, Սիսուան, էջ 97):

⁹⁰ Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի, հ. Ա, էջ 1614:

Միևնույն միաբանության նույնանուն անդամները որևէ կերպ մականվում էին միմյանցից տարբերվելու համար և աշխատում էին միշտ նույն կերպ գրվել: Նրանք նույնիսկ հիշատակվելու կամ հիշատակարանում գրչության տեղն ու ժամանակն արձանագրելու յուրօրինակություն էին պահպանում: Ստեփանոս քահանան իր գրած ձեռագրերի բոլոր հիշատակարաններում իրեն համարում է **«Ստեփանոս ամենամեղ քահանա»**, մյուս Ստեփանոսը՝ հոր Գոյներ երեցի անունով կոչվում է **«Գոյներերիցանց»**⁹¹, երրորդը՝ հոր՝ Ղուկաս քահանայի անվան փոխարեն պահում է նրա հոգևոր անվանումը՝ **«Իրիցորդի»** և միշտ հիշվում է **«Ստեփանոս մականուն Իրիցորդի»**, իսկ չորրորդ՝ Ստեփանոս քահանան՝ պարզապես **«Ստեփանոս գրիչ»**:

Ահա և Ստեփանոս Իրիցորդուց մեզ հայտնի ձեռագրերը, նախ մեզ ծանոթ «Ժղլանք»-ը՝ «Զամենագով եւ գտրամաբան վարդապետն Վարդան զարարող բանիս, եւ զստացող սորա զմեծապատիւ բարեպաշտ մայրն Կեռան թագուհի Թեւանու հրամայեաց ինձ մեղաւորի **Ստեփաննոսի եւ մականուն Իրիցորդի** գրել զհոգելից տառս ի մխիթարութիւն աստուածասէրաց անձանց...»⁹²:

«Թեւանու»-ն Կեռան թագուհու մոր անունն է: Տեղը, անկասկած, Սկևռան է, որովհետև Ստեփանոս Իրիցորդու մեզ հայտնի մյուս ձեռագրերը գրվել են Սկևռայում, որի միաբան է համարում իրեն: Մաշտոցի անվան Մատենադարանի N 780 ձեռագիրը («Կոչումն ընծայութեան Կիրդի Երուսաղէմացոյ») գրված է Սկևռայի միաբան Կոստանդնի պատվերով (որին հայրը 1275 թ. բերեց Սկևռա սովորելու, իսկ Ստեփանոս քահանան նրա համար Մանրուսում ընդօրինակեց): Գրիչը Ստեփանոս

⁹¹ «Ստեփանոս տարտամ ի գործս սրբութեան, Գոյներ իրիցու որդի դաժան» (Մատենադարան, ձեռ. N 1, էջ 105ա): Ղ. Ալիշանը հենվելով մի գրչի հիշատակարանի վրա, որ ունի այսպիսի բովանդակություն, թե Գևորգ Սկևռացին «և զՍաղմոսն նոյնպէս արարեալ, որ լաւ օրինակ է, այժմ գտանի առ մեզ, և աւելին ի վերայ՝ **կարմիր գրով**. յաւել և ի Տօնացոյցս և ի Ժամանակագրութիւնս՝ ուղղակի որ **Գոյն Երիցանց** կոչի», այսպիսի հետևություն է անում. «այս բան ցուցանէ ինձ՝ կարմրադեղով նշանակեալ Գեորգայ զայլայութիւնս բանից կամ բառից ի Սաղմոս և յայլ ժամագիրս, որք զի քահանայից կամ երիցանց ի պէտս էին, կոչեցաւ **Գոյն երիցանց**, յորմէ ածանցեալ է և մականուն ճարտար գրչին Ստեփանոսի» (Միսուան, էջ 533, ընդգծումները հեղինակինն են): Գոյները Ստեփանոսի հայրն է, որից և որդու մականունը՝ «Գոյներերիցանց»: «Գոյներիցանց»-ը սղված և աղավաղված ձևն է: Իսկ Սաղմոսի կամ Ժամագրքի «Գոյներերիցանց» կոչվելը նույնպես կապվում է Ստեփանոս Գոյներերիցանցի հետ, որովհետև այդ գործերի առաջին ընդօրինակողը նա է եղել, (Տե՛ս՝ Մատենադարան, ձեռ. N 179, էջ 527բ-544բ), որի օրինակից տարածվել է և այդպես կոչվել Տօնացոյցը:

⁹² Մայր Յուզակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Բ, կազմ.՝ Բարսեղ վրդ. Սարգիսեան, Վենետիկ, 1924, էջ 1068, գրության ժամանակը հայտնի չէ. Ն. Պողարյանը դնում է 1272 թ. տակ, (Ն. Պողարյան, Յուզակ Երուսաղէմի, հ. Գ, էջ 414), իսկ Ղ. Ալիշանը 1274 թվականի տակ (Ղ. Ալիշան, Միսուան, էջ 97):

Իրիցորդին աղաչում է հիշել իրեն՝ «զանարժան աշխատողս **զՍտեփանոս Իրիցորդի**», ստացողին «և ամենայն եղբարց սրբոյ մենաստանիս Սկևռայիս»⁹³: Ձեռագրի գրության թվականը հայտնի չէ:

Ստեփանոս Իրիցորդին 1297 թ., Սկևռայում իր համար ընդօրինակում է մի Ավետարան, հիշատակարանում գրում՝ «անարժան քահանայի **Ստեփանոսի եւ մականունն Իրիցորդու**», հիշում է հորը՝ Ղուկասին, մորը՝ Թագերին, եղբայրներին, ինչպես «նաև զեղբարք սրբո մենաստանիս Սկևռայի... զի յայս սակս ի բաց եղի զծերութեան անկարութիւն, զի շահեցայց ի ձենշ զողորմութիւն եւ զշնորհս, զի թերեւս գտից թողութիւն բազմութեան մեղաց իմոց և յուսալով ի հայրական եւ եղբայրական գութս ձեր զյառաջիկայ հոգս իմ ձեր սուրբ աղաւթից յանձին արարի...»⁹⁴: Ծերացած գրչի, թերևս վերջին ընդօրինակության Հիշատակարանը նույնպես ցույց է տալիս, որ նա ուսանել, մեծացել, շնորհ է ձեռք բերել Սկևռայում, միաբանության հայրական հոգածությամբ:

Մյուսը **Ստեփանոս գրիչն** է, որի մեզ հայտնի առաջին գործը Հեթում թագավորի համար 1295 թ. գրված Աստվածաշունչն է: Այն հանգամանքը, որ նա այդ թվականին թագավորի համար Աստվածաշունչ էր ընդօրինակում, վկայում է, որ նա բավականին վաստակ և լավ համբավ ունեցող գրիչ էր: Հիշատակարանում գրում է. «Ով Տէր իմ արքայ Հեթում, աղաչեմ յիշեա ի սուրբ աղաւթս քո զմեղաւոր գրողս սորա զՍտեփանոս՝ զծերացեալս մեղաւք, զի յոյժ աշխատեցայ ի գրելն սորա, մանաւանդ ի ցանկերս կարի խիստ աշխատեցայ»⁹⁵:

Սրանք են Գևորգ Սկևռացու՝ Սկևռայի գրչության դպրոցի գրիչները: Հեթումի ճաշոցը մի գրչի գործ է: Ո՞վ է սրանից գրել Հեթումի ճաշոցը:

Ճաշոցի գրիչը, ըստ հնագրական տվյալների, Ստեփանոս քահանան է (մյուսներից տարբերելու համար նրան այսուհետև կկոչենք Ստեփանոս քահանա Սկևռացի կամ պարզապես **Ստեփանոս Սկևռացի**):

⁹³ Հիշատակարաններ, ԺԳ դ., էջ 802: Մատենադարան, ձեռ. N 780, էջ 251ա, 351բ, 227բ, 71ա, 9ա: Ձեռագրի առաջին մասի գրիչը Սմբատն է, ԺԱ պրակից գրել է Իրիցորդին:

⁹⁴ Հիշատակարաններ, ԺԳ դ. էջ 419-420: Ձեռագիրը գտնվում է Կ. Պոլսի Պալաթիո Ս. Հրեշտակապետաց եկեղեցում (N 20):

⁹⁵ Մատենադարան, ձեռ. N 180, էջ 497, Հիշատակարաններ, ԺԳ դ., էջ 750:

Հեթումի Ճաշոցում գլխավոր հիշատակարանից բացի կա մի հիշատակագրություն⁹⁶, որտեղ գրիչը դիմում է խմբագրողին, բայց դարձյալ իր անունը չի հայտնում:

Ճաշոցի գրչին հայտնաբերելու համար ձեռագրի գիրը համեմատեցինք Գևորգ Բաբունապետի Սկևռայի դպրոցում աշխատող նրան ժամանակակից և գործակից գրիչների Մատենադարանում պահվող ձեռագրերի հետ և համոզվեցինք, որ Ճաշոցի գրչությունը տարբերվում է Գևորգ Սկևռացու (Մատենադարան, ձեռ. N 3082), Ստեփանոս Իրիցորդու (Մատենադարան, ձեռ. N 1999), Ստեփանոս Գոյներիցանցի (Մատենադարան, ձեռ. N 179) և Ստեփանոս գրչի (Մատենադարան, ձեռ. N 180) ձեռագրերի գրությունից և նույնանում է Ստեփանոս քահանա Սկևռացու գրչությանը, որից Մատենադարանում վեց ձեռագիր է պահպանվում, գրված 1263, 1278, 1283, 1290, 1293 թվականներին (Մատենադարան, ձեռ.՝ 8590, 759, 630, 6764, 2630, 5784): Սրանք ընդօրինակված են Սկևռայում Ճաշոցը ավարտելուց (1286 թ.) առաջ և հետո: Նշանակում է Ստեփանոսն այդ ժամանակ ոչ նորուսում էր, ոչ էլ ծեր: Ճաշոցի գրչությունից երեք տարի առաջ Ստեփանոս քահանա Սկևռացին Կեռան թագուհու պատվերով մի Ավետարան էր գրել: Ճաշոցը գրված է նույն բոլորգրով: Բոլորգրով են գրված նաև Ստեփանոս Սկևռացու և Սկևռայի վերևում հիշված գրիչների ձեռագրերը: Սակայն մանրախույզ քննությամբ հնարավոր է լինում տարբերել նույնիսկ միևնույն ժամանակում նույն գրչության կենտրոնում աշխատած տարբեր գրիչների ձեռագրերը, որովհետև յուրաքանչյուր անհատ գրում է իր սեփական ձեռքով, սեփական ոճով, գիրը տեսնում և վերարտադրում է յուրովի:

Գրչության մեջ այդ յուրովին ավելի տեսանելի է լինում առանձին, հատկապես դժվարագիծ տառերի գրության ժամանակ: Հարցի լուծմանն օգնում են նաև գրչության արվեստի որոշ տարրերի զուգադրումն ու համեմատությունը, որոնք յուրաքանչյուր գրչի մոտ արտահայտվում են ոչ միշտ միատեսակ: Այս, անշուշտ, հեշտ գործ չէ, և միշտ հնարավոր չի լինում ձեռագրի այս կամ այն գրչին պատկանելը

⁹⁶ «Համբարձմանն առաւաւտուն և ճաշոյն կարգն գրեալ է ի մայիս ամիս ԿԷ համարն, գիտ և կարդայ, և մի մեղադրեր, զի գործքոյ յետոյ գրեցի և ի յանանցն ի կարգն դրի» (Մատենադարան, ձեռ. N 979, էջ 279ա):

որոշելը: Այստեղ, բարեբախտաբար, գործին օգնեց Մատենադարանի հավաքածուում Սկևռայի գրիչների ընդօրինակությունների առկայությունը և դրանց իրար հետ համեմատելու հնարավորությունը, որը մեզ բերեց այն համոզման, որ Հեթումի Ճաշոցի գրիչը Ստեփանոս Սկևռացին է, որին հանդիպում ենք 1263-1295 թվականներին: Նա 1260-1290-ական թվականներին Սկևռայի ամենանշանավոր գրիչն էր, որին պատվեր էին տալիս ոչ միայն թագուհին և արքայորդին, այլև ուրիշ գրչակենտրոններից գրիչներ, Սկևռայի դպրոցի աշակերտներ, ուսուցիչներ և այլք:

Մեր համոզմունքը ակներև դարձնելու համար, ներկայացնում ենք վերոհիշյալ գրիչների Մատենադարանում պահվող ընդօրինակություններից առանձին նմուշներ, հնարավորություն տալով հետաքրքրվողին անձամբ համեմատելու և համոզվելու մեր տեսակետի մեջ: Ուստի հրավիրում ենք ընթերցողի ուշադրությունը մասնավորապես «ջ» տառի գրչության վրա (Տախտակ...) ⁹⁷:

Առաջին տախտակում Ճաշոցից բերված նմուշը համադրված է Սկևռացու նրանից առաջ և հետո ընդօրինակված ձեռագրերի նմուշների հետ, իսկ երկրորդում, Ճաշոցի նույն նմուշը՝ Ստեփանոս իրիցորդու, Ստեփանոս գրչի, Ստեփանոս Գոյներերիցանցի և Գևորգ Սկևռացու կատարած ընդօրինակությունների հետ: Ընդ որում, որքան հնարավոր է եղել, ընտրել ենք միևնույն հատվածը, նկատի ունենալով հատկապես դժվարագիծ «ջ» տառի առկայությունը: Յուրաքանչյուր տախտակի նմուշների համադրությունից և երկու տախտակների միմյանց հետ համեմատելուց երևում է, որ Ճաշոցի գրիչը Ստեփանոս Սկևռացին է: Իսկ սա կրկին վկայում է, որ Ճաշոցը գրվել է Սկևռայում, որովհետև Ստեփանոս Սկևռացին շուրջ չորս տասնամյակ այդտեղ էր աշխատում:

Ստեփանոս Սկևռացին Ճաշոցը գրելիս սերտ համագործակցության մեջ է եղել Գևորգ Սկևռացու հետ, և շարժվել է նրա ցուցումներով՝ Հայոց գրատեսակների օգտագործման, կիրառման ժամանակ: Այս բանը երևում է Ճաշոցի և Կեռան թագուհու պատվիրած (որը ժամանակով՝ 1283 թ. ավելի մոտ է Ճաշոցին) և մյուս ձեռագրերի համեմատությունից:

⁹⁷ Արտաշես Մաթևոսյանը կազմել է «Ճաշոցում» և այլ ձեռագրերում առկա «ջ» տառի համեմատական տախտակը, սակայն նրա արխիվում, ցավոք, այն չգտանք: Ամեն դեպքում, այս հարցով խորությամբ

Գրչության և զարդագրության առանձնահատկություններ

Ճաշոցը գրված է այսպես. տոների մասին տեղեկությունները (օրերի, սրբերի, սաղմոսների թվի, կցուրդի, ընթերցվածի հատվածների մասին ցուցումները, կամ արարողության բացատրությունները) կարմիր թանաքով՝ մանրագիր բոլորգիր: Ընթերցվածը սկսվում է զարդագրով և տողը լրացվում է ոսկեգիր երկաթագրով, կամ բոլորակ գրով, երբեմն այս երկուսը միասին, որին հաջորդում է մի տող ոսկեգիր բոլորգիր, և բնագիրը շարունակվում է նույն գրով, բայց սև թանաքով:

Մյուս ընթերցվածները շարահարելիս կարմիր բոլորգրով ցուցումներից հետո, զարդագրի տողը լրացվում է ոսկեգիր բոլորակ գրով կամ երկաթագրով, և շարադրվում սև բոլորգրով, առանց ոսկե բոլորգիր տողի: Ընթերցվածների տների և աղոթքների պարբերությունների գլխագրերը նույնպես ոսկեպատ են, որոնց թիվը հասնում է մի քանի հազարի, իսկ ոսկեգիր տողերի քանակը՝ ավելի քան հազար երկու հարյուրի, որոնք ցրված են ողջ ձեռագրի էջերում: Ընդ որում երկաթագիր, աղյուսագիր տողերը և գլխագրերը՝ գրել է կարմիրով, որոնք հետո ոսկեպատվել են:

Ստեփանոս գրիչը խստությամբ չի պահպանել գրադարձի օրենքը, որը հավանաբար Ճաշոցի գրությունից հետո, մշակեց Գևորգ Սկևռացին (վերջինս աշակերտական ընդօրինակության (1268 թ.) մեջ նույնիսկ այն պահպանված է): Ձեռագիրը գրելիս, գրիչը բաց է թողել զարդագրերի տեղը, որոնց մեծությունը հինգ տողագծերի մեջ է տեղավորվում: Ամենայն հավանականությամբ զարդագրերն ունեցել են մոտավոր կաղապար-օրինակներ, որոնց հիման վրա տեղերը բաց են թողնվել և հետո նկարվել են: Այս երևում է նրանից, որ որոշ զարդագրերի տեղերը բաց են թողնվել, բայց մոռացել են զարդագրել, ուստի այդպես էլ մնացել են⁹⁸: Բաց են մնացել նաև մի գլխագիր⁹⁹:

գրադվող մասնագետների համար դժվար չի լինի հիշյալ տառի գրության համեմատությունը: **Ծան. - Կ. Մ.**

⁹⁸ Մատենադարան, ձեռ. N 979, էջ 52ա. բաց է թողնված «Զ» զարդագիրը, էջ 55ա՝ կիսանկար «Ա», էջ 57ա՝ «Վ», էջ 203ա՝ «Ե», 270ա՝ «Ե»:

⁹⁹ Մատենադարան, ձեռ. N 979, էջ 239ա. վեցերորդ տողում բաց է մնացել «Յ» գլխագիրը:

Ընթերցվածների բուն բնագրային տնահամարները նշված են շղագրով: Փաստորեն, Հեթումի Ճաշոցում մենք ունենք Մեսրոպ Մաշտոցի ստեղծած բոլոր չորս գրատեսակները (աղյուսակ գիր, երկաթագիր, բոլորգիր, շղագիր) և երկաթագրի հենքի վրա ԺԱ դարում առաջացած զարդագիրը:

Արտակարգ հարուստ է զարդագրված Հեթումի Ճաշոցը, մոտ հազար զարդագիր, շուրջ հիսուն մարդագիր, 550 թռչնագիր, գազանագիր, 380 ծաղկագիր և ոճավորված գրեր: Հայոց այբուբենից միայն վեցը (Է, Ղ, Չ, Ջ, Ռ տառերն այստեղ չունեն զարդագիր, մնացած երեսունը՝ ունեն, որոշ տառեր նույնիսկ հարյուրավոր նմուշներով (Է-300, Ա-201, Զ-73, Ռ-71 և այլն):

Զարդագրեր կան, որոնք ձգվում են ամբողջ էջով կամ կես էջով մեկ: Նույնիսկ էթե որոշ տառեր կաղապարային արտաքին չափուձևային նմանություն ունեն, ապա տարբերվում են իրարից տառակողերի զարդանկարչությամբ, գծերով ու գույներով, ելուստների ձևերով:

Զարդագրերը ավելի շատ կենտրոնացված ենք տեսնում Ճաշոցի երկրորդ կեսում, որտեղ նվազում են լուսանցազարդերը, և զարդագրերը մասամբ աշխատում են լրացնել նրանց պակասը, պահպանել ձեռագրի զարդարվածության աստիճանն ու մակարդակը:

Եթե գրիչների սեփական մակագրություններով մեզ հասած գրչանմուշների համադրությամբ հնարավոր եղավ զանազանել նրանց տարբերությունները և հաստատել Ճաշոցի գրիչ Ստեփանոս Սկևռացու ինքնությունը, ապա նույնը անել չենք կարող մանրանկարչի ինքնությունը որոշելու համար, որովհետև Ճաշոցի և նրա խմբի ոչ մի ձեռագրի նկարչի մակագրությունը չկա, ոչ թե չի պահպանվել, այլ չի մակագրվել:

Բայց այստեղ ունենք մի այլ, ոչ սակավ կարևոր գործոն: Եթե Սկևռայում Հեթումի Ճաշոցը գրել կարող էին վերը նշված բոլոր հինգ գրիչներից յուրաքանչյուրը, ապա նկարել կարող էր միայն նա ով նկարիչ էր, նա, ում մասին գիտենք որպես այդպիսին: Իսկ այդպիսին, ինչպես առայժմ մեզ հայտնի է, միայն Սկևռայի դպրոցի րաբունապետ և արքայորդու բարեկամ Գևորգ Սկևռացին էր, որը «գեղազարդ շքով» նկարել էր Աստվածաշունչը «գոր տեսողաց և վայելողացն յայտնի է» և որը

հաստատվում է նրա աշակերտ և գուրծակից Մովսես Երզնկացու և այլ վկայություններով:

Այժմ ծանոթանանք Գևորգ Սկևռացու գործունեությանը, որպեսզի տեսնենք թե երբվանից և ինչով էր կապվում Սկևռայի վանքին ու դպրոցին, ինչ հարաբերության մեջ էր Լամբրոնի տեր արքայորդի Հեթումի հետ, և Սկևռայում ստեղծած ինչպիսի մանկավարժական-գրչական-մատենագրական վաստակ ունի:

Գևորգ Սկևռացի բաբունապետ

Գևորգ Սկևռացու մասին պահպանվել են նրան նվիրված երեք վարքագրական երկ¹⁰⁰ (որոնց հիման վրա կաշխատենք պատասխանել վերը առաջադրված հարցերին): Գևորգ Սկևռացին ծնվել է 1246 թվականին, Լամբրոն դղյակում, Առաքելի և Մլքեի ընտանիքում: Հինգ տարեկան հասակում ծնողները նրան հանձնում են քեռուն՝ Սկևռայի դպրապետ Գրիգոր Սկևռացուն, որի մոտ վարժվում է սուրբ գրքի ընթերցանության և գրչության արվեստի մեջ, ընդ որում՝ «գրչութեան արուեստի զգիշերն տիւ առնէր»¹⁰¹: Գրիգորը եպիսկոպոս դառնալուց հետո (1256 թ.) տասնամյա Գևորգին հանձնում է Մխիթար Սկևռայի բաբունուն, որը «երևելի էր գործով և բանի և հմուտ արտաքին փիլիսոփայիցն... քաջաբան և նրբախօս, և ուղիղ բանիւ կործանիչ հերետիկոսաց...»¹⁰²: Մխիթարի մոտ, որը հետագայում դառնում է Սկևռայի ուխտի առաջնորդ, Գևորգը սովորում է ութ տարի և ձեռնադրվում սարկավագ: Այդ ժամանակ վախճանվում է Գրիգոր Սկևռացին, քեռու հակառակորդների հալածանքներից զերծ մնալու և ուսումնասիրությունը շարունակելու համար

¹⁰⁰ Առաջինը Սկևռացու աշակերտ Մովսես Երզնկացու հորինած դրվատն է. «Դրուատ բանի սուղ ինչ պատմագրաբար երջանիկ բաբունապետն և ի քաղցրաբարբառ վարդապետն Գևորգ Լամբրոնեցի» (Ղ. Ալիշան, Մխուսան, էջ 104-105, նույնի՝ Հայապատում, Բ, էջ 504-507): Երկրորդը և ամենաընդարձակը վարքն է, «Պատմութիւն վարուց եւ երջանիկ եւ տիեզերալոյս Բաբունոյն Գևորգեայ ծնընդեանն եւ սնընդեանն եւ գերահրաշ կատարմանն յունուարի ի ԺԱ»: Բնագիրը ուսումնասիրությամբ հրատարակել է Է. Բաղդասարյանը (Գևորգ Սկևռացու «Վարքը», «Բանբեր Մատենադարանի», N 7, Երևան, 1964, էջ 399-410, 410-435) Մատենադարանի 8356 ձեռագրից (էջ 193բ-229բ): Հմմտ. Ն. Պողոսյան, Ցուցակ Երուսաղեմի՝ Ա, էջ 306, «Պատմութիւն վարուց երջանիկ և տիեզերալոյս Բաբունոյն Գևորգեայ...» և այլն: Եվ երրորդը՝ Հայսմավուրբում» մուծված նրա Վարքն է (Հ. Տաշեան, Մայր ցուցակ մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 46):

¹⁰¹ «Բանբեր Մատենադարանի», N 7, էջ 405:

¹⁰² Անդ, էջ 414:

տասնութամյա պատանին մեկնում է Հայաստան: «Գնաց յԱրևելս՝ առ երջանիկ րաբունին Վարդան և աշխատասիրաբար ելից զթերին իւրում գիտութեան: Եւ կատարեալ ի սուղ ժամանակս եհաս իմաստից Սուրբ Գրոց հնոց և նորոց մեկնութեան, և զքահանայականն էառ պատիւ ճոխութեան, այլ և արտաքնոցն, որք են ճեմական Արիստոտելի, Պիթագորեանց, և Պղատոնեան և որք նոցունց գտան միաբան»¹⁰³:

Այդ պետք է տեղի ունեցած լինի 1264 թվականին: Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում է Գևորգ պատանու Խոր Վիրապում սկսած, Մաղմուսավանքում շարունակած և Թեղենիքում 1267 թ. ավարտած Տոնապատճառը: Հիշատակարաններում հանգամանորեն նշվում է այդ մասին¹⁰⁴:

Դրանից հետո, Գևորգ Սկևռացին վերադառնում է Կիլիկիա, վարքագրի խոսքերով՝ «Զամենայն պիտանի ծաղիկս պտղովքն հանդերձ ամբարեալ, դարձաւ ի բնիկ աշխարհն իւր... եկն յԱրևելից ոչ դատարկաձեռն, այլ երևելի պատարագ ընծայից ունելով ճոխ և ճեմ գիտութեամբ յինքն ամբարեալ...»¹⁰⁵ : Դա տեղի է ունենում Վարդան Արևելցու մահից հետո, այսինքն՝ 1271-1272 թվականներին:

¹⁰³ «Եւ եղաւ աւարտ գրչութեան սորա ի ձեռն տարաշխարհիկ պատանոյ ումեմն թարմատար գրչի Գեորգայ ի Կիլիկեան նահանգէն, յանմատչելի ամրոցէն Ղամբրաւն կոչելոյ, որ է ստորոտ մեծի ի լերինն Տաւրոսի, ուր ոչ եթէ իբրու ճարտար գոլով յարիեստ գրչութեան՝ յանձնապաստան համարձակութեամբ ձեռնամուխ եղն ի գործ, որ ի վեր էր քան զկար նորա, այլ գոլով խնամա վայելեալ՝ նախայիշեցեալ արանցս փառաւորաց և անիճահ վարկուցեալ զանց առնել զպատկառեցուցիչ հրամանաւ սոցին... սատարութեամբ նժդեհակցի պանդրխտութեանն իւրոյ և դաստիարակի անկատարութեան Յովհաննու քահանայի» (Անդ, էջ 416): Այս մասը գրված է Գևորգ Սկևռացու ձեռքով, բայց երրորդ դեմքով, ահա և գրչության հանգամանքների մասին հատվածը. «Բայց առաջին սկիզբն գրութեան սորա եղն ի տիեզերահոչակ սուրբ ուխտն **Վիրապին**... ուրանոր և մեզ ժամա(նակ) ինչ դեգերել ի դուռն աստուածագարդ այնր տաճարի սակս կրթութեան (մերոյ) ի մեզ վարդապետէն և յաստուածագեաց առնէն **Վարդանայ**, որ (ընդ) այն ժամանակս ի վերայ ամենայն մասանց բարեաց, որով բոլորն (կա)տարի առաքինութիւն, և զուսուցապետութեանն ևս զգործի յիւր արկեալ ընդ առնելն լծակցելով, որ ի դուռն Սրբոյն Գրիգորի նստելով, զամենայն եկեալսն յաստուածայինն ուղղէր ճանապարհ: Եւ անտի փոխեալ եկեալ առ մեծ իշխանն **Քուրդ**, և մեր զկնի նորա հետեւեալ ժամանակ (ին)չ արարաք յանուանեալն **Մաղմուսավանք**, ուր և զառաջին աւարտեցաք հատոր սրբոյ մատենիս: Եւ քանզի և դէպ լինել և անտի փոխել նմա ի գործ բարոք ուսուցչութեանն, ի տեղի ուր տէր յաջողեսցէ յուղարկեալք եղեալ մեր ի ստացողէ տառիս ի բուն տունս իւրեա(նց) մեծահոչակ հրեշտակակրան աստուածաբնակ սուրբ ուխտս **Թեղինեաց**, ուր և յանկ իսկ հանաք զառաջարկեալս՝ բարոք ընկալեալ զմեզ բարեբարոյ և սրբասէր քահանայի Մարգսի սիրով և յաւժարամիտ կամաւք սպասաւորելով...» (Մատենադարան, ձեռ. N 3082, էջ 477ա):

¹⁰⁴ Մատենադարան, ձեռ. N 3082, էջ 476:

¹⁰⁵ «Բանբեր Մատենադարանի», N 7, էջ 416:

Այստեղ անհրաժեշտ գիտելիքներ ամբարած երիտասարդն իրեն նվիրում է քարոզչության¹⁰⁶: Շուտով նա «յայտնի եղև մեծամեծաց և փոքունց, հայրապետին և եպիսկոպոսացն, թագաւորին և իշխանացն», որոնցից յուրաքանչյուրն ուզում էր օգուտ քաղել նրա իմաստությունից և արվեստից, որը նրա սիրելի մասնագիտությունն էր, որով նաև պահպանում էր իր գոյությունը. «Ձի ոչ ումեք ծանրանայր, այլ միշտ գրչութեան արուեստիւ զմարմնոյ պետսն պատրաստէր»¹⁰⁷:

Աստիճանաբար նրա մոտ են հավաքվում ուսումնասեր ծանոթ մարդիկ և խնդրում դասավանդել, «զի զսուրբ և զաստուածային իմաստս ծաւալեաց է ուսումնասիրեաց և գիրս ի ձեռս առեալ զլուծումն յայտնութեամբ խնդրէին»: Բայց որովհետև նա սիրում էր ճգնավորական կյանք և լռության մեջ գործել, իսկ ուսումնասերները չէին դիմանում թափառումներին, կրկին հավաքվելով ուսուցչին հարկադրում են հիմնավորվել որևէ տեղ վախեցնելով, թե «դատախազք լինիմք առաջի Տեառն, եթէ ոչ հաւանիս աղաչանացս»¹⁰⁸: Գևորգ Սկևռացին հիմնադրում է իր դպրոցը՝ սկզբում «մի անվայելուչ» (ոչ հարմարավետ) տեղում, հետո՝ Սկևռայի վանքում:

Գևորգ Սկևռացուն սիրում և գնահատում է Լևոն Բ թագավորը, նրան համարելով ճշմարիտ և ուղղադավան վարդապետ, հաշվի էր նստում նրա հետ: Հեթում արքայորդին, երբ արդեն Լամբրոնի տերն էր, նույնպես սիրում էր Գևորգ Սկևռացուն և քաղցրութեամբ լսում նրան: Սակայն թագավորը որդու դաստիարակությունը հանձնել էր արքունիքին մոտ կանգնած բանիբուն և ճարտասան Վահրամ րաբունուն, որն «ունէր զաղանդ քաղկեդոնական, ապականել դեղեաց Հեթում՝ Տեր Լամբրոնին»:

Լևոնի կենդանության ժամանակ և նրա մահից հետո, իր թագավորության առաջին տարիներին Հեթումը լսում էր Գևորգ Սկևռացուն: Վարքագրի վկայությամբ, հոր մահից հետո Հեթումը «սկսաւ յայտնել փոքր ինչ յուսմանէ չարափառութեանց, և սուրբս Գևորգ աստուածիմաստ խրատովն յետս նահանջեաց եւ բազում հպատակութեամբ լսէր սրբոյս և խոնարհէր ի բանս նորա, որպէս զհայրն իւր... եւ

¹⁰⁶ Անդ, էջ 417:

¹⁰⁷ Անդ, 418:

¹⁰⁸ Անդ:

տեղեակ ևս էր գրոց և միշտ ջանայր զինքն ճշմարիտ ցուցանել... բայց ի սրբոյս երկնչէր... եւ սուրբս խոնարհ և աննենգ բանիւ խոռվեալ սիրտն բժշկէր»¹⁰⁹:

Թե ինչպէս զարգացան այնուհետև Հեթում Բ թագավորի և Գևորգ Սկևռացու հարաբերությունները, հայտնի բան է, որին մասամբ կանդրադառնանք: Սակայն, մինչև այստեղ, Գևորգ Սկևռացին հեղինակություն էր Լամբրոնի տեր Հեթումի համար և խորհրդատու: Նրանք հաշտ են և խաղաղ, որը տևեց ընդհատումներով, նաև հետագայում. «նաև որ տիրէրն աշխարհին՝ Հեթում խնդամտութեամբ և սիրով, և խոնարհ պարանոցն դնէր առաջի սրբոյն և անհնարինքն յիշխանութեան իւրում սրբոյն խնդրելովն՝ հնարաւոր լինէր: Զի բազմաց անձինք ի մահ մերձեալ նովաւ փրկէր և այլոց պարտուց թողութիւն շնորհէր»¹¹⁰:

Գևորգ Սկևռացու որպէս գիտնականի համբավը տարածվում է ողջ Կիլիկիայում: Հովհաննէս Արքայեղբայր բաբունապետը նրանից խնդրում է գրել «Մեկնութիւն Գործոց առաքելոց»¹¹¹ և «Դրուատ»¹¹² գրված 1283 թվականին, որը կարելի է համարել նաև նախորդի գրության թվականը:

Գևորգ Սկևռացու ղեկավարությամբ Լևոն թագավորի ու Կեռան թագուհու հոգատարությամբ ծաղկող Սկևռայի դպրոցը այժմ արդեն Սկևռայի տեր Հեթում արքայորդու նախանձախնդրությամբ դառնում է Կիլիկիայի ամենանշանավոր մշակութային կենտրոնը, որտեղ մշակվում է գիտությունը, կատարելագործվում է գրչությունը, մանրանկարչությունն ու երաժշտությունը, մատենագրությունը, գրվում են մեկնություններ, լուծմունքներ, բանաստեղծություններ: Այդտեղ մշակվում է գրչության արվեստի քերականական տեսությունը¹¹³ գեղեցիկ գրելու, գիրքը ճաշակով

¹⁰⁹ Անդ, էջ 421:

¹¹⁰ Անդ, էջ 426:

¹¹¹ Մատենադարան, ձեռ. N 4119, էջ 3ա. Մեկնութիւն գործոց առաքելոց համառօտիւ, Գեորգեա Սկևռացոյ արարեալ. Առ խնդրողն համառօտիւ տէր Յոհաննէս Արքայեղբայր՝ եպիսկոպոս նահանգաց աստուածապահ ղրդեկին Մովկոնի և մասին ինչ Բարձրբերդոյ և նոյն տեսուչ հռչակելի սուրբ ուխտին Գոներոյ և առ հանդիպեալսն մատենիս:

¹¹² «Դրուատ ի սուրբ առաքեալն և աւետարանիչն Յոհաննէս, ի պատկառելի խնդրոյ Յոհաննու եպիսկոպոսի, եղբար բարեպաշտ արքային Հայոց Հեթոյ, ի թուականին ՉԼԲ (1283) Գեորգեայ մեծի և յոքնալոյս վարդապետի ասացեալ Սկևռացոյ» (Ն. Պողարյան, Յուցակ Երուսաղեմի... հ. Ա, էջ 306):

¹¹³ «Գեորգայ վարդապետի արարեալ ի խնդրոյ Ստեփանոսի մականուն Գոյներերիցանց Կայթառանցոյ մեղսաներկ անձին,

(ա) խրատ վասն հանգամանաց հեզից, որ և պատճառն իսկ է գրադարձին յարուեստ գրչութեան,

(բ) խրատ վասն առողանութեանց

ձևավորելու արվեստը, որոնց օրինակը տալիս էր Գևորգ Սկևռացին. «Զի էին բանք սրբոյն նման ոսկւոյն... և լեզուն՝ հրեղէն, և ի քերս բանից և բառից և գծից՝ իբր անմարին (անմարմին)»¹¹⁴: Գևորգ Սկևռացին այդ ժամանակ, ոչ միայն Աստվածաշնչի նախադրություններն ու ցանկերն է հորինում, այլև նկարագարում է սքանչելի կերպով. «զի ի բոլոր Աստուածաշունչ գիրս կարգեայ նախադրութիւնս և ցանգս գլխաւք յարինեալ... և **գեղագարդ շքով նկարեալ, զոր տեսողացն և վայելողացն յայտնի է**»¹¹⁵, - գրում է վարքագիրը: Իսկ Մովսէս Երզնկացին իր ուսուցչին նվիրված «Դրուատ»-ում փառաբանում է. «գծեր և կանոնս կարգաւորս... առնէր համարս գլխոյ և ցանկք և նախադրութիւնս Աստուածաշնչից տառից»¹¹⁶:

Գևորգ Սկևռացին որպէս նկարիչ

Գևորգ Սկևռացին նկարիչ էր, բայց նկարելու մասին նշում կատարելու սովորություն չունէր, ինչպէս ավելի վաղ գրիչները, «գրիչ» մասնագիտության մեջ տեսնելով նաև նկարչին: Իսկ գրչության մեջ նա ոչ միայն արվեստի տեսությունն է շարադրում, այլև մշակում է գրատեսակների ու զարդագրերի օգտագործմամբ էջը ձևավորելու եղանակ: Եվ այդ բանը շատ են գնահատում նրա աշակերտները, վարքագիրները, արվեստասերները, վայելողները: Մովսէս Երզնկացին շարունակում է.

«Ծնանէր ծնունդս միշտ հոգևոր

Զարդինարարն և շնորհաւոր.

Մակեռակի տառիւք պճնէր,

Հրաշիւք բանիցն զարդարէր,

Գրախեցիս հմտաւորէր,

Դարձմամբ ըզնոյն ծանուցանէր,

(գ) խրատ գրչութեան, զոր արարեալ էր զսա յառաջագոյն Գեորգայ վարդապետի ի խնդրոյ ուրումն, զորոյ զպակասն ի նմանէ յետոյ կամ ի վարդապետէն խնդրեալ, և նա կատարեաց զխնդրուածս իմ» (Մատենադարան, ձեռ. N 2371, էջ 132բ-162ա):

¹¹⁴ «Բանբեր Մատենադարանի», N 7, էջ 470:

¹¹⁵ Անդ, էջ

¹¹⁶ Ղ. Ալիշան, Միսուան, էջ 103: Հ. Ոսկյանը մեջ բերելով այս հատվածը գրում է. «Անոր նկարչական և գրչական արուեստին կը հային... սա տողերը» (Հ. Ոսկանյան, Կիլիկիայի վանքերը, էջ 36):

Բարի բաշխմամբ զբանն ողորկէր,

Կարգաւ ըզնոյն ուսուցանէր:

Թելադրութիւն տայր արհեստի

Գրոյ և բանի յամենայնի»¹¹⁷:

Գևորգ Սկևռացին, միշտ «հոգևոր ծնունդներ» այսինքն գրքեր էր «ծնանում», օգտագործելով երեք տեսակ տառ, ավելացրած մանրագիրը՝ ցանկերում, նախադրություններում և վերնագրերում և նկարագարում էր «բանը» (բովանդակությունը, բնագիրը): Մովսէս Երզնկացին կարծես աչքի առաջ ունի որոշակի ձեռագիր, երբ նկարագրում է.

«Զաչերս յառէր յաւէտ ի լոյս

Զմատունս շարժէր ի գործ պիտոյս,

Իբրև զհօրանս հոտից այծից

Միշտ յօրինէր զշարքս տողից,

Եռակի կերպիւ կազմէր

Գեղապաճոյճ յաւէտ գործէր

Բոլորակ և աղիւսակ,

Եւ զվերջագիր տառս հրեշտակ,

Գեղեցիկ և հրաշալի,

Եւ պճնագարդ յամենայնի»¹¹⁸:

Այստեղ էլ գրի ու էջի պճնագարդման մասին է խոսքը:

Իսկ Գևորգ Սկևռացու վարքի մի այլ շարադրող գրում է. «Առնէր եւ զարուեստս գրչութեան գեղեցիկ եւ ճարտարութեամբ, քան զի ազնիւ էր եւ արագ առ ի գրել, ըստ նմանութեան Եւագրեա:

Զբոլորակ զիր հայրենի,

Եւ զաղիւսակ հին տառ յարգի,

Նաեւ զճոխ վերադասի,

Որ համայն իցէ բաղձալի.

¹¹⁷ Ղ. Ալիշան, Միսուան, էջ 14:

¹¹⁸ Անդ:

բազմաց առներ արդիւնս եւ յոլովից գրէր տառս գեղեցիկս, ոչ միայն ընկերակցաց, այլ և մենաստանից»¹¹⁹:

Ուրեմն, Գևորգ Սկևռացին զարդարում էր «բանը», առանձին ամբողջական էջերում կամ սյունակներում, ինչպես նաև լուսանցանկարներում՝ յուրաքանչյուր ընթերցվածի բովանդակությանը համապատասխան, կամ «բանի» հեղինակին նկարելով, հմտավորելով զարդագիրը լուսանցազարդելով: Սրանցից բացի, գլխազարդերն էր նկարազարդում («ճոխ վերադասի») և բոլոր զարդագրերը գունազարդում:

«Վերջագիր տառեր» են կոչվում բոլոր զարդագրերը, որովհետև նրանք գեղեցիկ և հրաշալիորեն նկարազարդվում են ձեռագրի բնագիրը ընդօրինակելուց հետո, գրվում են վերջում՝ «վերջագիր» կամ վերևում՝ դարձյալ վերջում: Այն «հրեշտակ, հաճելի» են անվանում, քանի որ ձեռագրի զարդանկարչությունը ամենահաճելի տարրն է (մի էջ գրելն ավելի դժվար է, քան մի զարդագիրը): Ժամանակակիցների, ականատեսների-գործընկերների ու աշակերտների վկայությունները, և այն խոստովանությունները, որ նա Աստվածաշունչ է նկարազարդել, և ոչ մի տեղ չի հիշել իր նկարիչ լինելու պարագան, թույլ է տալիս պնդելու որ Գևորգ Սկևռացին նաև նկարել է:

Ականատեսների այս վկայությունները, որոնք վերաբերում են Գևորգ Սկևռացու գրչության արվեստին մեզ ներկայացնում են միջնադարյան հայ գրչության արվեստի կարկառուն ներկայացուցիչներից մեկին, որը արվեստին տիրապետում էր ոչ միայն «տեսականաւ», այլև «գործնականաւ» գրչության արվեստի տեսաբան, գրիչ, մանրանկարիչ, երաժիշտ: Սակայն, առ այսօր մեզ հայտնի են նրա տեսական գործերը, իսկ գործնականները՝ ոչ, բացառությամբ Խոր Վիրապում ընդօրինակած Տոնապատճառի և 1392 թ. ընդօրինակած մի Ավետարանի, որի գլխազարդերն ու լուսանցազարդերը միայն գծած են և չեն գունավորված: Ավետարանիչների նկարները գունավորված են հետագայում¹²⁰:

¹¹⁹ Հ. Տաշյան, Մայր ցուցակ մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 46:

¹²⁰ Հիշատակարաններ, ԺԳ դ., էջ 692:

Գևորգ Սկևռացին գրել է բանաստեղծություններ, գանձեր, հորինել է եղանակներ: Հետաքրքրական է, որ գանձերը գրել է Սկևռայի փիլիսոփա, ասել է թե երաժիշտ աշակերտների և նրանց ուսուցիչների պատվերով¹²¹:

Սկևռայի դպրոցում երաժշտությանը մեծ տեղ հատկացնելու վկայություն է նաև այն խազգրքերի ընդօրինակությունները, որոնք, ինչպես տեսանք, կատարում էր Ստեփանոս քահանան տեղի աշակերտության համար:

Բացի այդ, Գևորգ Սկևռացին ուղղել, ճշգրտել է շարականները, այսինքն վերացրել է առոգանության նշանների և երաժշտական խազերի շփոթը¹²², որ տեղի էր ունեցել խազագրության արվեստին անտեղյակ, անվարժ գրիչների անտեղյակության պատճառով:

Մեր հետապնդած նպատակի համար ավելի կարևոր են Աստվածաշնչի ցանկերի և նախադրությունների հորինման հանգամանքները¹²³:

¹²¹ «Քարոզ Վարդապետ Ս. խաչին, ի խնդրոյ Տեառն Սիմեոնի Սկևռայի մեծի ուխտին առաջնորդի, ի **Գեորգեայ վարդապետէ Լամբրոնցոյ և Սկևռացոյ**: Գանձի տների առաջին տողերի սկզբնագրերը հոդում են. «Գեորգեա բան» (Ն. Պողարյան, Յուցակ Երուսաղեմի, հ. Զ, էջ 285): Ի դեպ Գևորգ վարդապետի «Լամբրոնացի» և «Սկևռացի» կրկին մականուններով կոչվելը նշան է, որ նա նոր է հիմնավորվել Սկևռայում, որի համար կոչվում է Սկևռացի և դեռ չի անցել ծննդավայրի անունով Լամբրոնացի կոչվելու սովորությանը: Այդ ժամանակ նա գրում է այլ գանձեր դարձյալ Սկևռայի միաբանների խնդրանքով. «Գեորգեա վարդապետի Լամբրոնցուն ոգեալ քարոզ սրբոյն Բարսղի ի խնդրոյ քահանայ Թորոսի» (Ա. Սյուրմեյան, Յուցակ Հալեպի... հ. Ա, էջ 244) (Այս Թորոսն էլ Սկևռայի մի այլ աշակերտի Կոստանդնի խնամարկուն է, որը 1275 թ. ստացավ մի Մանրուսմունք): «Քարոզ սրբոյն Սարգսի Զաւրավարի, ի խնդրոյ սննդակցի եղբոր Սարգսի փիլիսոփայի, ի Գեորգեայ վարդապետէ Սկևռացոյ», «Քարոզ սրբոյն Գեորգեայ զաւրավարի, ի խնդրոյ Գորգայ փիլիսոփայի, ի Գեորգեայ վարդապետէ» և այլն, և այլն, որոնց բոլորի նախագիծը «Գեորգեա բանց է» (Անդ): Հավանական է, որ սրանց ոչ բոլորի, բայց մի մասի եղանակը ինքը պետք է հորինած լինի, և պատահական չէ, որ նրանք բոլորը գրվում էին Սկևռայի փիլիսոփա (երաժիշտ) աշակերտների (Սարգիս, Գորգ) կամ նրանց նմանների ուսուցիչների (Սիմեոն, Թորոս) պատվերով, որոնց բաբունապետն էր Գևորգ Սկևռացին: Թերևս այս շրջանին (1270-ական թթ.) է վերաբերվում շարակնոցի հետ կապված նրա աշխատանքները:

¹²² Ղ. Ալիշանը Գևորգ Սկևռացու մասին Մովսեսի «Դրուատ»-ի վերաբերյալ գրում է. «Մոռանալ դրուատիչն կամ ոչ պարզապես յիշէ զմիւս եւս յոյժ պիտանի հասարակաց գործ, որ եւ յայտարար ստուգասէր եւ չափագիտակ հանճարոյ Գեորգայ. այն է ընտրութիւն եւ հաստատութիւն բանից եւ եղանակաց Շարականաց մերոց: Ծանոթ է բանասիրաց, զի ի ձեռագիր յիշատակարանս երգարանիս, անդստին ի սկզբանէ ԺԴ դարու ի յովմս նշանակի՝ գրեալ ըստ լաւ եւ ընտիր կամ ստոյգ օրինակին, որ կոչի **խլկցի** եւ յոմանս վկայի զի ընտրողն այս էր **«Գրիգոր՝ առաջին վարդապետ** Սսայ եւ **քաջ քարտուղար** մականուն **խուլ**: Արդ, Առաքել Սիւնեայ եպիսկոպոս ի Լուծմունս Մահմանաց Դաւթի Անյաղթի, ասէ. Ճշմարտեալ բանք երգոցս «Խլկցու օրինակն է, ի Շարականացն, զոր մեծ վարդապետն **Գեորգ ուղղեաց**, այն՝ որ զԵսայի մարգարէն մեկնեաց, ի խնդրոյ Հեթում թագաւորին, ի Սիս... զի արհեստն առոգանութեան խառնեալ լիցի ի երգսն, որպէս նոյն Խլոյն օրինակն է, զոր **սահմանեաց վարդապետն Գեորգ**» (Ղ. Ալիշան, Սիսուան, էջ 104-106):

¹²³ «Հին կտակարանի նախադրություններն ու ցանկերը գրել է Գևորգ Սկևռացի նշանավոր վարդապետը, ամենաուշը 1292 թվին, բայց գուցե նաև մի քանի տարի առաջ, միայն թե 1270

1280-ական թվականներին Գևորգ Սկևռացու գիտա-մանկավարժական-գրչական գործունեությունը Սկևռայի դպրոցում համընկնում է գրասեր Հեթում արքայորդու Լամբրոնյան տիրապետությանը, և արտահայտվում է ոչ թե տիրոջ (Հեթումի) և դպրոցի տեսուչի (Գևորգ բաբունապետի) պաշտոնական հարաբերությամբ, այլ իմաստուն խորհրդատուի և գահաժառանգ սանի հարաբերությամբ, որ նաև մշակութային համագործակցության մեջ էին միմյանց հետ: Բանասիրությանը ինչպես Սկևռացու վարքից, այնպես էլ հիշատակարաններից հայտնի է, որ նա հորինել է Աստվածաշնչի ցանկերն ու նախադրությունները: Սակայն անհայտ էր, որ այդ արվել է արքայորդի Հեթումի խնդրանքով:

Ահա այդ հիշատակարանը.

«...Մեղաւոր հողս Ստեփանոս Գոյներեքիցանց ցանկացայ ստանալ զԱստուածաշունչ գիրս ըստ կարի այս երկրորդ անգամ... Եւ քանզի լուսաւորիչն հոգւոյ իմոյ **մեծ վարդապետն Գևորգ փարթամացոյց զբովանդակ Աստուածաշունչ գիրսս՝ իրք ի խնդրոյ ուրուք, և իրք՝ յինքն յինքենէ շարժեալ: Զգլխահամարսն ոչ գիտեմ ով է խնդրել, այլ զնախադրութիւնսն պարոն Հեթում խնդրեաց արքայորդին և արարեալ զսա, զի խնդրողքն բանի ըստ պիտոյից ժամանակին զինչ կամիցին՝ ղիւրաւ գտանիցին: Վասն որոյ աղաչեմ զհանդիպողսդ սուրբ մատենիս միամիտ սրտիւ յիշել զվերոյգրեալքս՝ առաջին զօրինակին փարթամացոյցին և շնորհողն մեզ առատապէս զԳևորգ վարդապետ, և զծնողսն իւր, զհոգևոր հայրն իմ, և զԽաչատուր վարդապետն՝ ծնողիւք իւրովք ևս և զտառապեալ ոգիս՝ զնուաստ գրիչս և զծնողսն իմ և զուսուցիչսն իմ՝ ի Տէր... ԶԽԶ (1297) թուին աւարտեցաւ...»¹²⁴:**

Այս հիշատակարանից երևում է, որ մեծ վարդապետ Գևորգ Սկևռացին «փարթամացրել» է բովանդակ Աստվածաշունչը: Որոշ բան ուրիշների խնդրանքով, որոշ բան՝ իր ցանկությամբ է կատարել: Գլխահամարները անհայտ է թե ում

թվականից ոչ առաջ», գրում է Մ. Տեր-Մովսիսյանը և հնագույն օրինակը, որի մեջ հեղինակը առաջին անգամ հանդիպում է այդ ցանկերին և նախադրություններին, համարում է Ստեփանոս Գոյներեքիցանցի 1292 թ. ընդօրինակած (Մատենադարան ձեռ. N 179) Աստվածաշունչը («Նիւթեր Ս. Գրքի ուսումնասիրութեան», Արարատ, 1904, էջ 218):

¹²⁴ Մատենադարան, ձեռ 6273, էջ 60բ-61ա: Ձեռագիրը գտնվել է Եվդոկիայի սբ. Գևորգ եկեղեցում, 1865 թ. հունվարի 22-ին արտագրել է Ղ. Փիրդալեմյանը և մուծել իր «Նշխարք»-ում:

խնդրանքով է կազմել, ամենայն հավանականությամբ իր կամքով է, բայց «Նախադրությունները» կազմել է Հեթում արքայորդու խնդրանքով:

Ցանկերը և նախադրությունները Գևորգ Սկևռացին կազմել է իր աշակերտ Խաչատուրի Աստվածաշնչի վրա¹²⁵, որի սկզբը ինքը Խաչատուրն է արտագրել, Նոր կտակարանը՝ Ստեփանոս քահանան 1285 թ., իսկ մյուս մասը՝ Ստեփանոս Գոյներերիցանցը՝ 1288 թվականին:

Մեզ թվում է, սույն օրինակի վրա նախնական աշխատանքը ավարտելուց հետո Գևորգ Սկևռացին 1289-1291 թվականներին գրում և նկարագրում է մի Աստվածաշունչ, ցանկերով և նախադրություններով, որը և հայտնի է որպես «**Գևորգ Սկևռացու օրինակ**»: Այս բանի ապացույցն է այն, որ Ստեփանոս Գոյներերիցանցը 1292 թ. Աստվածաշունչ է ընդօրինակում Գևորգ Սկևռացու և Խաչատուրի օրինակներից («յորոց **աւրինակաց** և զգիրքս գրեցի») ¹²⁶: Այուհետև Խաչատուրի օրինակում Նոր կտակարանին հաջորդում են «Կանոն հաղորդութիւն տալոյ», «Կանոն մկրտութեան յորժամ քրիստոնեայ առնեն» (վերջից թերթ է պակասում և անհայտ է, թե էլ ինչ նյութեր կային)¹²⁷, որոնք «Մաշտոց» ժողովածուից են, այնինչ Ստեփանոս Գոյներերիցանցի օրինակում դրանց փոխարինում են այլ նյութեր, վերցված Գևորգ Սկևռացու օրինակից¹²⁸, ինչպես «Խրատք ընթերցմանց բովանդակ տարւոյն» (որի մեջ մեծ տեղ է հատկացված «Խրատք ըստ Ճաշոց գրոցն» նյութին), «Տաւնացոյց», «Աղաւթամատոյց», «Պատարագամատոյց» և այլն:

¹²⁵ Խաչատուրի օրինակի նկարագրության («Լոյս», 1906, էջ 1166-1172, 1191-1196, 1216-1221) քննությունը ցույց է տալիս, որ, հիրավի գլխավորությունները և նախադրությունները կատարված են ձեռագիրը գրելուց հետո, քանի որ նրանցից յուրաքանչյուրը գտնվում է ոչ թե համապատասխան գրքի սկզբում, այլ երբեմն մի քանիսը միասին, մի գրքի սկզբում, ընդ որում հաճախ վերջին գրքերինը՝ ավելի առաջ են դրված:

¹²⁶ Մատենադարան, ձեռ. N 179, էջ 562բ. «Յիշեսցիք ի Քրիստոս զհոգևոր հայրն իմ և լուսաւորիչ զԳէորգ վարդապետն և զհամական աշակերտ նորին, զԽաչատուր, յորոց **աւրինակաց** և զգիրքս գրեցի բազում խնամարկութեամբ ի նորանէ... թուականիս ՉԽԱ (1292)»:

¹²⁷ «Լոյս» Կ. Պոլիս, էջ 1168-1169:

¹²⁸ «Ի Գէորգ վարդապետին աւրինակէն գրեցի զսա: Եւ նա գտնվել էր թէ որք յընթեռնողն զսա այլափոխ բանիցն պատահեցէ՝ մի տգիտութեան վարկցի կամ անձնահաճութեան, և մի համարձակեցի յեղաշրջել բան ինչ, զի յաւրինակէ մեկնութենէն Տեառն Խոսրովու ուղղեցաք, որչափ գտաք զի նմանէ քննեալն» (Մատենադարան, ձեռ. N 179, էջ 511ա): Այս վերաբերում է Աղաւթամատոյցին: Պատարագամատոյցը վերջանում է այսպէս. «Ի Գէորգ վարդապետին աւրինակէն գրեցի զսա: Եւ նորա գրեալ էր, թէ մի հեղգութեան համարիք զոչ յաւելուլն ի սմա զհամբակագունից ոմանց զնորաձև բանից բարդումս... յիշեա զմեղաւոր հողս զՍտեփանոս...» (Անդ, էջ 555բ):

Հետաքրքրական է, որ 1300 թվականին Գևորգ Սկևռացին կրկին ընդօրինակում է Աստվածաշունչը և վերջում դարձյալ շարադրում «Ժամագիրք» (մասնակի), «Պատարագամատոյց» (ծանոթագրված «Մի որ մտացածին կարծելով շորթեսցէ, զի ի մեծէն Խաւսրովու է ասացեալ զառաջնոց արինակացն»), «Տաւնացոյց» (կանոնագրով), հիշատակարանով և բացատրականով: Այս բոլորը «գիտացէք զի երջանիկ վարդապետ Գևորգեա ձեռամբ գրելոցն փոխեցի... ոչ ավելի և ոչ պակաս»՝ հավաստիացնում է գրիչը¹²⁹: Իսկ Խաչատուրի օրինակը Գևորգ Սկևռացու ձեռքով գրված չէ: Վերջապես, Գևորգ Սկևռացու օրինակը նկարագարոյ էր, ինչպես վկայում է վարքագիրը՝ «և **գեղագարոյ շքով նկարեալ**, զոր տեսողացն և վայելողացն յայտնի է»¹³⁰: Մինչդեռ Խաչատուրի օրինակը միայն երկու նկար ունի:

Այս բոլորը վկայում են, որ Գևորգ Սկևռացին 1288 թվականից հետո և 1292 թ. առաջ գրել և նկարագարող է Աստվածաշունչ մատյանը, որից և նրա իսկ աշխատած առաջին (Խաչատուրի) օրինակից 1292 թ. արտագրել է Ստեփանոս Գոյներերիցանցը Մատենադարանի համար 179 ձեռագիրը¹³¹: Այս ձեռագիրը արժեքավոր է նաև նրանով, որ Ծննդոց գրքի ցանկի վերջին սյունակում պահպանվել է Մովսես մարգարեի նկարը: Մովսեսի նկարը գտնվել է նաև Խաչատուրի օրինակում, դարձյալ նույն ցանկի վերջում¹³²: Խաչատուրը նորուսում աշակերտ էր, իսկ Ստեփանոս Գոյներերիցանցը՝ ծաղկող չէր: Մնում է ենթադրել, որ այն նկարել է Գևորգ Սկևռացին:

Բայց այստեղ մեզ ամենից առաջ հետաքրքրում է Հեթում արքայորդու և Գևորգ Սկևռացու մշակութային համագործակցությունը: Լամբրոնի տերը խնդրել է Սկևռայի րաբունապետին փարթամացնել Աստվածաշունչը նախադրությամբ, որը նա կատարել է և ավարտել 1288 թվականին: Այս համագործակցությունը շարունակվում

¹²⁹ Ն. Պողարյան, Յուզակ Երուսաղեմի, հ. 2, 1972, էջ 499-501:

¹³⁰ «Բանբեր Մատենադարանի», N 7, էջ 479:

¹³¹ «Լոյս», էջ 1168:

¹³² Մատենադարանի համար 179 ձեռագրի գրչության վայրը չի նշված հիշատակարանում. սակայն այն ընդօրինակված պետք է լինի Արմենի անապատում, որտեղ այդ ժամանակ բնակվում էին և Գևորգ Սկևռացին և Ստեփանոս Գոյներերիցանցը: Վերջինիս «ի նիւթ» օգնող Վահրամ սարկավագը, որն այդ թվականին Արմենի անապատում ավարտում է Փիլոնի գործերի ընդօրինակությունը, աղաչում է հիշել «զիողևոր հայրն իմ և զուսուցիչ, որ իբրև զհուր մաքուր է զիմ զմարմնական ախորժակս յաստուածայինսն յարդորելով հանապազ աննախանձաբար զՍտեփանոս Գոյներերիցանց» (Ն. Պողարյան, Յուզակ Երուսաղեմի, հ. Ա, էջ 469):

է նաև հետագայում: 1293 թ. Հեթում թագավորը Հովհաննես Երզնկացուց Քերականությունը նվեր ստանալուց հետո, Գևորգ Սկևռացուն նոր պատվեր է տալիս, որն ավարտվում է 1295 թ.¹³³:

Բայց Հեթում արքայորդին մինչ այդ ստացել էր նաև Ճաշոցը: Ինչպես վերը տեսանք, ձեռագրի քննությունը մեզ բերեց այն համոզման, որ այն գրված է Սկևռայում Ստեփանոս քահանայի ձեռքով: Սկևռացի ընտանեկանի և Ճաշոցի ստացողի պաշտոնական, բարեկամական, ինչպես նաև մշակութային հարաբերությունները խոսում են այն բանի օգտին, որ Ճաշոցը ոչ միայն Սկևռայում կարող էր գրվել, այլ և Գևորգ Սկևռացին այն մարդն է, որ ի վիճակի էր Ճաշոցը գրուի բերելու: Հեթում արքայորդուն տրված Գևորգ Սկևռացու բազմաթիվ խրատների և խորհուրդների պատմականորեն փաստարկված և Սուրբ գրքով հաստատված գրավոր արտահայտությունը կտեսնենք Ճաշոցում, քիչ հետո, որն ինչպես տեսանք, հաստատում է հիշատակարանը:

«Ճաշոցի» հիշատակարանը և նրա պարունակած ուղերձը

«Հեթումի Ճաշոցը» աչքի է ընկնում իր պատմական բնույթի հիշատակարանով, որը Կիլիկիայի Հայոց պետության սկզբնավորման շրջանից մինչև ԺԳ դարի 80-ական թվականներն ընկած ժամանակաշրջանի համառոտ շարադրանքն է: Այն, դեռևս միջնադարում, արտածվել է Ճաշոցից և ընդօրինակվել որպես ինքնուրույն պատմագրական երկ, արժանացել նաև մի քանի տպագրության¹³⁴:

Հեթում արքայորդու շրջապատում 1280-ական թվականներին ամենահարմար անձնավորությունը, որ կարող էր իր պարոնի համար այնպիսի Ճաշոց ստեղծել, ինչպիսին այսօր ներկայանում է մեզ, Սկևռայի դպրոցի ընտանեկան, մատենագիր, նկարիչ, գրիչ, գրչության արվեստի տեսաբան և հմուտ կիրառող Գևորգ Սկևռացին

¹³³ Մատենադարան, ձեռ. N 180:

¹³⁴ Ձեռագրեր՝ օրինակ, Մատենադարան, ձեռ. N 3078, էջ 258ա-267բ («Պատմութիւն թագաւորացն որ ի Սիս»), Երուսաղեմ, ձեռ. N 68, հրատարակություններ՝ «Յիշատակարան թագաւորական Ճաշոցին կամ համառօտ պատմութիւն Ռուբինեան իշխանաց», «Արարատ», 1870 թ., էջ 353-360, 382-386, նույն տեղում՝ 1888 թ., էջ 345-356, 437-456, Սամուէլ Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 212-223 (հավելված), Ղ. Ալիշան, Հայապատում, Վենետիկ, 1901, հ. Բ, էջ 343-348:

էր, որին, Մ. Օրմանյանի համոզմամբ «Ժամանակիս Կիլիկիայի վարդապետներուն մեջ առաջին տեղը պետք է ընծայել»¹³⁵:

Գևորգ Սկևռացին, ինչպես վկայում են ժամանակակիցները, ամենից շատ բարոյական իրավունք է ունեցել խրատելու Հեթում արաքայորդուն և Ճաշոցը խմբագրելով, նկարագարողելով և հիշատակարանը հորինելով դարձրել է որպես «վարդապետութիւն խրատու»¹³⁶ առաջին հերթին Հեթումի համար: Այս ուսումնասեր, ասպետ, կրօնավոր արքայորդու սեղանի գիրքն էր, ամենօրյա գործածության համար Ճաշոց, մաշտոց, տոնացույց, պատմություն, արվեստի անսպառ հարստությամբ, ակնահաճո և հոգեպարար «լի և պատարուն, իբրև զծաղկազարդ բուրաստան»¹³⁷:

Կրկին վերադառնանք ձեռագրին և վերստին սկսենք հիշատակարանից:

Հիշատակարանը շարադրելիս Գևորգ Սկևռացին օգտվել է այլևայլ աղբյուրներից, պատմական դեպքերի համար, առաջին հերթին, Վահրամ րաբունու Վիպասանությունից, իսկ ժամանակակից դեպքերի շարադրման համար՝ սեփական դիտումներից: Օրինակ, նրան հայտնի են որ Թորոս Բ-ի Կոստանդնուպոլսից Կիլիկիա վերադառնալը «այլ և այլ արինակաւ պատմեն գիրք»¹³⁸, որ դժվարալոյծ գրքերի նրա մեկնությունները «գտանին առ այժմ առ մեզ»¹³⁹, այսինքն այնտեղ, որտեղ ստեղծվում էր Ճաշոցը, որ Անավարզան գրավելուց հետո Թորոս Ա-ն իր կառուցած տաճարում դնում է Տիրամոր պատկերը, և այդ մասին արձանագրություն գրում, որը տեսել է նա («որպէս և գրեալ է յարձանի ի շինուածս տաճարի») ¹⁴⁰:

Սակայն Գևորգ Սկևռացու նպատակը Ռուբինյան իշխանության պատմության հանգամանալից կամ համառոտ շարադրանք ստեղծելը չէր, այլ երիտասարդ արքայորդուն նախնիների հերոսական ոգուն, հայրենիքին և հավատին նվիրված նրանց գործունեությանը հավատարիմ մնալուն ուղղորդելը:

Այս բանն արվում էր Կիլիկյան Հայաստանի նկատմամբ բյուզանդական նվաճողական քաղաքականության մերկացմամբ, որը ոչ մի միջոցի առաջ կանգ չէր

¹³⁵Մ. Օրմանեան, Ազգապատում, էջ 1795:

¹³⁶Մատենադարան, ձեռ. N 979, էջ 470ա

¹³⁷Անդ:

¹³⁸Անդ, էջ 472ա:

¹³⁹Անդ, էջ 473ա:

¹⁴⁰Անդ, էջ 471ա:

առել և հանդես էր եկել մերթ ռազմական բացահայտ միջամտությամբ, մերթ խարդախությամբ ու խաբեություններով, իսկ ապա դավանաբանական գործողություններով՝ հայ և հույն եկեղեցիների միավորման ձեռնարկությամբ, որին տուրք էր տվել երիտասարդ արքայորդին, Կիլիկյան Հայաստանի ապագա թագավորը, պարոն Հեթումը՝ «որ է շառաւիղ բարեշնորհ բըղխեալ յարմատոյ թագաւորութեան Թորգոմեանս սեռի և Ասքանազեանս տոհմի»¹⁴¹: Եվ որպէսզի Կիլիկյան իշխանության փառաբանությունը նրա համար «յայտնաբանեալ լինի զայս ձև աւրինակի»¹⁴²:

Հիշատակարանում պատմվում է, որ երբ արտաքին թշնամիների հաճախակի հարձակումներից կործանվեց Բագրատունյաց թագավորությունը և Հայոց իշխանները իրենց հպատակներով տեղափոխվեցին «ի ստորին կողմանս Գամրաց և Պոնտոսի», նրանց խանգարեցին հույները, և հայերը «ի նենգաժէտ յազգէն յունաց խոյս տուեալ, եկին ի սահմանս Կեսարեայ Կապադովկիացոց, որոյ տիրեալ քաջութեամբ արքայն մեծ Գագիկ, և զբազումս ի յունաց սատակեալ»: Սրանց մեջ էր նաև քաղաքի մետրապոլիտ Մարկոսը, որը իր շան անունը «Արմէն» էր դրել: «Արքայն բարեշուք՝ զնա և զշունն իւր ի միում քրձի ըստ հարուածովք գանից ի միասին սատակեաց»: Հույները լուծում են այս վրեժը և հալածում հայերին. ուստի ոչ միայն «ցրուեցան պայազատքն Հայոց... այլ ևս խառնիճադանճ բազմութիւնքն ընդ բազում տեղիս և գաւառս»: Ահա այդ ժամանակ նրանց միջից «մեծափառ ոմն իշխան իշխանաց ի սեռէ թագաւորութեանն, արեանառու մեծին Գագկա՝ Ռուբեն անուն «գրավում է մի ամրոց, հաստատում է իր իշխանությունը և ընդարձակում այն: Մահից հետո նրան հաջորդում է որդին՝ Կոստանդինը, «այր քաջ և արդարագործ»: Սա նույնպես ընդարձակում է հոր իշխանության սահմանները, գրավում ամրոցներ, դաշտեր և այլ վայրեր, «զյոզունս ի յունաց...», որոնց համար «սիրեցեալ եղև բնակչաց աշխարհին Կիլիկիայ»:

Սրա որդին՝ Թորոսը (Ա) իշխանության գլուխ անցնելով նախ Գագիկ թագավորի արյան վրեժն է առնում հույներից, և նրանից վերցնում Անարգաբա դղյակը: Իր

¹⁴¹Անդ, էջ 470բ:

¹⁴²Անդ:

գործերով նա այնքան է հռչակվում, որ «Կիլիկիայ անուն լքեալ «Թորոսի երկիր» զաշխարհն նորին վերաձայնէին»:

Հաջորդը՝ Լևոն եղբայրը նույնն է անում և քաջության անուն վաստակում: Սակայն խաբում են հույները և նրան՝ Թորոս ու Ռուբեն որդիների հետ կապանքներով բանտարկում են Կոստանդնուպոլսում, ուր Ռուբենին՝ «կուրացուցին կուրացեալ նախանձով ազգն յունաց...», որից հետո «իշխանութին Հայոց բարձաւ ի Կիլիկիայ՝ տիրելով վերստին յունաց»: Ապա համեմատաբար ընդարձակ պատմվում է Թորոսի վերադարձը Կիլիկիա և հայկական իշխանության վերականգնումը, նրա քաջագործությունները, հույներին պատժելը և այլն, և շրջանցում է այն մանրամասնությունները, որոնք որոշ չափով կարող էին ստվեր նետել հայերի կամ փառաբանյալ հերոսի վրա:

Ըստ հիշատակարանի, երբ հույն դուքսը Լամբրոնի և Առկուռսայի հայ իշխանների հետ Թորոսին շրջապատում է Մամեստիայում, վերջինս դուրս է գալիս և ջախջախում է նրանց: Այդ ճակատամարտում զոհվում է Լամբրոնի տեր Հեթումի եղբայր Օշինը, իսկ ինքը գերվում է, և ազատվում 40.000 ոսկի փրկագնով, որի կեսը վճարում է, իսկ մյուս կեսի համար պատանդ է թողնում որդուն: Բայց այդ մասը բաց է թողնված հիշատակարանում (Լամբրոնի իշխանները Հեթում արքայորդու նախնիներն էին), միայն գրված է. «զյոյսն էսպան, և զհայկազունսն ձերբակալ արարեալ կալաւ և յետոյ ազատեաց»: Պատճառաբանում է նաև հույների հետ հիշյալ իշխանների վերը նշված համագործակցությունը, «նոքա յԱրևելից ի սրոյն իսմայելացոց խոյս տուեալ եկին և կալան զկողմանսդ նախասացեալ (Աստուռսայի և Լամբրոնի. Ա. Մ.) և մտին ընդ հնազանդութեամբ կայսերն Յունաց»¹⁴³:

Թորոսի եղբորը՝ Ստեփաննին սպանում են հույները դնելով եռացող կաթսայի մեջ: Սրա որդին՝ Ռուբենը հաստատվելով իշխանության գլուխ՝ «եղև այր աշխարհաշէն, առատամիտ և բարեգործ, որոյ էլ համբաւ անուան նորա ընդ ամենայն աշխարհ», սակայն Լամբրոնի իշխանի սաղրանքով Անտիոքի տերը խաբեությամբ բանտարկում է նրան՝ Կիլիկիան տիրելու համար, բայց Ռուբենի խորհրդով իշխանությունը իր ձեռքն է վերցնում եղբայրը՝ Լևոնը: Սա «առաւելաւ յամենայն

¹⁴³Անդ, էջ 472ա:

բարութիւնս քան զնախնիսն իւր... ընդարձակեաց զսահմանս տէրութեանն... բազում ամրոցս և դղեակս շինեաց, յոլով վանորայս և աղքատանոցս կազմեաց, և գոտեաց տունս և ռոճիկս պարգևեաց, և բարութեամբ զաշխարհն իւր ելից... պսակեաց թագաւոր Հայոց, և նորոգեաց զաթոռ և զգաւազան թագաւորութեան Թորգոմայ»¹⁴⁴:

Լևոնի մահից հետո Կոստանդին Պայլն իր որդուն՝ Հեթումին ամուսնացնելով Լևոնի դստեր՝ Զապելի հետ, հռչակում է նրան Հայոց թագավոր «խորհրդածեալ զխաղաղութիւն աշխարհիս Հայոց, յուշի անկեալ գնաց առ ազգն մաշող, զոր թաթարն կոչեն, և յուխտ մտեալ ընդ նոսա...»: Նրա մահից հետո թագավորի ավագ որդին Լևոնը, որը հայրն է Ճաշոցի ստացող Հեթումի, «Է սուրբ արքայս Հայոց առատամիտ, ողորմած, ունկնդիր զգուելոց (այսինքն՝ զրկվածներին), ապաւեն վտանգելոց, ողջախոհ և մաքուր, երկայնամիտ և ժուժկալ, և յամենայն նեղութիւնս համբերող... և մեծախորհուրդ...»¹⁴⁵, քաջ և քաջալերող և այլն:

Այստեղ ավարտվում է Հեթում արքայորդու նախնիների հայրենաշեն գործերը փառաբանող և նրա դավանանքը կրողների, իսկ նենգությունը՝ նշավակող հիշատակարանը:

Հիրավի, մոտ երկու հարյուր հիսուն տարի առաջ, բուն հայրենիքում պետականությունը կորցրած ժողովրդի մի հսկա զանգված, մի նոր վայրում, հերոսական մաքառումների ուղիով ստեղծել է սեփական պետականությունը, փրկել, պահել և զարգացրել է ազգային ավանդույթները, մշակույթը, գիտությունը, արվեստն ու գրականությունը, հաստատել է իր գոյությունը աշխարհում, ուստի նոր թագաժառանգը պետք է հավատարիմ մնա նախնիների ավանդներին, նրանց որդեգրած դավանանքին: Այսպիսին պիտի լինի նաև նոր թագավորը:

Հիշատակագիրը զգուշացնում, զգաստացնում է թագաժառանգին և այդ անում է ոչ միայն հիշատակարանով, որը տեղավորված է ձեռագրի վերջում, այլ սկսում է առաջին թերթից:

¹⁴⁴ Անդ, էջ 474ա:

«Ճաշոցի» պատկերազարդման «պատգամը»

Ինչպես նշեցինք, Հեթումի Ճաշոցը սկսվում է հունվարի 1-ից Բարսեղ Կեսարացու տոնով, որն, իսկապես այդ օրն է, բայց ուրիշ օրինակներում տեղավորված է Ճաշոցների մեջտեղում, ուր սկսվում են սրբերի տոները ըստ հռոմեական ամիսների: Սակայն «Հեթումի Ճաշոցում» սկզբում նշված չեն ոչ օրը, ոչ էլ տոնի և սրբի անունը:

Հեթումի Ճաշոցը սկսվում է ինքնատիպ ձևով, նույնիսկ խորհրդավոր: Բացված երկու էջերը լրացնում են միմյանց, որպես մի ամբողջություն. կենտրոնը, աջակողմյան թերթի ստորին կեսից ավելին երկայուն երկաթագիրն է՝ Սողոմոնի իմաստությունից բերված ընթերցվածով: Վերևում գլխազարդը՝ Սողոմոնի նկարով, աջ կողմում՝ ամբողջ լուսանցքով մեկ՝ լուսանցազարդը, վեց նկարներով, իսկ ձախակողմյան ողջ էջի վրա Բարսեղ Կեսարացու նկարն է: 1620-ական թթ. Հակոբ Սսեցին նկարի տակ սխալմամբ գրել է. «Սուրբ Սահակ է, թոռն Սուրբ Գրիգորյո, գրոցս շինաւոն, թվին Հայոց ՉԼԷ (1288)» (6բ): Սակայն, որ նկարում Բարսեղ Կեսարացին է, ապացուցվում է նախորդ էջում գրված ցանկերով, ուր առաջինում «Բ»-ով սկսվող անուններից առաջինն է, նշված՝ «Ա տաւն», իսկ երկրորդում՝ գրված է հունվարի Ա-ի դիմաց, և վերջապես, նրա տոնի վերաբերյալ ընթերցվածներն են գրված:

Բարսեղ Կեսարացու պատկերի լայն ծաղկաշրջանակը եզերված է դրսից կարմիր և ներսից կապույտ նեղ շրջանակներով¹⁴⁵: Շրջանակի երկու կողերի ներսից վեր են բարձրանում խարիսխների վրա հենված երկու որմնասյուներ՝ պսակված գեղեցիկ խոյակներով: Վերջիններս իրար են միանում կամարով, որից վեր, մինչև շրջանակը՝ ծաղկաբուրգեր են:

¹⁴⁵ Անդ, էջ 475բ:

¹⁴⁶ Ծաղկաշրջանակի յուրաքանչյուր վարդյակ ամփոփում է չորս գունավոր եռաթերթ, որոնց միացումից կենտրոնում ստացվում է ոսկե խաչ: Շրջանակն ունի քառասուն այսպիսի վարդյակ:



Նկ. 1. Բարսեղ Կեսարացու դիմանկարը:

Կամարակապ այս խորանում կանաչ գետնի և ոսկե խորքի վրա կանգնած է Բարսեղ Կեսարացին, ձախ ձեռքում ոսկեկազմ գիրքը՝ սրտի մոտ, աջը՝ գրքին մոտեցրած, խրատում և օրհնում է: Չնայած նկարը դիմահայաց է, բայց բիբերը ուղղված են դեպի հաջորդ՝ հանդիպակաց էջը (նկ. 1), ուր գրադաշտի լայնքով, կեսից քիչ պակաս ոսկե խորքի վրա գեղեցիկ կիսախորան գլխազարդն է¹⁴⁷, որին ներքևից կենտրոնում տեղավորված է Սողոմոն թագավորի նկարը՝ արքայական թագով և ծիրանիով, ձախ ձեռքում գրված մագաղաթյա բաց փաթեթը, աջը՝ պահած խրատող շարժումով:

Գլխազարդից ներքև, երկայուն ոսկե երկաթագիր գրությամբ բերված է Սողոմոնի Առակներից ընթերցված: Այն սկսվում է ամբողջ գրադաշտի երկարությամբ իջնող «Բ» հյուսածո զարդագրով, որը գծված է ոսկով, բայց գունազարդված չէ: Զարդագիրը մի տեսակ թափանցիկ տեսք ունի, որով կարծես էջերը միահյուսվում, կապվում են իրար:

Լուսանցազարդը հյուսված է ոսկի, կանաչ, դեղին, կարմիր, կապույտ, ոճավորված և բնական տերևներով, որոնց մեջ վերից վար տեղավորված են մարդկային վեց կերպարներ: Այս լուսանցազարդի վրա առաջին անգամ ուշադրություն է դարձրել Գ. Հովսեփյանը: «Վերից վար այս եզրազարդի մեջ այլ և այլ դիրքերով նստած, կանգնած կամ չոքած վեց պատկերներ կան. կարծում ենք Լևոն Գ-

ն է յուր զավակներով, որովհետև ոչ մի կապ չունի այս պատկերները բովանդակության հետ»¹⁴⁸: Հնարավոր է, որ Լևոն թագավորն է յուր որդիներով, որովհետև նրա յոթ որդիներից երկուսը՝ Օշին և Ալինախ գույզը ծնվել են 1283 թ., մնացած հինգը՝ 1265-1279-ը¹⁴⁹: Եթե ընդունենք, որ Ճաշոցը սկսված է եղել 1283 թվականի սկզբներին, երբ դեռ ծնված չէին Հեթումի կրտսեր եղբայրները՝ հինգ եղբայրներով՝ հոր հետ կարող էին նկարվել մի տոհմածառում, ամեն մեկին ապագայում մի պաշտոնով ներկայացնելով, այլապես Ներսեսին պետք է նկարեր 4, Կոստանդինին՝ 7, Սմբատին՝ 10, Թորոսին՝ 13 և Հեթումին՝ 18 տարեկան հասակում: Սակայն այդպես չէ: Հեթում արքայորդին հորը նկարել տալով վերևում, որպես գերագույն իշխանություն, իրեն նկարել է տալիս հորից հետո նույնատիպ, որպես անմիջական թագաժառանգ:

Այս լուսանցագարդի մեկնությանը նվիրված մի հոդված ունի Լ. Ա. Դուրնովոն¹⁵⁰: Նկարագրելով լուսանցագարդը և մարդկային կերպարները, նա եզրակացնում է, որ չնայած նրանք պատկերված են որոշակի վիճակի և գործողության մեջ, ինչ-որ թեմատիկ տեսարան չեն ներկայացնում, այսինքն՝ կապ չունեն բովանդակության հետ, բայց միևնույն ժամանակ միմյանց նկատմամբ որոշակի փոխադարձ կապի մեջ են գտնվում: Լ. Դուրնովոն այդ կերպարների մեջ տեսնում է (ա) Լևոն Գ թագավորին, (բ) Հեթում երկրորդ թագավորին և Կիլիկյան արքունիքին մոտ կանգնած չորս անձնավորությունների՝ (գ) թագադիր ասպետին, (դ) գլխավոր մատակարար, (ե) ննջարանապետ և (զ) պալատի կառավարիչ:

Առաջին երկու պատկերների մեկնությունը համընկնում է Գ. Հովսեփյանի մեկնությանը, մյուսները՝ ոչ: Բանն այն է, որ Հեթում արքայորդին իր անձնական օգտագործման համար պատկերած Ճաշոցում հոր պալատականների նկարները չէր

¹⁴⁷Դարձյալ մանր եռաթերթ, սակայն ուրիշ ծաղիկներից վարդյակներ, որոնց թիվը քսանչորս է, քառանկյուն գլխազարդի:

¹⁴⁸Գ. Հովսեփյան, Համառոտ տեղեկություններ..., էջ 108-109:

¹⁴⁹Մանր ժամանակագրություններ 13-18-րդ դդ., հ. Ա, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 83-85: Ճաշոցի ստացող Հեթում Բ թագավորը 1296 թ. շարադրում է իր Տարեգրությունը, որտեղ իր քույրերի և եղբայրների ծննդյան տարիները ներկայացրել է այսպես. Հեթում – 1265, Ֆիմի – 1266, Սպիլ – 1269, Թորոս – 1270, Զապլուն – 1273, Սմպատ-Սպիլ (գույզ) – 1276, Կոստանդին – 1277, Ռիթա-Ութիֆանո (գույզ) – 1278, Ներսես – 1279, Օշին-Ալինախ (գույզ) – 1283: 1285 թ. մահանում է թագուհի Կեոանը:

դնի: Հավանաբար այդպես չէր վարվի նույնիսկ Լևոն Գ թագավորը, եթե ինքը լիներ Ճաշոցի պատվիրատուն: Այդպիսի դեպքերում ավելի շուտ իրենց ընտանիքի անդամներին էին նկարել տալիս կամ նախնիներին: Սակայն Հեթում արքայորդին կարող էր նկարել տալ եղբայրներին, որպես իր՝ ապագա թագավորի ապագա պալատականների: Ինքը՝ որ դեռ թագավոր չէր, նկարված է որպես թագավոր: Թորոսը կարող էր լինել կամ թագադիր, բայց գուցե և եղբորից հետո երկրորդ թագակիրը: Սմբատը՝ գլխավոր մատակարար, Կոնստանդինը՝ ննջարանապետ, և վերջապես Ներսեսը՝ պալատի կառավարիչ: Գ. Հովսեփյանը և Լ. Դուրնովոն լուսանցագարդի պատկերների և բովանդակության մեջ կապ չեն տեսնում, սակայն կապ կա, եթե լուսանցագարդն իր պատկերներով քննենք նախորդ նկարների՝ Բարսեղ Կեսարացու, Սողոմոնի նկարի և նրա առակներից բերված քաղվածքի ու հաջորդ երկու քաղվածքների հետ:

Ոչ մի կասկած չի հարուցում առաջին և երկրորդ նկարների ով լինելը, ինչպես և նկատել են Գ. Հովսեփյանը և Լ. Դուրնովոն:

Անվերնագիր, ոչ տոն, ոչ սրբի անուն, ոչ Սաղմոս ու Ընթերցված. նշանակված էջը սկսվում է Սուրբ գրքի Առակաց գրքի ԺԱ գլխից, ուր դրվատվում են շիտակությունը, ուղղադավանությունը, խոնարհությունը: Արդարությունը ուղիղ, ճշմարիտ ճանապարհով գնացողների կողմն է, և դեմ՝ այդ ճանապարհից խոտորվողների, որոնց նույնիսկ հարստությունը չի փրկի: Ուղիղ ճանապարհով գնացողներն են շենացնում աշխարհը: Այս անմիջապես կապվում է հիշատակարանի գաղափարների հետ: Հեթումի նախնիները ուղիղ ճանապարհով են ընթացել և շենացրել աշխարհը: Ինքն էլ է այդ ճանապարհով գնալու.

«Բերան խոնարհաց խօսի զիմաստութիւն:

Կատերալութիւն ուղղոց առաջնորդեսցէ նոցա, և գայթակղութիւն արհամարողաց աւերեսցէ գնոսա:

Ոչինչ աւգնեսցեն ինչք յաւուր բարկութեան, այդ արդարութիւն փրկէ ի մահուանէ...

¹⁵⁰ Լ. Դурново, Портретные изображения на первом заглавном листе Чашоца 1288 г., «Տեղեկագիր», հաս. գիտ. N 4, Երևան, 1946 թ., էջ 63-70: Թվականը ճիշտ չի գրել, հավանաբար նկատի ունենալով Հակոբ Սսեցու սխալ ընթերցումը ձեռագրի 6ա էջում:

Արդարություն անապատի ուղղէ զճանապարհս և յամպարշտութիւնս արկանէ անիրաւութիւն:

Արդարութիւն արանց ուղղայ՝ փրկէ զնոսա, անմտութեամբ կորնչին անաւրէնք...

Բարութիւնք արդարոց յարինեն զքաղաք, ի կորըստեան ամպարշտաց եղև ուրախութիւն:

Աւրինութեամբ ուղղոց բարձրանայ քաղաք»¹⁵¹:

Սողոմոնի առակներից քաղված այս հատվածին անմիջապես հաջորդում է Պողոս առաքյալի Տիմոթեոսի 2-րդ թղթից մի քաղվածք, որ պատճառաբանվում է այն հանգամանքը, թե հնարավոր է, որ մարդիկ շեղվեն ուղղադավանությունից «ողջամտութեան վարդապետութեան ոչ անսայցեն, այլ ըստ իւրաքանչիւր ցանկութեանց ... ի ճշմարտութենէ աստի դարձուցանիցեն զլսելիս և յառասպելս կործանեցեն»: Այսպիսի պարագաներում չպետք է հուսահատվել, որովհետև կա փրկության ճանապարհ՝ «Այդ դու գուարթ կաց յամենայնի ճգնեա, զգործ աւետարանչի գործեա, զպաշտպան քո կատարեալ կալ: Զի ես այսուհետև նուիրեալ եմ,– շարունակում է դարձի եկած Պողոսը,– և ժամանակ դարձի իմոյ հասեալ կայ: Զբարոք պատերազմ պատերազմեցաւ, զընթացսն կատարեցի, զհաւատսն պահեցի: Այսուհետև կայ մնայ ինձ արդարութեան պսակն զոր հատուցէ ինձ Տէր յաւուր յայնմիկ արդարն դատաւոր, որ ոչ միայն ինձ, այլ և ամենեցուն, որ սիրեցին զյայտնութիւն նորայ»¹⁵²:

Այստեղ բավականին որոշակի է ասված. երբեմնի հեթանոս Պողոսը դարձի է եկել, ինչու ֆրանցիսկյան Հեթումը դարձի չգա. և չարժանանա արդարության պսակին, չէ որ այդ պսակը ոչ միայն Պողոսի համար է, «այլ և ամենեցուն», նաև՝ Հեթումի,– ապագա թագավորի, որը պետք է ղեկավարի սկզբից անտի ուղղադավան իր ժողովրդին: Եվ այս երկու ընթերցվածները ավարտվում են Հովհաննեսի Ավետարանից քաղված մի հատվածով, որը պատշաճում է դարձի եկած Հեթումին, այն մի տեսակ երդումի խոստովանություն է.

¹⁵¹Մատենադարան, ձեռ. N 979, 47ա-47բ:

¹⁵²Անդ, էջ 7բ-8ա:

«Ես եմ հովիւն քաջ, հովիւ քաջ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց: Իսկ վարձկանն որ ոչ է հովիւ, որոյ ոչ իւրեան ոչխարքն, իբրև տեսանէ զգայլն զի գայ՝ թողու զոչխարսն և փախչի, և գայլն յափշտակէ զնոսա և ցրուէ, քան զի վարձկան է և չէ փոյթ նմա վասն ոչխարացն:

Ես եմ հովիւն քաջ և ճանաչեմ զիմսն, և ճանաչիմ յիմոցն:

Որպէս գիտէ զիս Հայր, գիտեմ և ես զՀայր, և զանձն իմ դնեմ ի վերայ ոչխարաց:

Նաև այդ ոչխարք են իմ, որ ոչ են յայսմ գաւթէ, և զայն ևս պարտ է ինձ ածել այսր, և ձայնի իմում լուիցեն և եղիցին մի հաւտ և մի հովիւ»¹⁵³:

Թագավորը այլադավան չպետք է լինի, այլապէս կնմանի վարձկան հովիվի, և նրա համար փոյթ չի լինի իր հոտի կորուստը: Թագավորը այդպիսին լինելու իրավունք չունի. այդպիսին չէին Կիլիկիայի ոչ իշխանները, ոչ էլ թագավորները: Այդպիսին չպետք է լինի նաև Հեթում ապագա թագավորը:

Միայն Գևորգ Սկևռացին, թագավորի և նրա որդու սիրելին և հեղինակավոր խորհրդատուն կարող էր արքայորդուն այսքան նուրբ և այսքան որոշակի խրատներ և խորհուրդներ տալ, որը նույնն է, թե պահանջներ առաջադրել կամ պահանջել: Ինքնավստահ և ինքնահավան քսանամյա արքայորդին բավականին կրթություն ուներ և նրա ուշադրությունից չէր վրիպի Ճաշոցի ոչ վերջաբան-հիշատակարանի, ոչ էլ առաջաբան-ընթերցվածների իմաստը:

Այս բոլորը ուղղված էր Հեթումին և ոչ ուրիշ մեկին, ուստի ձեռագրի սկզբում ուրիշ ոչ մեկի նկարն էլ չպիտի լիներ, բացի Հեթումի հոր, Լևոն թագավորի նկարից: Ուղղադավան Լևոն երրորդը արքայավայել բազմած է լուսանցազարդի զագաթին, ոսկե թագը գլխին, սպիտակ մազ ու միրուքով: Աջ ձեռքը դրել է կողքին, ձախով՝ ոսկե, խաչապսակ արքայական տիրագունդն է պահել: Կանաչ ներքնագգեստ է հագինը, թիկունքին ձգել է կարմիր ծիրանին, որը թևի տակից անցնելով՝ ծածկում է աջ ոտը: Դեմքի արտահայտությունը խիստ է, բիբերը նայում են դեպի ձախ: Թագավորի շուրջը բուսազարդերը քիչ են. երկու ոճավորված տերև իրենց մեջ ամփոփում են գլուխը, որոնց միջի ոսկի խորքը համարյա ձուլվում է ելնդավոր ոսկե թագի հետ:

¹⁵³ Հովհաննեսի ավետարանից քաղված այս հատվածը (Յովհ. Ժ, 11-16) տեղ է գտել Ճաշոցի տարբեր նյութերում, առաջինը՝ սկզբի նկարներին հաջորդող թերթին (էջ 8ա), ապա ևս չորս տեղում՝ էջ 88բ, 99բ, 271բ-2ա, 383ա:



Նկ. 2. Լևոն Գ թագավոր և Հեթում թագակիր գահաժառանգ (չուսանցագարդի վերին մասը):

Նրանից անմիջապես ներքև նստած է երիտասարդ թագաժառանգը, ամբողջովին նույն դիրքով (նկ. 2), ինչ վերևում՝ թագավորը, ելնդավոր թագը գլխին, դիմահայաց, աջ ձեռքը՝ կողքին, ձախում պահել է մի քիչ փոքր խաչագարդ գունդը, բայց ոչ ոսկի, այլ կարմիրով գծած: Բազմած է աթոռին դիմահայաց: Հագուստը կապույտ է, կարմիր ծիրանիով, որը նույնպես ծածկում է աջ ծունկը: Մորուքը կարճ է, կարծես նոր բուսած: Շուրջը բուսագարդերը խիտ են:

Առաջինը Լևոն թագավորն է, երկրորդը՝ Հեթում արքայորդին, թագավորի դերում, առանց թագավորական իշխանության, այսինքն՝ ձեռքում բռնած խաչապսակ տիրագունդը ոսկեպատ չէ, դեռ բովանդակություն չունի, իրական չէ: Իսկապես, ճաշոցը գրելու ժամանակ Հեթումը թագավոր չէր: Բայց ինչո՞ւ է այդպես նկարվել:

Իսկ ովքեր են հաջորդ չորս պատկերները: Դրանք դիտելիս, նախ աչքի է զարնում այն, որ ինչպես նկատել է Գ. Հովսեփյանը¹⁵⁴, վեցերորդ պատկերը, կամ վերջից առաջինը նստած է, ինչպես վերին երկու դեմքերը. դիմահայաց, աջ ձեռքը՝ կողքին, ձախում բռնած ֆրանսիական շուշանակերպ ոսկե գավազան. ինչպես գրում է Լ. Դուրնովոն¹⁵⁵, հագել է կանաչ ներքնագգեստ, և վրան ձգել կարմիր ծիրանի: Եվ երկրորդ՝ բոլորի մազերը և սանրվածքը նման են իրար, այդ ժամանակի արևմտաեվրոպական սանրվածքի ձևով, ուղիղ հերափունջը, ծածկում է ճակատների

¹⁵⁴Գ. Հովսեփյան, նշված հոդվածը, էջ 109:

¹⁵⁵Լ. Дурново, նշված հոդվածը, էջ 65-66:

վերնամասը¹⁵⁶: Դեմքերը, համարյա, նման են իրար, նույն աչքերն են: Այս չորս նկարները, մեր կարծիքով, նույն Հեթումի կյանքի տարբեր էտապների պատկերներն են:

Սկևռայի գրչության դպրոցը այդ փորձն ուներ արդեն, այսինքն՝ միննույն անձնավորությանը ավելի լիակատար, բազմակողմանի ներկայացնելու համար, միննույն ձեռագրում նրան պատկերում էին մի քանի նկարներում տարբեր կողմերով, որոնց միազամությունը ստեղծում էր անհատի ամբողջական կերպարը: Այդպես էր վարվել հռչականուն Գրիգոր Սկևռացին 1173 թ. Ներսես Լամբրոնացու համար գրած և նկարած «Նարեկի» մեջ Գրիգոր Նարեկացուն չորս առանձին պատկերմամբ ներկայացնելով՝ «Գրիգոր փիլիսոփա», «Գրիգոր հսկող», «Սուրբն Գրիգոր ճգնաւոր» և գետնատարած՝ Քրիստոսին երկրպագելիս, որի մակագրությունը ջնջել են (Մատենադարան, ձեռ. N 1568, էջ 7բ, 55բ, 120բ և 178բ): Լամբրոնացու այլ ձեռագիրների հետ այն պահվում էր Սկևռայում:



Նկ. 3. Լուսանցազարդի ներքնից առաջին պատկերը (Հեթում պատանի):

Մեր ենթադրությունը հետևյալն է. լուսանցազարդի ներքնից հաշված առաջին պատկերը Հեթում պատանին է, ավելի շուտ մանուկը, Լևոն Գ թագավորի անդրանիկը՝ Կիլիկիայի ապագա թագավորը, ուստի պատկերված է հոր նման (նկ. 3): Նրանից վեր, դեպի աջ, ծնկաչոք նստած պատանին է, հայացքը թեքած դեպի ձախ, ձեռքին բռնած ունի դեպի առաջ պարզած անտիկ ձևի ոսկե գեղեցիկ սափորիկ: Այս նկարում պատկերված է Հեթումը ուսումնառության շրջանում (նկ. 4):

¹⁵⁶Նույն տեղում:



Նկ. 4. Լուսանցազարդի ներքնից երկրորդ պատկերը (Հեթումի ուսումնառությունը):

Ոսկե սափորը, անոթը լցված է գիտությամբ: Հեթումը ծնկաչոք թեքված է դեպի տիտղոսաթերթի գիրը, գիրքը, և ասես լսում է: Սակայն սափորը հունա-հռոմեական է, ուրեմն Հեթումի դաստիարակությունը այդ թեքումն է ունեցել, բայց նա պետք է անսա Սողոմոն իմաստունի խրատին և Բարսեղ Կեսարացու հայրապետական խոսքին, որոնք մարդկանց խրատում են նրանց բոլոր տարիքում ոչ միայն պատանի, այլև նույնիսկ թագավոր դառնալուց հետո:

Երրորդ նկարում Հեթումը կանգնած է ամբողջ հասակով, հանդիսավոր կեցվածքով, աջ ձեռքը ծալած-դրած է կրծքի վրա երեք մատը՝ միացրած իրար:



Նկ. 5. Լուսանցազարդի ներքնից երրորդ պատկերը (Հեթումը ասպետ):

Վեր բարձրացրած ձախ ձեռքում բռնել է երկարակոթ, լայնտակ սկիհանման ոսկե անոթ: Շատ մանրամասն է նկարված զգեստը, դեպի ներքև լայնացող երեք-չորս անցքեր ունեցող կանաչ եզրերով կապույտ վերնազգեստի բացվող թևքերի տակից երևում է ներքնազգեստի սպիտակ, նեղ թևքերը (նկ. 5): Ուսերից իջնում է կարմիր թիկնոցը, որը ամրանում է կրծքի վրա՝ սպիտակ թելկապերով: Կոշիկները կարմիր

են, լայն, հաստ քթերով: Լ. Դուրնովոն հագուստը համարում է ԺԳ դ. արևմտաեվրոպական տարագ, որը կրել են Կիլիկիայի արքունիքում: Այդպիսի տարագ ունեն Վասակ իշխանը և իր որդիները, ինչպես նաև Լևոն Գ-ի երեք որդիները 1272 թ. ձեռագրում¹⁵⁷:

Այս Հեթումի իրական նկարն է, ուր արքայորդին պատկերված է ասպետական տարագով, 1283 թ. Աստվածհայտնության տոնին, հունվարի 6-ին ասպետական աստիճան ստանալիս, որին ամենայն հավանականությամբ, ներկա էր նաև Գևորգ Սկևռացին և նրան պատկերել է այդ հանդիսավոր պահին: Տասնութամյա Հեթումի նկարը գտնվում է նկարաշարի կենտրոնում: Մինչ այդ պատկերված երկու նկարները՝ Հեթումի անցած տարիների երևակայական պատկերումն էին, իսկ հաջորդ երկուսը՝ գալիք տարիների Հեթումն է, երբ դեպի թագավորական գահն է գնում և համարյա գահակալ է:

Չորրորդ նարում ներքնագգեստը մուգ կանաչավուն է, վերնագգեստը՝ մուգ մանուշակագույն: Հեթումը ծնկաչոք թեքված է դեպի աջ, երկրորդ պատկերին հակառկ ձեռքում բռնած է ոսկյա թագը, դեմքն ուղղված է դեպի վեր՝ թագավորական գահը (նկ. 6):



Նկ. 6. Լուսանցազարդի ներքնից չորրորդ պատկերը (Հեթումը թագը ձեռքին):

Ասպետական կարմիր թիկնոցի փոխարեն նկարիչը նրան հագցրել է մանուշակագույն թիկնոց, որը հետագայում պետք է վերածվի թագավորական ծիրանիի: Իսկապես, հաջորդ նկարում (հոր պատկերից ներքև) արդեն Հեթումը նկարված է որպես թագավոր: Ի տարբերություն նախորդ չորս անմորուս պատանիների ու երիտասարդների, Հեթումը թագավոր է փոքրիկ մորուքով (նկ. 2):

¹⁵⁷ Լ. Дурново, նշված հոդվածը, էջ 65-66:

Այսպիսով, Հեթումի Ճաշոցի առաջին լուսանցագարդը հինգ պատկերներում ներկայացնում է Հեթում արքայորդու կյանքի տարբեր շրջանները, որոնց մեջ իրականը (համաժամանակյան) ասպետ Հեթումի նկարն է (հնարավոր է, որ այն նկարված է հենց այն ժամանակ, այսինքն՝ 1283 թվականին, երբ նա ձեռնադրվում էր ձիավոր՝ ասպետ, ուրեմն Ճաշոցը նվիրված պետք է լինի այդ դեպքերին, սկսված այդ թվականին): Իրական է նաև Լևոն Գ թագավորի նկարը:

Ինչպես տեսնում ենք, Հեթումի Ճաշոցի սկզբնաթերթի գեղարվեստական ձևավորումը, ներառյալ լուսանցագարդը՝ իր վեց պատկերներով, կապվում և լրացնում է բնագիրը, իրական է դարձնում խոսքը՝ այն կապելով ստացողի հետ, նրա անցած կյանքի, ներկայի և ապագայի հետ¹⁵⁸: Ինչպես բնագրում, այնպես էլ լուսանցագարդի նկարներում արտահայտված ենք տեսնում նույն գաղափարը, որի համար էլ Գևորգ Սկևռացին Ճաշոցը սկսում է ոչ թե Հայտնության տոնով¹⁵⁹, այլ խորհրդով, խրատով՝ ուղղված Հեթում արքայորդուն, Ճաշոցի պատվիրատուին: Այս կրկին ապացուցում է, որ Ճաշոցի խմբագիրը, նաև նկարիչն է, որ Բարսեղ Կեսարացու նկարը, գլխագարդը՝ Սողոմոն թագավորի հետ և լուսանցագարդը՝ Լևոն

¹⁵⁸ Այն, որ նույն մարդը կամ մարդիկ, կարող էին պատկերվել ոչ միայն նույն մատյանի տարբեր էջերում (ինչպես Գրիգոր Սկևռացու 1173 թ. ընդօրինակած «Նարեկում» Գրիգոր Նարեկացու չորս դիմանկարն է), այլև անգամ ձեռագրի միևնույն մանրանկարի մեջ, երևում է հենց «Ճաշոցի» երկու տերունական պատկերից: Առաջինը «Մուտք Երուսաղեմ» է: Ըստ ավետարանական պատմության, դեռ քաղաք չհասած, Քրիստոսը պատվիրում է աշակերտներից երկուսին գնալ մոտակա գյուղը և այնտեղից իր համար մի ավանակ բերել, որը նրանք անում են, որից հետո այդ ավանակին նստած մտնում է Երուսաղեմ (Մատթ. ԻՄ, 1-11): «Ճաշոցի» մանրանկարում (էջ 137բ) տեսնում ենք պատմության այս երկու դրվագը միասին՝ երկու աշակերտ բերում են ավանակը (մանրանկարի վերին ձախ մասում), ապա նրանց հետ Հիսուսը մտնում է քաղաք՝ ավանակին նստած: Ավելի հատկանշական է Խաչելության պատկերաշարը (էջ 193ա), որտեղ Հովսեփ Արիմաթացին նույն մանրանկարում պատկերված է երեք անգամ: Առաջին դրվագում նա պատկերված է Պիղատոսի առաջ կանգնած (մանրանկարի ձախ կողմում), որից թույլատվություն է խնդրում Քրիստոսի մարմինը թաղելու համար, երկրորդում Հովսեփը աստիճանով բարձրանալով խաչից իջեցնում է Հիսուսի մարմինը (մանրանկարի աջ կողմում), և վերջապես երրորդ դրվագում նա երկու ձեռքով գրկելով Քրիստոսի պատանքված մարմինը՝ գերեզման է դնում (մանրանկարի ներքևի մասում): Այս մանրանկարում Հիսուսն ու Աստվածամայրը պատկերված են երկուական անգամ (պատկերները տե՛ս նյութի վերջում): Ի վերջո, ձեռագրում կան նաև կրկնվող կերպարներով մեծ լուսանցագարդեր. անվանաթերթերից մեկի՝ էջի ողջ եզրով ձգված լուսանցագարդում (138ա) Քրիստոսի Երուսաղեմ գալու պատմության դրվագներն են՝ ըստ չորս ավետարանիչների, իսկ մեկ այլ նմանատիպ լուսանցագարդում, որտեղ Քրիստոսի Հարությանը հաջորդած դրվագներ են (211ա), տեղ են գտել Քրիստոսի և Մարիամ Մագդաղենացու մի քանի պատկեր: **Ծան.-Գ.Մ.**

¹⁵⁹ Ի դեպ միակ Ճաշոցը, որ այդ ժամանակներում նույնպես Բարսեղ Կեսարացու տոնով էր սկսում Հովհաննես արքայեղբոր Ճաշոցն է, որը կարող էր գրված լինել Հեթումի Ճաշոցից հետո (Հ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց, Վիեննա, 1895, N 245):

Գ-ի և Հեթում արքայորդու նկարների, ինչպես նաև մյուս նկարները, գլխազարդերը և լուսանցազարդերը, կատարել է Գևորգ Սկևռացին:

Գևորգ Սկևռացուն Ճաշոցին կապող մի հանգամանք ևս: Խաչատուրի Աստվածաշնչի նախադրություններով և ցանկերով օժտելու կապակցությամբ, տեսանք, որ Գևորգ Սկևռացին այն ավարտել էր Մաշտոց ծիսական մատյանից վերցված կանոններով:

Դրանից առաջինն էր «Կանոն հաղորդութիւն տալոյ», երկրորդը՝ «Կանոն Մկրտութեան յորժամ քրիստոնեայ առնեն», որը թերի է մնում հաջորդ թերթերի ընկած լինելու պատճառով¹⁶⁰: Անշուշտ դրանցից հետո ուրիշ կանոններ էլ են եղել: Այս նույն կանոնները գտնվում են նաև Հեթումի Ճաշոցի վերջում: «Կանոն Մկրտութեան», «Կանոն պսակ արհնելոյ», «Կանոն հաղորդութիւն տալոյ», «Կանոն թաղումն առնելով գերեզման արհնելոյ», իսկ մինչ այս, սկզբում՝ «Կանոն ջուր արհնելոյ»¹⁶¹: Ճաշոցում և Աստվածաշնչում եղած կանոնների համեմատությունը ցույց տվեց, որ միմյանցից են արտագրված: Ուրիշ Ճաշոցում կամ Աստվածաշնչում այս նյութերը այսպիսի վիճակում չեն պատահում, ինչպես տեսաք Ստեփանոս Գոյներերիցանցի և հենց Գևորգ Սկևռացու Աստվածաշնչի երկրորդ ընդօրինակության մեջ, ուր ծիսական նյութերի այլ շարադրանքներ էին¹⁶²:

Նույն նպատակը հետապնդելով այժմ անցնենք Ճաշոցի գրչության արվեստին. ինչ սկզբունքով է գրված մատյանը, ծաղկողը նաև գրիչն է, թե գրիչն ուրիշ է և այլն:

Հարցեր են ծագում. ինչո՞ւ քաղաքացիություն ստացած հայ եկեղեցու տերունական տոներից առաջինով «Փրկչին փառաւորութեան ուղղած տօներուն գլուխ»¹⁶³, Աստվածահայտնության տոնով սկսվող Ճաշոցներին չի հետևում «Հեթումի Ճաշոցի» հորինողը. և «տօներին գլուխ» Հայտնությունից առաջ է դնում սրբերի տոնը: Այնուհետև, այդ անելով հանդերձ, ինչու տոնի և սրբի անունը սաղմոսի թիվը և ընթերցվածը չի նշում, ինչո՞ւ է Բարսեղ Կեսարացու նկարը հենց ամբողջ էջով մեկ նկարել և դրել Ճաշոցի սկզբում, երբ ձեռագրում այդ մեծության ոչ մի սրբի նկար չկա,

¹⁶⁰ «Լոյս», 1906, էջ 1216-1217. «Կընդհատի այս շատ հետաքրքրական կանոնը երեսներու պատճառով (եր. 1066)» գրում է Բ. Կյուլեսերյանը:

¹⁶¹ Մատենադարան, ձեռ. N 979, էջ համապատասխանաբար 448ա, 454ա, 457բ, 459բ և 25բ:

¹⁶² Հմմտ. աստ, էջ

¹⁶³ Մ. Օրմանեան, Հայոց եկեղեցին, Բեյրութ, 1960, էջ 162:

նրանք միայն լուսանցագարդերում են պատկերված, նույնիսկ ամբողջական էջեր զբաղեցնող տերունական նկարներում այդ մեծության կերպար չկա նկարված, և վերջապես, ինչո՞ւ է հենց այդ էջաբացքում նկարել աշխարհիկ նկարներ, որոնք, Գ. Հովսեփյանի, Լ. Դուրնովոյի և այլոց կարծիքով, ոչ մի կապ չունեն բնագրի հետ:

Վերստին հիշենք ստացողին. Լևոն թագավորի գահաժառանգ Հեթում արքայորդու ուսուցիչն էր Վահրամ Բաբունին, որի մասին Գևորգ Սկևռացու վարքում ասվում է. «բանիբուն և ճարտասան աներկիւղ, միանգամայն անամաւթ և քաջաբան, զի ունէր զաղանդ քաղկեդոնական... ապականեալ դեղեաց զՀեթում՝ տէր Լամբրոնին: Եւ որչափ յաշխարհի եկաց թագաւորն Լևոն՝ թէն կարծեաւք երևէր յոք չարուսումն, այլ երկնչէին հանել ի վեր, զի սուրբս սոսկալի սանձէր յանալիսեանցն բերան: Եւ թագաւորն զսորայս միայն համարէր ճշմարիտ զբան և ամենայն եկեղեցի կախեալ կայր զհրամանէ սրբոյս: Յայժամ թագաւորն Լևոն փոխի մահուամբ առ Քրիստոս՝ թագաւորն երկնի և երկրի, և տայ զթագաւորութիւն Հեթոյ՝ տեառն Լամբրոնի: Եւ սա սկսաւ յայտնել փոքր ինչ յուսմանէ չարափառութեանց, և սուրբս Գևորգ աստուածիմաստ խրատովն յետս նահանջեաց»¹⁶⁴:

Ինչպէս երևում է Վարքի հետագա շարադրանքից, Գևորգ Սկևռացին հաճախ է առիթ ունեցել «սանձելու» կամ «յետս նահանջեցնելու» Հեթումին: Բայց Հեթումը միայն ժամանակավոր է նահանջել «յորչափ յաշխարհի եկաց թագաւորն Լևոն», որից հետո Հեթումը գործել է ինչպէս կարողացել է: Եվ Հեթումը, նկատում է Մ. Օրմանյանը,– «զոհ գնաց յուր մոլեռանդ լատինասիրութեան, որով ոչ մի օգուտ կրցավ պատրաստել իրեններուն, այլ մանավանդ խանգարեց ազգային եկեղեցին, վտանգեց ազգային թագավորութիւնը, և իրեն ալ օգուտ մը չպատրաստեց: Իրավ հոգևորականութեան անձ մը կերևար, բայց յուր հոգևորութիւնն ալ առեղծվածային զգացում մըն էր, քանի որ ոչ աշխարհքէ կհեռանար, և ոչ իշխանութենէ ձեռք կքաշեր, կրոնավորի սքեմով արքունիք կնստեր, և կրոնավորական գոտիէն պատերազմողի սուրը կկախեր... Իրավ ալ ոչ թէ կեանքովը, այլ և զգացումներով տարօրինակ

¹⁶⁴Բանբեր Մատենադարանի, N7, էջ 421:

անձնավորություն կներկայանա Հեթում-Հովհաննես անթագ թագավորը, կրոնավոր թագավորահայրը, և առանց վանքի վանականը»¹⁶⁵:

Հեթումի այս տարօրինակությունները նկատելի էին դեռևս թագավոր չդարձած տարիներին, մինչև Ճաշոց պատվիրելը, որին դաստիարակել էր ուզում Գևորգ Սկևռացին, Սկևռայի վանքի ընթերցողատեղի, որի պարոնն էր Հեթումը: Եվ դաստիարակում էր, առանց պատեհ առիթ բաց թողնելու, ոչ միայն բանավոր, այլև գրավոր, ոչ միայն բանիվ ու գրչով, այլև վրձնով: Եվ ահա խոսք էր պետք ուղղված Հեթումին, աստվածաշնչային խոսք՝ եկեղեցու մեծ հայրերի բերանով: Եվ Ճաշոցը այդ հնարավորությունը ընձեռում էր, երբ սկսվում էր հունվարի 1-ով, Բարսեղ Կեսարացու տոնով: Իսկ թե ով էր Բարսեղ Կեսարացին, հայտնի էր Հեթումին: Ի դեպ, վերջինիս տոնին կարդացվելիք ընթերցվածքներից երկուսը կրկնվում են նաև Կյուրեղ Երուսաղեմացու¹⁶⁶ և այլ տոներին, իսկ երրորդը ավելի հաճախ է կրկնվում: Իսկ Բարսեղ Կեսարացին քրիստոնեական եկեղեցու հայրերից էր, որին «Մեծ» մակդիրն էր տվել Քաղկեդոնի ժողովը: Նա պայքարում էր արևելյան ուղղադավան եկեղեցու հաստատման համար, համառորեն պայքարում էր արիոսականության դեմ և հաղթում, առերես Վաղես կայսերն մեղադրում, ասելով. «և դու, անիրաւ, ետուր զեկեղեցին մեր արիանոսաց»¹⁶⁷:

Այս խոսքերը շատ սրտամոտ են Գևորգ Սկևռացուն: Միջնադարյան Հայաստանում նրան համարում են «սին եկեղեցոյ և հիմն հաւատոյ, և աւթեվանս Սրբոյ Երրորդութեանն, և կատարիչ կամացն Աստուծոյ»¹⁶⁸: Եվ ահա, Ճաշոցի առաջին էջաբացքում, ձախ թերթի վրա, ամբողջ հասակով կանգնած է Բարսեղ Կեսարացին, աստվածային խոսքերով խրատում է Ճաշոցի ստացող Հեթումին, ինչպես ինքն էր ուզում:

¹⁶⁵Մ. Օրմանեան, Ազգապատում, էջ 1809:

¹⁶⁶Մատենադարան, ձեռ. N 937, էջ 47ա:

¹⁶⁷Կ. Մուրադյան, Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցօրեան» հայ մատենագրության մեջ, Երևան, 1976, էջ 50-54:

¹⁶⁸Մատենադարան, ձեռ. N 4150, էջ 21ա:

Ամփոփում

Հեթում արքայորդուն հայտնի էին Կիլիկիայի աշխարհիկ և հոգևոր առաջնորդների համագործակցությունը գիտնական վարդապետների և արվեստավոր գրիչների ու ծաղկողների հետ: Նրան անձանոթ չէին կարող լինել ոչ իր Հեթում պապի և Վարդան վարդապետի, ոչ էլ Կոստանդին կաթողիկոսի և Թորոս Ռոսլինի բեղմնավոր համագործակցությունը, ինքն էլ պահպանում էր իր կապերը Սկևռայի վանքի ռաբունապետ Գևորգ Սկևռացու հետ: Սկևռայի գրչության դպրոցի ԺԳ դարի երկրորդ կեսի գործունեության ծանոթությունը, դպրոցի ռաբունապետ Գևորգ Սկևռացու գիտա-մանկավարժական, գրչական, խմբագրական և մեկնողական գործունեության քննությունը, ինչպես նաև Հեթում արքայորդու՝ Լամբրոնի տիրոջ և Սկևռայի ռաբունապետի հարաբերությունն ու համագործակցությունը մեզ բերում է այն համոզման, որ Հեթում արքայորդին Ճաշոցը պատվիրել է իր Լամբրոնյան իշխանության մշակութային գլխավոր կենտրոն Սկևռայի վանքում, որի մասին ակնարկներ կան նաև բուն ձեռագրում, և որը նշված ժամանակահատվածում Կիլիկիայի գրչության ամենաարդյունավոր կենտրոններից մեկն էր, եթե ոչ ամենաարդյունավորը, իր բեղմնավոր ու հմուտ գրիչներով:

Ճաշոցը, հետևաբար, խմբագրել, գրել և նկարագարել են Սկևռայի արվեստավոր միաբանները, տեղի գրչության դպրոցի ներկայացուցիչները, հայ գրչության արվեստի ականավոր տեսաբան և հմուտ գործարկող, մատենագիր, խմբագիր, մեկնիչ, գրիչ և ծաղկող, Սկևռայի ռաբունապետ Գևորգ Սկևռացու ղեկավարությամբ և մասնակցությամբ: Հեթում արքայորդու շրջապատում 1280-ական թվականներին Գևորգ Սկևռացին ամենահարմար մարդն էր, որ կարող էր խմբագրել Ճաշոցը այնպես, ինչպես այն ներկայացնում է մեզ, որպես «վարդապետութիւն խրատու», առաջին հերթին Հեթում արքայորդու համար:

Պատմաբանասիրական և ձեռագրագիտական քննությամբ շրջանառության մեջ դրած փաստերը մեզ հանգեցնում են հետևյալ եզրակացության.

ա. Մաշտոցի անվան Մատենադարանի N 979 ձեռագիրը, որը հայտնի է «Հեթումի Ճաշոց» անունով, գրվել է Լևոն Բ թագավորի որդի Հեթում պարոնի համար, նրա Լամբրոնյան իշխանության սահմաններում:

բ. Լամբրոնի սահմաններում մշակութային ամենանշանավոր կենտրոնը Սկևռայի վանքն էր, ուր ավելի քան մի հարյուրամյակ ծաղկում էր գրչության մանրանկարչության արվեստը և գիտությունը, որտեղ և գրված պետք է լինի Հեթումի Ճաշոցը:

գ. Ճաշոցը գրելու ժամանակ Սկևռայում աշխատում էր գրչության արվեստին հմուտ արվեստավորների մի բույլ Գևորգի Սկևռացու ընտանիքի անդամներ, որը կարող էր իրականացնել պատվիրատուի ցանկությունները և իրականացրեց:

դ. Ձեռագրերի գրչության քննությունն ու համեմատությունը ցույց են տալիս, որ Հեթումի Ճաշոցի գրիչը Ստեփանոս Սկևռացին է:

ե. Ճաշոցի խմբագրողը, լրացնողը և ծաղկողը Գևորգ Սկևռացին է, որին, զարդագրության և զարդանկարչության մեջ օգնել են Սկևռայի իր աշակերտներից շնորհալիները:

զ. Ճաշոցի հիշատակարանի հեղինակը, որը հայտնի է նաև որպես առանձին պատմագրական երկ «Համառատ պատմութիւն Ռուբինեանց իշխանաց» վերնագրով, Գևորգ Սկևռացին է:

է. Հեթում արքայորդին Ճաշոցը պատվիրել է ասպետություն ստանալուց հետո և դրա առթիվ: Նշանակում է այն սկսվել է գրվել և նկարագարվել 1283 թվականին և ավարտվել է 1286 թվականին:

ը. Ճաշոցի սկզբում՝ Բարսեղ Կեսարացու պատկերի հանդիպակաց էջի մեծ լուսանցազարդի վերին մասում՝ ստացողի հոր՝ Լևոն Գ թագավորի պատկերից ներքև նկարված է Հեթում արքայորդին՝ իր կենսագրության հինգ տարբեր դրվագների հաջորդական շարքով:

թ. «Ճաշոցի» հիշատակարանը, նյութերի հաջորդականության ընտրությունը և նկարագարող առաջին զույգ էջերի պատկերազարդումը որոշակի ուղերձ են

ստացողին՝ հայրենի ավանդներին և դավանանքին հավատարիմ մնալու համար, որի մտադիացումն ու իրագործումը պատկանում է Գևորգ Սկևռացուն¹⁶⁹:

Ժ. Հավանաբար Գևորգ Սկևռացու վրձինին են պատկանում նաև Մատենադարանի N 197 ձեռագրի 16 ներդիր նկարները, կատարված 1287 թվականին և N 9422 ձեռագրի մանրանկարչությունը և գրչությունը:

Ժա. Գևորգ Սկևռացին իր գրած և նկարագարդած ձեռագրերում իր անունը թողելու սովորություն չի ունեցել, բացառությամբ մեզ հայտնի նրա առաջին՝ 1267 թ. ավարտած Տոնապատճառի և վերջին՝ 1300 թ. Աստվածաշնչի, ուստի անհայտ է մնացել որպես նկարիչ: Այդ է պատճառը, որ վարքագիրը նրա նկարագարդության մասին այսպիսի թափանցիկ արտահայտություն է անում. «գոր տեսողացն և վայելողացն յայտնի է», այսինքն գիտեն միայն նրանք, ովքեր տեսել են, վայելել են, և ոչ թե նրա մասին կարդացել, քանի որ այդ մասին ակնարկ չի արված ձեռագրում:


Ժբ. Գևորգ Սկևռացին հայ գրչության արվեստի ամենապայծառ ներկայացուցիչներից է, որը կանոններ է մշակել գրչության արվեստի տեսության վերաբերյալ և գործնականորեն կիրառել ձեռագրերում: «Հեթումի Ճաշոցի» և նրա մյուս նկարագարդած ձեռագրերի վերաբերյալ (որոնք վերագրվում էին Թորոս Ռոսլինին), արվեստաբանների բարձր կարծիքը ամբողջովին վերաբերվում է Գևորգ Սկևռացուն:

¹⁶⁹ Եզրակացությունների «ը» և «թ» կետերն ավելացված են մեր կողմից՝ արտածված, ամփոփված բուն ուսումնասիրությունից - Կ. Մ.:

ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ



Բարսեղ Կեսարացի, «Հերոնիմի ճաշոց», ՄՄ 979, էջ 7բ:





Մուսք Երուսաղեմ, «Ներսիսի ճաշոց», ՄՄ 979, էջ 137բ:



Խաչից իջեցում և թաղում, «Հեթումի ճաշոց», ՄՄ 979, էջ 193ա:



Լուսանցազարդ Քրիստոսի Հարությանը հաջորդած դրվագներով,
«Հեթումի ճաշոց», ՄՄ 979, էջ 211ա: